ԷՋՄԻԱԾԻՆ

1978

Բ

ԱՀ146



ԼԵ
ՏԱՐԻ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Փետրուար

1978



ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԲԱՂԴԱԴԻ ՀԱՅՈՑ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ԵԿԵՂԵՑԻՆ
(ԿԱՌՈՒՑՎԱԾ 1954—58 ԹԹ.)

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի հունվարի 28-ից մինչև փետրվարի 9-ը Վեհափառ Հայրապետը հովվապետական այցելությամբ գտնվում էր Իրաքի հայոց թեմում՝ հրավերովը թեմի առաջնորդ տ. Ասողիկ արքեպիսկոպոս Ղազարյանի և Ազգային Կենտրոնական Վարչության:

Հայոց Հայրապետի շքախմբի կազմում էին տ. Պսակ արքեպիսկոպոս Թումայանը (Լոնդոն), Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպիսկոպոս Սանթուրյանը, «Էջմիածին» ամսագրի խմբագիր և դասախոս Արթուն Հատիտյանը, տ. Մոմիկ վարդապետ Սարգսյանը՝ որպես գավազանակիր, և Նյու Ջերզիի հոգևոր հովիվ տ. Ավագ աբեղա Ասատուրյանը:

Օդանավակայանում, հանուն Իրաքի կառավարության, Հայոց Հայրապետին ողջունում և բարի գալուստ է մաղթում Իրաքի արտաքին գործերի մինիստրության արարողապետ տիար Ուսամա Խալիլը, Սովետական Միության դեսպան տիար Անատոլի Բարկովսկին և քույր եկեղեցիների հոգևոր պետեր:

Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Բաղդադի հայոց ս. Գրիգոր Լուսավորիչ առաջնորդանիստ եկեղեցի, ուր մուտք է գործում «Հրաշափառ»-ով և օրհնելով հավատացյալների խուռներամ բազմությանը՝ տալիս է Իր պատգամը: Հավատացյալների բազմությունը մոտ երկու ժամ տևող աջահամբույրով ստանում է Հայոց Հայրապետի օրհնությունը:

Բաղդադում Հայոց Հայրապետը Իրաքի կառավարության հյուրն է: Այս առթիվ Իրաքի բարեխնամ կառավարությունը Հայոց Հայրապետին տրամադրել է «Ալ-Մանսուր» պալատը Տիգրիսի ափին:

Հունվարի 30-ին, երկուշաբթի օրը, ժամը 12-ին, Հայոց Հայրապետը պաշտոնական այցելություն է տալիս Իրաքի կառավարության արդարադատության մինիստր տիար Մունդր էլ Շավիին: Հայոց Հայրապետի և հարգելի մինիստրի միջև տեղի է ունենում ջերմ զրույց:

Հունվարի 31-ին, ժամը 11.30-ին, Հայոց Հայրապետը պաշտոնական այցելություն է տալիս Սովետական Միության դեսպան տիար Անատոլի Բարկովսկուն;

Փետրվարի 1-ին, չորեքշաբթի օրը, ժամը 12-ին, պապական նվիրակ մոնսենյոր Ժան Ռյուպ արքեպիսկոպոսը, ի պատիվ Հայոց Հայրապետի, իր արքեպիսկոպոսարանում ճաշկերույթ է տալիս, որին ներկա են լինում բուր եկեղեցիների պատրիարքներ, հոգևոր պետեր, ինչպես նաև Սովետական Միության, Ֆրանսիայի և Լիբանանի մեծահարգ դեսպանները:

Փետրվարի 8-ին, չորեքշաբթի օրը, երեկոյան ժամը 18-ին, Իրաքում Սովետական Միության մեծահարգ պարոն դեսպանը դեսպանատան մեջ, ի պատիվ Հայոց Հայրապետի, տալիս է հրաժեշտի ընդունելություն, որին ներկա են լինում նաև Իրաքի կառավարության մոտ Սովետական Միության, Ֆրանսիայի և այլ տասնչորս երկրների հարգարժան դեսպանները:

Հունվարի 29-ին, կիրակի օրը, երեկոյան ժամը 17-ին, Հայոց Հայրապետը այցելում է Բաղդադում «Մելինե Դանիել Իսկենդեր» հայկական ծերանոց, ուր Նրա պատվին թեյասեղան է տրվում վարչության անդամների կողմից:

Փետրվարի 1-ին, չորեքշաբթի օրը, ժամը 18-ին, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ կատարվում է Իրաքի Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության նորակառույց շենքի բացման հանդիսությունը, որից հետո, ի պատիվ Հայոց Հայրապետի, տրվում է պաշտոնական ճաշկերույթ:

Փետրվարի 2-ին, հինգշաբթի օրը, ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում հանդիսավոր պատարագ է մատուցում տ. Պսակ արքեպ. Թումայանը՝ Վարդանանց և Հայոց Հայրապետի անվանակոչության տոների առիթով:

Նույն օրը, երեկոյան ժամը 20-ին, «Բաղդադ» հյուրանոցում Ազգային Կենտրոնական Վարչությունը համայնքային ճոխ ճաշկերույթով մեծարում է Հայոց Հայրապետին: Ճաշկերույթին ներկա են լինում նաև բուր եկեղեցիների հոգևոր պետեր, դիվանագիտական առաքելության ղեկավարներ և պետական ու պաշտոնական այլ անձնավորություններ:

Փետրվարի 3-ին, ուրբաթ: Հայոց Հայրապետը ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում հանդիսավոր պատարագ է մատուցում և «Փա՛ռք քեզ, Աստուած, փա՛ռք քեզ, յաղագս ամենայնի, Տէ՛ր, փա՛ռք քեզ» բնաբանով ոգեշունչ քարոզ է խոսում:

Նույն օրը, երեկոյան ժամը 20-ին, Բաղդադի Հայ Երկսեռ Երիտասարդաց Միությունը իր սրահում ճաշկերույթով մեծարում է Հայոց Հայրապետին:

Փետրվարի 4-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 10-ին, Վեհափառ Հայրապետը այցելում է Մեյդանի հայոց ս. Աստվածածին եկեղեցի, որը կառուցվել է 1638 թվականին, իսկ հաջորդ օրը, փետրվարի 5-ին, ժամը 13-ին՝ Բաղդադի հայ կաթողիկե համայնքի առաջնորդարան և Անարատ Հղության քույրերի վանատուն՝ առաջնորդությամբ տ. Հովհաննես Գասպարյան արքեպիսկոպոսի, հոգևոր առաջնորդը կաթողիկե հայոց:

Փետրվարի 7-ին, երեքշաբթի օրը, ժամը 20-ին, Վեհափառ Հայրապետը նախագահում է Բաղդադի Հայ Երկսեռ Երիտասարդաց Միության գրական-գեղարվեստական երեկույթին:

Փետրվարի 9-ին, հինգշաբթի օրը, ժամը 14.30-ին, Վեհափառ Հայրապետը հրաժեշտ է տալիս Իրաքի հայ համայնքին և տ. Հուսիկ եպիսկոպոսի ուղեկցությամբ, ոչ պաշտոնական այցով, մեկնում Փարիզ, իսկ շաբաթվա մյուս անդամները՝ Ա. Հատիտյանը և տ. Մոմիկ վարդապետը, վերադառնում են Մայր Աթոռ:

Փետրվարի 10-ին, 11-ին, 14-ին ու 15-ին Փարիզի հայոց առաջնորդարանում Վեհափառ Հայրապետն ընդունում է այցելությունները Լիոնի հայոց հայրապետական պատվիրակի փոխանորդ տ. Դավիթ եպիսկոպոս Սահակյանի, Անգլիայի հայոց հայրապետական պատվիրակ տ. Ներսես եպիսկ. Պոզապալյանի, Մարսելի, Լիոնի, Ժնևի, Բրյուսելի համայնքային ընկերակցությանց ներկայացուցիչների և Արևմտյան Գերմանիայի հայոց հոգևոր հովիվ տ. Գարեգին վարդապետ Ներսիսյանի ու այլ պաշտոնական անձնավորությունների, որոնք եկել էին ողջունելու Հայոց Հայրապետին:

Փետրվարի 11-ին, շաբաթ օրը, ժամը 21-ին, Վեհափառ Հայրապետը, տ. Սերովբե և տ. Գյուտ սրբազանների, վարդապետների և քահանա հայրերի ուղեկցությամբ, ներկա է լինում Նոտր Դամ դը Պլանկ Մանտո կաթոլիկ եկեղեցում Հայաստանի «Կոմիտաս» լարային քառյակի տված նվագահանդեսին:

Փետրվարի 12-ին, կիրակի օրը, Վեհափառ Հայրապետը Փարիզի հայոց ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցում ողջունում է հավատացյալներին և քարոզում Մեծ պահոց շրջանում հոգևոր կյանքով ապրելու կարևորության մասին՝ «Ցաւել ի մեզ, Տէ՛ր ամենակալ, զհաւատ, զյոյս, զսէր և զամենայն գործս առաքինութեան» բնաբանով:

Փետրվարի 13-ին, երկուշաբթի օրը, Փարիզ է ժամանում Երուսաղեմի հայոց տ. Եղիշե սրբազան պատրիարքը՝ տ. Շահե արքեպիսկոպոսի ուղեկցությամբ՝ ողջունելու Հայոց Հայրապետին և Նրա հետ խորհրդակցելու եկեղեցական մի շարք կարևոր հարցերի շուրջ:

Փետրվարի 16-ին, հինգշաբթի օրը, առավոտյան ժամը 9.30-ին, Վեհափառ Հայրապետը Փարիզում այցելում է Սովետական Միության արտակարգ և լիազոր դեսպան Ստեփան Չերվոնենկոյին՝ ուղեկցությամբ տ. Սերովբե, տ. Հուսիկ և տ. Գյուտ սրբազանների:

Ժամը 18.30-ին Վեհափառ Հայրապետը պաշտոնական այցելություն է տալիս Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր Լուի դե Կիրենկոյին, նրա պաշտոնավայրում՝ ընկերակցությամբ տ. Սերովբե, տ. Շահե և տ. Գյուտ սրբազանների:

Փետրվարի 17-ին, ուրբաթ օրը, ժամը 21-ին, Փարիզի Կրոնական Ընկերակցության Վարչությունը, ի պատիվ Հայոց Հայրապետի, կազմակերպում է ողջերթի մեծ ընդունելություն:

Փետրվարի 18-ին, շաբաթ օրը, Վեհափառ Հայրապետը հրաժեշտ է տալիս Փարիզին և մեկնում Մոսկվա՝ ընկերակցությամբ տ. Հուսիկ եպիսկոպոսի, և Մայր Աթոռ ժամանում փետրվարի 21-ին, երեքշաբթի օրը, երեկոյան ժամը 21-ին:

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ

Ս. Էջմիածին,
27 փետրվար 1978 թ.

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԲԱՂԴԱԴԻ ՀԱՅՈՑ ՏԻՐԱԽՆԱՄ ԹԵՄԻՆ

Իրաքի հայոց թեմի բարեխնամ առաջնորդ **տ. Ասողիկ արքեպ. Ղազարյանի** և **Ազգային Կենտրոնական Վարչության** հրավերով **Հայոց Հայրապետը** սույն թվականի հունվարի 28-ից մինչև փետրվարի 9-ը եղավ Բաղդադում հովվապետական այցելությամբ՝ անձամբ տանելով Մայր Աթոռ ս. Էջմիածնի օրհնությունն ու Իր ողջույնը Իրաքի օրհնյալ հողի վրա ապրող Իր պանդուխտ ու հայրենակարոտ զավակներին, որոնք կհանդիսանան միաժամանակ մեր օրերի պատմական և վերածնված իրաքյան հայրենիքի շինարար, կարգապահ ու ազնիվ բաղաքացիները:

Հայոց Հայրապետի այցելությունը Իրաքի հայոց թեմին մեծ ու կարևոր իրադարձություն էր մեր ազգային-եկեղեցական ժամանակակից տարեգրության մեջ:

Հայրապետական սույն այցելությամբ Իրաքի հայությունը ևս, երկար տարիների սրտագին ապասումներից հետո, վերջապես հոգևոր երջանկությունն ու ազգային հպարտությունն ունեցավ տեսնելու Հայոց Հայրապետին և ստանալու Նրա շնորհառատ օրհնությունները:

Իրաքի թեմում մի անգամ էլ Հայոց Հայրապետը ականատես եղավ, որ ափյուռքի տարածքի վրա Իր հայրենաբաղձ և հավատացյալ զավակների հոգու մեջ միշտ վառ են մեր նախնյաց հավատքն ու սրբազան ավանդությունները, հայ մնալու և հայությամբ ապրելու անկոտրում վճռականությունը, հայի ստեղծագործ ոգին ու բարոյական բարեմասնությունները:

Կենդանի է հայ սփուռքը, որովհետև կենդանի է ս. Էջմիածինը, որովհետև կենդանի է հայ ժողովուրդը իր վերածնված պատմական հայրենիքի սրբազան հողի վրա, որոնցից փոխանցվում են բովանդակ հայությանը հավատք, ներշնչում և կազդույր, ապագայի մեր Է՛լ ավելի պայծառ ու կենսահաստատ ապագայի համար, ամբողջական իրականացման հույսովը նաև մեր բոլոր արդար իղձերի և երազների, ապրելու համար որպես մե՛կ եկեղեցի, միասնական մե՛կ ժողովուրդ ու մե՛կ հայրենիք և պետականություն:

Մեր եկեղեցական տարեգրության մեջ առաջին անգամ էր, որ Հայոց Հայրապետը ոտք էր դնում հյուրընկալ և եղբայրական իրաքյան այս օրհնյալ հողի վրա, ուր 1630-ական թվականներից սկսած անընդմեջ ապրում են մեր ժողովրդի թանկագին բեկորները:

Իրաքի արաբ ազնիվ ու բարի ժողովուրդը առաջիններից մեկը եղավ նաև, երբ 1915 թվականի հայկական առաջին ցեղասպանությունից, առաջին համաշխարհային պատերազմից հետո, որ իր եղբայրական գիրկը բացավ մեր տարագիր ժողովրդի բեկորների առաջ, իր աղն ու հացը սիրով բաժանեց նրանց հետ, բուժեց նրա վերքերը և հիանալի պայմաններ ստեղծեց, որ մեր ժողովուրդը կառուցի իր աղոթքի տները, կրկին բացվեն հայկական վարժարաններ և կրկին «մանկանա մեսրոպաշունչ մեր ալեհեր լեզուն» հայ մանուկների շրթների վրա, և Իրաքի հայությունը ապրի նաև տնտեսական ապահով և բարօր կյանքով՝ վայելելով ամեն ազատություն:

Անցյալի մեր նահատակ ժողովուրդը երբեք և երբեք չի մոռանա Իրաքի արաբ ժողովրդի ազնիվ այս ասպնջականությունը:

Ահա թե ինչու պետք է ուրախությամբ արձանագրել, որ Իրաքի հայությունը, որպես եկեղեցի և համայնք, մեկ սիրտ ու մեկ հոգի, ամբողջությամբ տոգորված է իրաքյան այս օրհնյալ հողի և նրա արդի բարեխնամ կառավարության հանդեպ քաղաքացիական երախտագիտության անկեղծ զգացումով, սիրով ու նվիրումով և իր համեստ նպաստն է բերում այս օրերին նրա ազգային, սոցիալական, տնտեսական վերածնունդը կերտող Իրաքի արաբ ժողովրդի հայրենասիրական, խաղաղասիրական ձեռնարկներին, որպես հարազատ և օրինապահ մեկ տարրը այս երկրի:

Հայոց Հայրապետին տրված մեծ պատիվը, որպես Իրաքի կառավարության բարձրապատիվ հյուրի, մեծագույն վկայությունն էր դեպի Իրաքի հայությունը կառավարության ունեցած հայասիրության և արաբ ժողովրդի ազնիվ, ասպետական ոգու:

Իրաքի հայությունը ևս իր ողջ էությամբ կապված է իր հավատքի դարավոր կենտրոն Մայր Աթոռ ս. Էջմիածնին: Պատահականություն պետք չէ համարել, որ իրաքյան հողի վրա 1638 թվականին կառուցված հայ առաջին եկեղեցին կոչվել է ս. Էջմիածին:

Իրաքի ողջ հայությունը ևս տեսավ, զգաց և մի անգամ ևս հասկացավ, որ Հայոց Հայրապետի բարձր անձնավորության և Նրա վեհ հանգամանքի մեջ մարմնավորվում են ս. Էջմիածնի հազարամյա քարերի պատմությունը, նրա նախախնամական առաքելությունը դարերի խորհրդով և ծանրությամբ, նաև այսօ՛ր:

Հայոց Հայրապետի և իրաքահայության օրերը այս այցելության առթիվ լի էին ուրախությամբ և ազգային անույշ հպարտությամբ. «Բախտավոր ենք, որ կվայելենք այս եկեղեցաշունչ խանդավառ պահը»: Այս էր

վկայությունն ու ճշմարիտ ապրումը մեն մի հայի հայրապետական այցելության այդ օրերին:

Դժվար է բառերով նկարագրել համաժողովրդական խանդավառությունն ու հոգեկան ապրումները Իրաքի ողջ հայության եկեղեցիներում, ակումբներում, հանդիսությունների, աջահամբույրների ժամանակ, այդ օրերին:

Արդարև, ինչպես վկայում էին և՛ պաշտոնական ատրթներով, և՛ մասնավոր ունկնդրությունների ժամանակ արտասանված արտահայտությունները, Հայոց Հայրապետի «օրհնաբեր այցելությունը անջնջելի էջ մը բացավ իրաքահայ պատմության մեջ, որ չի կրնար մոռցվիլ:

Հայաստանյայց եկեղեցին իր պատմության ընթացքին քիչ անգամ երջանիկ շրջան մը բոլորած է, և այդ քիչերեն մեկը եղավ Ձեր գահակալության շրջանը»:

Այս է ճշմարիտ վկայությունը բոլոր սրտերի անցնող 23 տարիների ընթացքում, ամենուրեք, ուր Հայոց Հայրապետը, «որպէս հովիւ քաջ, որ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց», տարավ Իր ողջույնն ու ս. Էջմիածնի օրհնությունը, և սփյուռքի հայրենակարոտ բազմությունների սրտերը որպես ոսկե կամուրջ կապեց Մայր Աթոռին և հայոց հավիտենական հայրենիքին, հավերժական Հայաստանին:

ԺԱՄԱՆՈՒՄ ԲԱՂԴԱԴ

Հունվարի 28-ին, շաբաթ օրը, ժամը 15-ին, Վեհափառ Հայրապետը Մոսկվայի վրայով, հայրենական «Տու 154» ինքնաթիռով, խաղաղ ու ապահով չորսժամյա թռիչքից հետո ժամանում է Իրաքի մայրաքաղաք Բաղդադի միջազգային օդանավակայան:

Այս ուղևորության առիթով **Հայոց Հայրապետին** ուղեկցում էին, Էջմիածնից սկսած, որպես շքախմբի անդամներ, Մայր աթոռի լուսարարապետ և Ադրբեջանի հայոց առաջնորդ **տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը,** «Էջմիածին» ամսագրի խմբագիր և հոգևոր ճեմարանի դասախոս **Արթուն Հատիտյանը** և, որպես գավազանակիր, Մայր Աթոռի երիտասարդ միաբան **տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը:**

Հայոց Հայրապետի՝ Բաղդադ ժամանումից առաջ այստեղ էին ժամանել նաև Լոնդոնից, Նորին Սրբության հրահանգով, Մայր Աթոռի միաբաններ **տ. Պսակ արքեպ. Թումայանը** և ԱՄՆ-ից (Նյու-Ճըրզի)՝ **տ. Ավագ արեղա Աստատուրյանը**՝ որպես շքախմբի անդամներ:

Բաղդադում Իրաքի հայոց առաջնորդ տ. Ատոիկ արքեպ. Ղազարյանի ծանր հիվանդության հետևանքով Հայոց Հայրապետի ընդունելության և հովվապետական այցելության կազմակերպչական աշխատանքները ձեռնհասորեն կատարել էր Իրաքի Կենտրոնական Վարչությունը՝ գլխավորությամբ նախագահ դոկտ. **Հասրաթ Միքայելյանի,** Նորին Սրբության բարձր անձնավորության դիրքին և հեղինակությանը արժանավայել շուքով և հարգանքով:

Իրաքի հայոց համայնքը, որը բաղկանում է ավելի քան 20.000 հայ ազգաբնակչությունից, ղեկավարվում է ժողովրդից ընտրված Ազգային Կենտրոնական Վարչության Վերին մարմնի կողմից:

Անցյալ տարի վարչության նոր անդամներ են ընտրվել.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԲԱՂԴԱԴԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԴԱՀԼԻՃՈՒՄ
ՇՐՋԱՊԱՏՎԱԾ ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐՈՎ ԵՎ ՀԱՅ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐՈՎ

Դոկտ. Հասրաթ Միքայելյան՝ նախագահ.
Տիրան Նասըր Օհանյան.
Հայկ Բոստանյան.
Իսմայիլ Շահինյան.
Հրայր Հովսաբաղյան.
Հովհաննես-Հարություն Դոշօղլանյան.
Վահագն Մեսրոպյան՝ քարտուղար:

Ժամեր առաջ Բաղդադի միջազգային օդանավակայանում հավաքվել էր հոծ բազմություն՝ Բաղդադից, Մուսուլից, Քերքուքից, Զախոյից, Բասրայից՝ ողջունելու և բարի գալուստ մաղթելու համար Հայոց Հայրապետին:

Բոլորի շրթների վրա թրթռում էին երկու քաղցր անուններ՝ **սուրբ Էջմիածին** և **Հայոց Հայրապետ**, որոնք իրենց մեջ ամփոփում էին բոլոր ներկաների սերը, երախտագիտությունը, բերկրանքն ու ազգային հպարտությունը, երկու սրբազան բառեր, որոնք սփյուռքի ողջ տարածքի վրա միշտ էլ լույս, կազդուր, օրհնություն են բախշում հայ բազմությունների հայրենակարոտ հոգիներին, ամենուրեք, ուր կան և ապրում են մեր ժողովրդի զավակները:

Օրը պայծառ էր, արևոտ, գարնանային բուրմունքով ու շնչով վերակենդանացած, ուրախ՝ բոլորի սրտերը:

Օդանավակայանի պատվավոր հյուրերի դահլիճում Հայոց Հայրապետին էին սպասում Բաղդադի քույր եկեղեցիների հոգևոր պետեր և ներկայացուցիչներ, այդ թվում՝ Տ. Պուլոս Բ Շեյխոն՝ քաղդեացիների կաթողիկոս-Պատրիարքը, տ. Ժան Ռյուպ արքեպիսկոպոսը՝ Իրաքի կառավարության մոտ Վատիկանի պատվիրակը, տ. Հովհաննես արքեպ. Գասպարյանը՝ Իրաքի կաթողիկե հայոց առաջնորդը, տ. Զաքքա Էյվազ արքեպիսկոպոսը՝ Բաղդադի սիրիական օրթոդոքս համայնքի առաջնորդը, տ. Էմմանվել արքեպիսկոպոս Տալլին՝ պատրիարքական ընդհանուր փոխանորդը քաղդեացիների, տ. Հաննա արքեպիսկոպոս Բաքոսը՝ առաջնորդը Բաղդադի սիրիական կաթողիկե համայնքի, տ. Էռնեստ եպիսկոպոս Նիարին՝ առաջնորդը Իրաքի լատին համայնքի, տ. Ֆրանչիսկո Նավարոն՝ Վատիկանի դեսպանատան առաջին քարտուղարը, որոնք եկել էին բաժանելու Իրաքի հայության ուրախությունը:

Արծաթե սկուտեղի մեջ Հայոց Հայրապետին է ներկայացվում իրաքյան հյուրընկալ հողի ավանդական աղն ու հացը՝ ի նշան առատության, բարեկամության և սրտաբաց հյուրասիրության:

Հայոց Հայրապետը օրհնում է հյուրընկալ երկրի առատությունը խորհրդանշող այս բարիքները:

Այնուհետև Նա ողջագուրվում է «ի համբույր սրբութեան» քույր եկեղեցիների հոգևոր պետերի հետ:

Հանուն Իրաքի բարեխնամ կառավարության, Հայոց Հայրապետի ժամանումը Բաղդադ ողջունում և բարի գալուստ է մաղթում, արտաքին գործերի մինիստրության անունից, **Ուսամա Խալիլը:**

Հայոց Հայրապետի ժամանումը ողջունում է նաև Իրաքի հանրապետության մոտ Սովետական Միության արտակարգ և լիազոր դեսպան **Անատոլի Բարկովսկին:**

Առաջին իսկ առիթով Հայոց Հայրապետը օրհնում է Իրաքի բազմադարյան այս պատմական հողը, ջերմ բարեմաղթություններ կատարում

նրա հանրապետության մեծահարգ նախագահ **Ահմեդ Հասան էլ Բաքրի** և Հեղափոխական խորհրդի փոխնախագահ **Սադդամ Հյուսեինի** կենաց արևշատության և արաբ աստվածասեր ժողովրդի ազգային վերազարթոնքի պայծառ հաղթանակի համար:

Օդանավակայանում հյուրասիրությունից հետո, Հայոց Հայրապետը մեքենաների շարասյունի և պատվո ոստիկանների ուղեկցությամբ, օդանավակայանի ճանապարհի վրա խավաքված բազմահազար ժողովրդի խանդավառ արտահայտությունների մեջ, առաջնորդվում է Բաղդադի հայոց ս. Գրիգոր Լուսավորիչ առաջնորդանիստ եկեղեցի:

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԲԱՂԴԱԴԻ ՀԱՅՈՑ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Ժամը 17-ին ինքնաշարժերի և պատվո ոստիկանների հանդիսավոր շքերթը կանգ է առնում Յունիս էլ Սաբաավի պողոտայում, հայոց առաջնորդարանի դարբասի առաջ:

Ուրախ ու տոնական ճնչում են եկեղեցու զանգերը: Հրապարակը, մայթերը, եկեղեցու շրջակա բակն ու եկեղեցին լցված են բազմահազար ժողովրդով:

Հայոց Հայրապետը գլխավորում է եկեղեցական թափորը, որը խաչերով ու խաչվառներով, խնկով ու աղոթքով, հանդիսավոր վեհությամբ, գորգածածկ և դրոշակազարդ ճանապարհով ընթանում է դեպի ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի, «Որ զխորհուրդ քո գալստեան» շարականի երգեցողությամբ:

Կարգապահությանը հսկում են Հ. Բ. Ը. Միության և Հայ երիտասարդաց կազմակերպության երիտասարդները՝ ամուր շղթա կազմած:

Եկեղեցական թափորը, ժողովրդական խանդավառ արտահայտությունների ու զանգերի ավետավոր ղողանջների ներքո, «Հրաշափառ»-ով, մուտք է գործում եկեղեցի:

Թափորին ուղեկցում են բոլոր եկեղեցիների հոգևոր պետերը:

Եկեղեցական արարողության ավարտին **տ. Պսակ արքեպ. Թումայանը,** արտահայտելով բոլոր ներկաների զգացած հոգեկան բերկրանքն ու երջանկությունը, հանուն թեմի առաջնորդ տ. Ասողիկ արքեպիսկոպոսի, Ազգային Կենտրոնական Վարչության, իրաքահայ բոլոր կազմակերպությունների և բովանդակ ժողովրդի, Հայոց Հայրապետի շնորհաբեր ներկայությունը ողջունում է և բարի գալուստ մաղթում՝ որդիական երախտագիտության և շնորհակալության սրտառուչ խոսքով:

Ազգային Կենտրոնական Վարչության, Բաղդադի Թաղական խորհրդի, ազգային-հասարակական մարմինների և համայն իրաքահայության անունից Հայոց Հայրապետի շնորհաբեր գալուստը հետևյալ գեղեցիկ ողերգով ողջունում է վարչության ժրաջան նախագահ **դոկտ. Հասրաթ Միքայելյանը.**

ԴՈԿՏ. ՀԱՍՐԱԹ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

Վեհափառ Տե՛ր,

Հանուն իրաքահայ Ազգային Կենդրոնական Վարչության, Թաղական խորհուրդներում, ազգային հասարակական մարմիններում և համայն իրաքահայության, պատիվն ու պարտականությունը ունիմ բարի գալուստ

մաղթելու Ձերդ Վեհափառության այս օրհնյալ երկիրը գալու առիթով: Բարի եք եկած, Վեհափառ՝, հազար բարի:

Վեհափառ Տե՛ր, այս գաղութի հայությունը ծանոթ եղեռնի մնացորդացներեն է, որ իր փրկությունը հրաշքով գտավ այս երկնքի տակ: Խոր երախտագիտությամբ պետք է խոստովանինք, որ առաջին օրեն իսկ հայ դժբախտ խլյակներուն առջև իր դռները լայն բացողն ու տեր կանգնողը եղավ արաբ ազնիվ, ասպնջական ժողովուրդը: Ամեն աջակցություն և եղբայրական գուրգուրանք տրվեցավ անոնց, որպեսզի աստիճանաբար դարմանեն իրենց վերքերը և բարելավեն իրենց կյանքի պայմանները: Շնորհիվ այդ հնարավորություններուն էր, որ ներկայիս մեր ժողովուրդը կապրի տնտեսական բարգավաճ վիճակ մը, ունի իր մշակութային և կրոնական բացարձակ ազատությունը և կվայելե քաղաքական լրիվ իրավունքներ, համահավասար Իրաքի բաղկացուցիչ բոլոր տարրերուն:

Սակայն այս պատիվը որ տրվեցավ Ձերդ Վեհափառության որպես հյուրը ընդունել մեր սիրելի կառավարության, վեր է ամեն գնահատանքե, որ վայել է արաբ ազնիվ ժողովուրդի ասպետական ոգիին:

Վեհափառ Տե՛ր, բազմաթիվ անգամներ իբր հավատարիմ քաղաքացիները մեր այս սիրելի հայրենիքին, հայտնած ենք մեր երախտագիտական զգացումները, սակայն կուզեինք այս հանդիսավոր առիթով և Ձեր ներկայության, անգամ մը ևս մեր երախտագիտությունը հայտնել և կոչել՝ կեցցե արաբ ազնիվ ժողովուրդը, կեցցե մեր սիրելի նախագահ Ահմեդ էլ Բաքրը, Հեղափոխական խորհուրդի փոխնախագահ Սատտամ Հյուսեյնը և երկրի ղեկավար Բաաթ կուսակցությունը:

Վեհափառ Տե՛ր, զանազան գաղութներու հայության տված Ձեր այցելություններու նկարագրությունները երբ կկարդայինք հայ մամուլի մեջ, անհամբեր և կարոտով կսպասեինք, թե ե՞րբ մենք ևս պիտի արժանանանք այդ բախտին: Սակայն երբ կուշանար այդ օրը, ակամա կտարվեինք մտածելու, թե արդյոք ի՞նչն է պատճառը, որ մոռացության տրված ենք մեր Վեհափառին կողմե:

Իհարկե մեր այս մտածումին տուն տվող պատճառը Հայաստանյայց եկեղեցվո հավատարիմ ու հավատավոր զավակները ընդունելիս էր: Անշուշտ, մենք մեր այս զգացումին անկյունեն է, որ կմոտենայինք հարցին և չէինք կարող անդրադառնալ այն բազմաթիվ ու բազմապիսի հույժ կարևոր և պատասխանատու հարցերուն և զանոնք հաղթահարելու դժվարություններուն, որ դրված էին Ձեր առջև: Բայց բոլոր անոնք, որ բախտ ունեցած են այցելելու Մայր Աթոռ ս. Էջմիածին, անոնք միայն կրնան վկայել, թե անցնող քսան տարիներու Ձեր գահակալության շրջանին հոգեկան մխիթարություն պատճառող ի՞նչ հսկա մշակութային, կրոնական, շինարարական և վարչական աշխատանքներ կատարված են Մայր Աթոռեն ներս:

Այսօր ամեն մի հայ չի կարող չի հպարտանալ հայ ժողովուրդին և Հայաստանյայց եկեղեցվո պատիվ բերող այդ Հաստատությամբ: Ի տես այս իրականության, կխոստովանինք, որ մեր դատումներու մեջ մեղանչած ենք:

Վեհափառ Տե՛ր, դժվար է նկարագրել այն հոգեկան ապրումները, որ այս վայրկյանիս կապրի Իրաքի հայությունը Ձեր օրհնաբեր այցելությամբ: Ձեր այս այցելությունը, Վեհափա՛ռ, անջնջելի էջ մը բացավ իրաքահայ պատմության մեջ, որ չի կրնար մոռցվիլ:

Վեհափառ Տե՛ր, Հայաստանյայց եկեղեցին իր պատմության ընթացքին

թիչ անգամ երջանիկ շրջան մը բոլորած է, և այդ թիչերեն մեկը եղավ Ձեր գահակալության շրջանը:

Վեհափառ Տե՛ր, հանուն իրաքանչյության կմաղթեմ Ձեզ երկար և երջանիկ կյանք, որպեսզի հոգեկան մխիթարությամբ կարողանաք Ձեր նպատակները իրագործել՝ ի փառս Հայաստանյայց եկեղեցվո և ի մխիթարություն հայ ժողովուրդին:

Բարի եք եկած, սիրելի Վեհափա՛ռ, հազար բարի:

Այնուհետև Հայոց Հայրապետը ասում է Իր ողջույնի և օրհնության առաջին խոսքը.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՒՄ

(1978 թ. հունվարի 28, շաբաթ).

Այս պահուս Մենք փառք կուտանք Աստուծո, որ Մեր քայլերը ուղղեց դեպի այս պատմական, արևոտ, հեքիաթային քաղաք Բաղդադ, մայրաքաղաքը վերածնված այս արաբական հայրենիքի՝ Իրաքի: Եվ Մենք իրապես երջանիկ ենք, որ, իբրև Ամենայն Հայոց կաթողիկոս, առաջին անգամ ըլլալով Մեր ոտքը դրինք քաղաքակրթության այս հնագույն օրրաններեն մեկի հողի վրա: Եվ ահա այստեղ է, որ կհանդիպինք ձեզի, այս Աստուծո տան մեջ: Դուք բոլորդ մեր ժողովուրդի, մեր ս. եկեղեցվո հարազատ զավակներ, հայեր, որոնք ապաստան գտան առաջին համաշխարհային պատերազմի՝ զարհուրելի 1915-ի օրերեն հետո, նաև այստեղ: Արաբ ժողովուրդը ամեն տեղ իր թևերը լայն բացավ և Մեր պանդուխտ և դժբախտ զավակներդ կարողացաք գտնել ապաստան և ապահովություն, խաղաղություն, կյանքի լավագույն պայմաններ՝ ոչ միայն ապրելու ձեր ընտանիքներով, այլ և դուք կարողացաք ձեր կրոնական համայնքները կազմել, ձեր աղոթքի տուները կառուցել: Կազմակերպեցիք ձեր կրոնական, հոգևոր, կրթական և մշակութային հաստատությունները, կազմակերպությունները ազգային, և ահա այսպիսով իբրև հայ եկեղեցական համայնքներ կշարունակեք ձեր բարգավաճ կյանքը նաև այսօր իրաքյան վերածնված հայրենիքի, հառաջդիմական իրադրության պայմանների մեջ, հավատարիմ և շինարար քաղաքացիները մնալով այս հյուրընկալ երկրին, իրաքյան հայրենիքին: Ինչպես ամեն տեղ, Մենք այստեղ ալ հրավեր կկարդանք ձեզի, որպեսզի, պահելով ձեր կրոնական հավատքը, մեր Հայաստանյայց առաքելական ս. եկեղեցին, մեր մայրենի քաղցր լեզուն, մեր ավանդությունները և մեր հայրենաբաղձ զգացումները, միաժամանակ մնաք հավատարիմ զավակները իրաքյան հայրենիքի:

Սիրելիներ, այս պահուն Մենք չափազանց հուզված ենք, տեսնելով, ինչպես ձեր ամեն մեկի հայացքները ուղղված են դեպի Մեր անձը: Աստուծո ողորմությամբ և ազգի կամքով Մենք կոչված ենք ներկայացնելու Հայաստանյայց եկեղեցին և Մայր Աթոռ ս. Էջմիածինը, հավիտենական աստվածակառույց կեդրոնը՝ վեմը մեր քրիստոնեական լույս հավատքի, ինչպես նաև այն ժողովուրդը, որուն ծոցեն կուգանք Մենք այսօր, որ հավիտենական Արարատի փեշերուն վերածնունդի շրջան մը կապրի, բազում ավերածություններն և դժվարություններն անցնելե հետո:

Անավասիկ նաև այդ սուրբ երկրեն, Արարատյան երկրեն, մեր մայր հայրենիքեն և ձեր բոլոր եղբայրներեն ու քույրերեն կբերենք ողջույն՝ և՛

սեր, և՛ ամենաբարի մաղթանքներ, որ ամուր կանգնած մնաք մեր նախնյաց սուրբ հավատքի և մեր բոլոր ազգային սրբությունների վեմին վրա, և հպարտ ըլլաք ձեր կրոնական հավատքով և այն բոլորով, որ կներկայացնե մեր հայկական անմահ ոգին:

Մենք եկած ենք սիրո ողջույն բերելու նաև ձեր եկեղեցական կազմակերպություններուն, թեմական խորհուրդին, եկեղեցական վարչության բոլոր աշխատողներուն, որոնց շնորհիվ շեն և պայծառ կմնան մեր եկեղեցիները, և որոնց գլուխը կգտնվի ձեր բարեխնամ թեմական գերաշնորհ առաջնորդը՝ տ. Ասողիկ արքեպիսկոպոսը: Եվ ցավ է Մեզի համար, որ այս պահուս այստեղ չենք տեսներ: Գիտենք, անկողնին կծառայե, վիճակը ծանր է, և ի՜նչ մեծ, անսահման հոգեկան մխիթարություն պիտի ըլլա Մեզի համար, որ Մեր այցելությամբ, Մեր մաղթանքներով, Մեր աղոթքներով իր առողջական վիճակը բարելավվի: Տա Աստված:

Մենք կուզենք Մեր մասնավոր գոհունակությունը հայտնել, որ սկսած օդանավակայանեն և մինչև այստեղ Մեզ այնքան ջերմ սիրով դիմավորեցին և ողջունեցին Բաղդադի մեջ գործող մյուս քույր եկեղեցիներու բարձրաստիճան ներկայացուցիչները: Մենք կուզենք այս բեմեն, այս առաջին խոսքով Մեր սիրո ողջույնը ուղղելու բոլոր Մեր հոգևոր եղբայրներուն, գերապայծառ հոգևոր պետերուն: Վստահ ենք, որ նաև ուրիշ առիթներ կունենանք զիրար ավելի մոտիկեն ճանչնալու, փոխանակելու մեր զգացումները և մեր բարի մտածումները. մեր այս հանդիպումներով, մեր միատեղ աղոթքներուն չափով մը, ավելի ամրապնդած ըլլանք մեր քրիստոնեական եղբայրությունը:

Մենք նույնպես շատ ուրախ պիտի ըլլանք և հոգեպես մխիթարված, եթե հաջորդ օրերուն, համաձայն կազմված ծրագրի, պատեհությունն ունենանք նաև հանդիպելու այս երկրի մահմեդական բարձրաստիճան հոգևորականներու հետ, անոնց ալ փոխանցելու համար Մեր եղբայրական սիրո ողջույնը և բարի մաղթանքները, որովհետև բոլորս ալ հավասարապես նույն Աստվածը կդավանինք և նույն Աստուծո զավակներն ենք և նույն Աստուծո փառքին համար կաշխատինք ամեն մեկս մեր տեղը, մեր հնարավորություններու սահմաններու մեջ:

Սիրելի ժողովուրդ, Մեր սիրտը լեցուն է ամենաջերմ զգացումներով, սիրով, կարոտով և լավատեսությամբ, վառ հավատքով՝ դեպի մեր եկեղեցին, դեպի մեր ժողովուրդը և դեպի մեր ապագան:

Մենք համոզված ենք, որ ամենադժվար օրերը մեր ազգի և եկեղեցիի համար եկան ու անցան, վերածնունդի շրջան կապրինք և՛ Հայաստանի մեջ, և՛ սփյուռքի հայ տարածքի վրա:

Թող Աստված անշարժ պահե մեր առաքելական Մայր եկեղեցին, այժմ և հավիտյան:

Եկեղեցական արարողության ավարտին Հայոց Հայրապետը նույն հանդիսավորությամբ առաջնորդվում է գեղեցիկ և լուսավոր ընդունելության դահլիճ հայոց առաջնորդարանի, ուր ջերմ զրույց է ունենում էկումենիկ ոգով նախ հոգևոր պետերի, ապա Ազգային Կենտրոնական Վարչության և թեմի այլ պատասխանատու պաշտոնական մարմինների ղեկավարների հետ:

Այնուհետև դահլիճն իր դռները լայնորեն բացում է բազմահազար հավատացյալների առաջ, որոնք եկել են որպես ուխտավոր Բաղդադի բոլոր

շրջաններից, ինչպես նաև Մուսուլից, Քերքուքից, Զախոյից, Բասրայից՝ երկրուղած բարեպաշտությամբ Հայոց Հայրապետին մատուցելու իրենց որդիական սերն ու հարգանքը և ստանալու Նրա շնորհաբաշխ օրհնությունները:

Աջահամբույրի այս սրտառուչ արարողությունը տևում է առաջին իսկ առիթով շուրջ երկու ժամ: Հայրական գոհունակ ժպիտը դեմքին՝ Հայոց Հայրապետը անհոգնաբեկ և անձանձրույթ ընդունում է Իր հոգևոր զավակներին, «Հայր ճշմարտապէս որդւովք բերկրեալ»:

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԹԱՆԿԱԳԻՆ ՀՅՈՒՐՆ Է ԻՐԱՔԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

Բաղդադում Իր կեցության օրերին Հայոց Հայրապետը Իրաքի բարեխնամ կառավարության թանկագին հյուրն է:

Նորին Սրբության և Նրա շքախմբի անդամների բնակության համար հունվարի 28-ից մինչև փետրվարի 9-ը հատկացվում են Տիգրիսի կանաչազարդ ափերին գտնվող «Էլ Մանսուր» գեղեցիկ կահավորված պալատը:

Իրաքի կառավարության այս բացառիկ ուշադրությունը արդյունք է Հայոց Հայրապետի բարձր անձնավորության, դիրքի և հանգամանքի, Նրա միջազգային հեղինակության և միաժամանակ Իրաքի հայության հանդեպ կառավարության և իրաքցի արաբ ժողովրդի եղբայրական գնահատության, որպես երկրի շինարար, կարգապահ և հավատարիմ բաղաքացիների:

ԱՅՑ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ՊԱԼԱՏ

Հունվարի 29-ին, կիրակի օրը, առավոտյան ժամը 10-ին, Վեհափառ Հայրապետն այցելում է նախագահական պալատ՝ ստորագրելու համար պատվո ուկեմատյանի մեջ:

Այս առիթով Նորին Սրբությունը մատյանում արձանագրում է.

«Հանուն Հայաստանյայց եկեղեցվո և Մայր Աթոռ ս. Էջմիածնի, Մեր օրհնությունները և ամենաբարի մաղթանքները կներկայացնենք Իրաքյան Հանրապետության և անոր աստվածասեր արաբ ժողովուրդին:

Թող Աստված հավետ խաղաղության և բարօրության մեջ պահպանեն այս օրհնյալ երկիրը, որուն ծոցին մեջ կապրին նաև Մեր հավատացյալ զավակները՝ վայելելով ամեն բազատություն, որպես լիիրավ բաղաքացիները այս հողի»:

Այս այցի ժամանակ Հայոց Հայրապետին ուղեկցում էին շքախմբի անդամ Ա. Հատիտյանը և Ազգային Կենտրոնական Վարչության անդամ Հովհաննես-Հարություն Դոշօղլանյանը:

ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈԶ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Հունվարի 29-ին, կիրակի օրը, առավոտյան ժամը 11-ին, ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում հանդիսավոր պատարագ է մատուցում շքախմբի անդամ **տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը** և կատարում եկեղեցու կամարների և խաչերի օծումը՝ ընկերակցությամբ **տ. Պսակ արքեպ. Թումայանի, տ. Մոմիկ վրդ. Սարգսյանի, տ. Ավագ արդ. Աստատուրյանի, տ. Զավեն** և **տ. Ծշական քահանա հայրերի:**

Բաղդադում կառուցվել են երեք հայ եկեղեցիներ:

Ս. Աստվածածին եկեղեցին կառուցվել է 1638-ին, ս. Երրորդություն եկեղեցին՝ 1851-ին, իսկ նրա տեղում՝ ս. Գրիգոր Լուսավորիչ «պայծառ ու նազելի եկեղեցին»՝ 1954—1958 թվականներին: Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու ճարտարապետն է լիբանանահայ Ալթունյանը: Եկեղեցու հիմնարկեքը կատարվել է **տ. Ռուբեն արքեպ. Մանասյանի** առաջնորդության տարիներին, իսկ շինությունն ավարտվել է 1958-ին՝ **տ. Զգոն** եպիսկոպոսի առաջնորդության օրով: Տ. Զգոն եպիսկոպոսը 1958-ին կատարել է նաև եկեղեցու միայն Ավագ խորանի և պատկերի օծումը:

Մինչև Վեհափառ Հայրապետի ժամանումը չէին կատարվել ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու կամարների և խաչերի օծումը:

Հունվարի 29-ին, կիրակի օրը, Վեհափառ Հայրապետի այցելության առիթով, ս. պատարագից առաջ, կատարվում է նաև այդ օրհնությունը՝ խուռներամ բազմության ներկայությամբ:

Ժամը 10.30-ին Վեհափառ Հայրապետը հանդիսավորապես մուտք է գործում եկեղեցի:

Ս. պատարագի երգեցողությունը փայլուն հաջողությամբ կատարում է եկեղեցու դպրաց դասը՝ **տիկին Էոժեն Ստեփանյանի** ղեկավարությամբ:

«Հայր մեր»-ից առաջ գեղեցիկ ու բովանդակալից քարոզ է խոսում պատարագիչ տ. Հուսիկ եպիսկոպոսը՝ Իրաքի հայոց թեմին Վեհափառ Հայրապետի տված այցելության եկեղեցական-հոգևոր նշանակության մասին՝ շեշտելով նաև այդ օրը կատարված եկեղեցու կամարների և խաչերի օծման հանդիսության նշանակությունը:

Այսօր Բաղդատի Հայոց եկեղեցում պաշտոնավարում են երեք քահանա հայրեր. **տ. Գեղամ ավագ քահանա Բաշայան** (առաջնորդական փոխանորդ), **տ. Զավեն քահանա Փոլատյան** և **տ. Օշական քահանա Գոլոճյան:**

ԱՅՑ Տ. ԱՍՈՂԻԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

Նույն օրը Վեհափառ Հայրապետն այցելում է Բաղդադի պետական կենտրոնական հիվանդանոց, ուր մեկ ամսից ավելի հիվանդ պառկել էր տ. Ասողիկ արքեպիսկոպոսը:

Հայոց Հայրապետին ուղեկցում էին տ. Պսակ արքեպիսկոպոսը, շքախմբի և Ազգային Կենտրոնական Վարչության անդամները:

Զափազանց հուզիչ էր Վեհափառ Հայրապետի և հիվանդ տ. Ասողիկ սրբազանի առաջին հանդիպումն ու ողջագուրումը:

Այդ օրն էլ դժբախտաբար սրբազանի առողջական վիճակը շարունակում էր մնալ մտահոգիչ՝ հակառակ ձեռք առնված բոլոր բուժական միջոցների և անձնակազմի անձնվեր խնամքների:

Վեհափառ Հայրապետը զրուցում է տ. Ասողիկ Նրբազանի հետ, որը բարեբախտաբար պահում էր իր գիտակցությունը: Նորին Սրբությունը քաջալերում է և օրհնում նրան, մխիթարության ու սփոփանքի ջերմ խոսքեր ասում և հուսադրում նրան շուտափույթ ապաքինման բարի ցանկությամբ:

Բաղդադ գտնված օրերին Հայոց Հայրապետը երեք անգամ դարձյալ այցելում է սրբազան հորը և թելադրում նրան՝ մի քիչ կազդուրվելուց հետո գալ Մայր Աթոռ հանգստանալու և լրիվ բուժվելու համար:

ԲԱՂԴԱԴԻ ՀԱՅՈՑ ՄԵԼԻՆԵ ԴԱՆԻԵԼ ԻՍԿԵՆԴԵՐ ԱԶԳԱՊԱՏԿԱՆ ԾԵՐԱՆՈՑԻ ՀԱՐԿԻ ՏԱԿ

Հունվարի 29-ին, կիրակի օրը, երեկոյան ժամը 17-ին, Վեհափառ Հայրապետն այցելում է Բաղդադի հայոց Մելինե Դանիել Իսկենդեր ազգապատկան ծերանոց:

Ազգային մարդասիրական այս փառավոր հաստատության դարբասի առաջ Հայոց Հայրապետին դիմավորում են Ծերանոցի Վարչության և խնամակալության անդամ-անդամուհիները և բազում այլ հրավիրյալներ:

Ինչպես հայտնի է, իր տեսակի մեջ բացառիկ և օգտակար ազգային այս հաստատությունը կառուցվել է իշխանական նվիրատվությամբ բարերարուհի **տիկին Ռեհինե Կարապետ Իսկենդերի**՝ ի հիշատակ իր հանգուցյալ դստեր՝ **Մելինեի:**

Տիկին Ռեհինե Կարապետ Իսկենդերը քաջածանոթ է Բաղդադի հայության եկեղեցական-մշակութային կյանքում իր բազմաթիվ բարերարություններով և ազգանվեր նվիրատվություններով:

Բարերարուհին իր մահից երկար տարիներ առաջ նշանակում է որպես կտակարար Ռեհինե Կարապետ Իսկենդեր Վագրֆի Վերին մի մարմին, որի նախագահն է **տ. Ասողիկ արքեպ. Ղազարյանը,** որպեսզի իր կտակը կամ թողոնը գործադրվի Բաղդադի հայության ազգանվեր նպատակներին ի խնդիր:

Բարերարուհին իրեն խորհրդատու է ունեցել իր հանգուցյալ փեսան՝ **Ջոն Գրիգորի Կուրճը,** և **Աբրահամ Շահինյանը:** Այս վերջնույս ջանքերով և նախաձեռնությամբ է, որ բարերարուհու կտակը՝ Հյուսնե Վագֆիեն, պատրաստված է օրինական պայմանների մեջ: Հետագայում Աբրահամ Շահինյանի ջանքերով և հսկողությամբ է կառուցվել ծերանոցը, նրան առընթեր ս. Կարապետ գողտրիկ մատուռը՝ 1970 թվականին, որի օծումը կատարվել է 1973 թվականի մայիսի 11-ին տ. Ասողիկ արքեպիսկոպոսի կողմից:

Բարերարուհին մահացել է 1976-ին: Կտակի տրամադրության համաձայն թողոնը գործադրելի դարձնելու համար կազմվել է առաջնորդի նախագահությամբ՝ Վագրֆի Վերին մի մարմին, որի կազմում են **Արամ Սեթյանը, Տիրան Նասրը Օհանյանը, Հայկ Բոսթանյանը** և **Իսմայիլ Շահինյանը:** Մարմնի բարտուղարն է **Պարույր Օրջանյանը:**

Բաղդադի հայոց այս ծերանոցը ևս մաս է կազմում բարերարուհու կտակի՝ այն ավելի լավ պայմանների մեջ պահելու համար: Այս նպատակով Վերին մարմնին առընթեր ստեղծվել է խնամակալական մի վարչություն, որի կազմում են՝ **Տիրան Նասրը Օհանյան**՝ ատենապետ, **տիկին Մարի Թաջիրյան**՝ փոխատենապետ, **տիկին Մարի Թյուֆենկջյան**՝ ատենադպիր, **տիկնայք Շուշանիկ Գասապյան, Մարո Պողոսյան, Արմենուհի Զոլագյան, Տիգրանուհի Թերզի, Ռոզա Սոթրի,** որոնք անձնվիրաբար և մեծ սիրով պահում-պահպանում են այս օրինակելի հաստատությունը և հարազատ գուրգուրանքով խնամում ծերանոցի «բնակիչներին»:

Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է բարերարուհու ամուսնու անունը կրող ս. Կարապետ գողտրիկ մատուռ, որտեղ կատարվում է մասնավոր հոգեհանգստյան պաշտոն, և Նորին Սրբությունը «Հոգւոց» է արտասանում 1976 թվականին վախճանված բարերարուհի տիկին Ռեհինե

ՄԻ ՊԱՀ ԲԱՂԴԱԴԻ ՀԱՅՈՑ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՒՄ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԱՐԱԳԻՑ

Կարապետ Իսկենդերի և նրա ամբողջ մահացած գերդաստանի հոգիների խաղաղության համար:

Այնուհետև Հայոց Հայրապետը մեծ հետաքրքրությամբ և ուշադրությամբ այցելում է ծերանոցի բոլոր հարկաբաժիններ, դարմանատուն, սենյակներ, ճաշարան ու սեղանատուն: Ամենուրեք տիրում էր իդեալական մաքրություն, կարգ ու կանոն:

Հայոց Հայրապետն ապա զրույց է ունենում ծերանոցի «բնակիչների» հետ, մխիթարում, օրհնում բոլորին և բաժանում խաչիկներ:

Այնուհետև Հայոց Հայրապետն Իր այցելության առիթով ծերանոցի հուշամատյանում թողնում է հետևյալ արձանագրությունը.

«Հոգեկան գոհունակությամբ այցելեցինք Մելինե Դանիել այս ծերանոց, ուր լավագույն պայմաններու մեջ խնամքի տակ են բազմաթիվ տարիքավոր հայ տիկիններ և պարոններ:

Մեր սրտագին գնահատանքը կհայտնենք եկեղեցվո Կեդրոնական Վարչության և Ծերանոցի Խնամատար Վարչության բարեսիրտ անդամներուն: Բոլորին օրհնություն Մայր Աթոռ ս. Էջմիածնեն և Մեր սրտեն»:

Այնուհետև Ծերանոցի Վարչության անունով, ի պատիվ Հայոց Հայրապետի, տրվում է թեյասեղան, որն անցնում է շատ ջերմ և շինիչ մթնոլորտում:

Հյուրասիրության ընթացքում Վագրֆի Վերին մարմնի անդամ Հայկ Բոսթանյանը համառոտապես Վեհափառ Հայրապետին է ներկայացնում բարերարուհի հանգուցյալ տիկին Ռեճինե Կարապետ Իսկենդերի ազգային բարերարությունները՝ խնդրելով Նորին Սրբության օրհնությունը հանգուցյալի հիշատակին:

Վեհափառ Հայրապետը խոսք է առնում այս առթիվ և ասում.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ԾԵՐԱՆՈՑՈՒՄ
(1978 թ. հունվարի 29)

Մեծ գոհունակություն ստացանք այս այցելութենեն: Զէինք սպասեր, որ Բաղդադի համեմատաբար փոքր գաղութը այսպիսի փառավոր հողամաս, մատուռ և այդպիսի գեղեցիկ, արդիական շենք մը ունենար, ուր պատըսպարված են քանի մը տասնյակ ծերունի հայրիկներ և մայրիկներ, ամենահոգատար խնամքի ներքև: Այցելեցինք նաև անոնց սենյակները և տեսանք ամեն տեղ կարգ ու կանոն, մաքրություն: Այս ամենը կխոսին ոչ միայն ձեր գաղութի և ձեր Կեդրոնական Վարչության և եկեղեցական կազմակերպության և համայնքի նյութական միջոցներու մասին, այլ նաև հոգեկան առաքինություններու մասին: Մենք ուրիշ գաղութներ ալ գիտենք, ավելի մեծ և նյութական միջոցներով ալ ոչ ավելի սահմանափակ, այնուամենայնիվ ամեն տեղ չենք գտներ այսպիսի հաստատություններ, որոնք կարտահայտեն ձեր բոլորիդ քրիստոնեական զգացումը, որ կկոչվի գութ, գթասիրություն: Քրիստոնեական ըմբռնումով նույնիսկ արդարության գաղափարեն ավելի բարձր կդասվի գութի զգացումը: Եվ եթե համաշխարհային լայն հորիզոնի վրա ակնարկ մը նետենք, պետք է հաստատենք պատմականորեն, որ աշխարհի վրա գթության զգացումը՝ իր ճշմարիտ բարձրության հասցնողը քրիստոնեությունը եղած է: Քրիստոնեության բերած շատ առաքինություններու, մարդկային կյանքի հառաջդիմության այլ

բարձր արժանիքներու կողքին, նաև այդ գութի զգացումն է, որ առավելապես քրիստոնեական է: Սամարացիի առակը գիտնք, հարկավ, որ ինք Հիսուս կպատմե և որ կբնորոշե հստակ կերպով, թե ինչ է գութը, որովհետև Հիսուս այդ առակը կպատմե այն պահուն, երբ իրեն մոտեցող մը կհարցնե: «Ի՞նչ ընեմ որ կատարյալ ըլլամ»: Հիսուս Կըսե. «Գնա բու ընկերոջդ օգնե»: «Ո՞վ է իմ ընկերը»: Եվ երկրորդ հարցումն կըլլա: Եվ Հիսուս, որպես պատասխան կպատմե Սամարացիին ծանոթ առակը:

Ուրեմն քրիստոնեական բարի գործ կկատարեն բոլոր անոնք, որոնք կօգնեն իրենց կարոտյալ ծեր եղբայրներուն ու քույրերուն:

Մեր կյանքի, մեր քրիստոնեական հայկական կյանքի գեղեցկություններեն մեկն է իրար օգնությունը, գութի զգացումը: Եվ նման առիթներով հոգեկան բավականություն կստանան ոչ միայն օգնություն ընդունողները, այլ, գուցե առավել ևս, օգնություն բաշխողները:

Օրհնություն ձեզ այս ազնիվ աշխատանքի համար:

*

Այս առթիվ Հայոց Հայրապետը Իր բարձր գնահատությանն արժանացնելով Թերանոցի Խնամակալ Վարչության տիկինների քրիստոնեական ազնիվ գործունեությունը, նրանց նվիրում է ս. Էջմիածնից բերված ոսկյա խաչեր:

Վեհափառ Հայրապետը լավագույն տպավորություններով հրաժեշտ է առնում այս օրինակելի հաստատությունից:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ըստ նախապես կազմված ծրագրի, Հայոց Հայրապետի այցելությունները Բաղդադում շարունակվում են հարաճուն խանդավառության պայմանների մեջ:

Հունվարի 30-ին, երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 10-ին, Վեհափառ Հայրապետն այցելում է, շքախմբի անդամներով և պաշտոնական Իր ուղեկիցներով, Բաղդադի պետական թանգարան և հանգամանորեն ծանոթանում թանգարանի բոլոր բաժիններին՝ գեղեցկորեն, ճաշակով դասավորված հնագիտական ընտիր ցուցանմուշների հետ և հրաժեշտ առնում խոր տպավորությամբ:

Հունվարի 31-ին, երեքշաբթի օրը, առավոտյան ժամը 9-ին, Վեհափառ Հայրապետն այցելում է Բաղդադում բաղդեացիների (կաթոլիկ) Տ. Պոլոս Բ Շեյխո Պատրիարքին:

Ժամը 10.30-ին այնուհետև Հայոց Հայրապետը պաշտոնական այցելություն է տալիս Իրաքի կառավարության մոտ պապական նվիրակ, մոնսենյոր Ժան Ռյուպ արքեպիսկոպոսին:

ԱՅՑ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏՐ ՄՈՒՆՏԸՐ ԷԼ ՇԱՎԻԻՆ

Հունվարի 30-ին, երկուշաբթի օրը, կեսօրվա ժամը 12-ին, **Վեհափառ Հայրապետը** պաշտոնական այցելություն է տալիս Իրաքի կառավարության արդարադատության մինիստր **Մունտըր Էլ Շավիին,** մինիստրության պալատում՝ ուղեկցությամբ Իր շքախմբի և Ազգային Կենտրոնական Վարչության անդամների:

Հայոց Հայրապետը և մեծահարգ պրն. մինիստրը ողջույնի և բարիգալստյան ջերմ խոսքեր են փոխանակում:

Զրույցի ընթացքում պրն. մինիստրը բարի վկայություն է տալիս Հայոց Հայրապետին Իրաքի հայությանը՝ երկրի շինարար, կարգապահ և հավատարիմ քաղաքացիներ լինելու մասին, վկայություն, որը Նրա սիրտը լցնում է ուրախությամբ և գոհունակությամբ.

«Շատ գոհ ենք,—ասում է արդարադատության մինիստրը,—Իրաքի հայ համայնքից, և այս վկայությունը ոչ միայն մեր անձնական կարծիքն է, այլ նաև մեր ամբողջ կառավարության:

Իրաքի հողի վրա ապրող հայ և արաբ ժողովուրդները հավասարապես վայելում են բոլոր ազատություններն ու իրավունքները, որպես պետական ազնիվ ու շինարար քաղաքացիներ»:

ԱՅՑ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆ

Հունվարի 31-ին, երեքշաբթի օրը, ժամը 11-ին, **Հայոց Հայրապետը** պաշտոնական այցելություն է տալիս Իրաքի կառավարության մոտ Սովետական Միության արտակարգ և լիազոր դեսպան **Անատոլի Բարկովսկուն:**

Այս առթիվ Հայոց Հայրապետին ուղեկցում էին տ. Պսակ և տ. Հուսիկ սրբազանները, տ. Մոմիկ և տ. Ավագ վարդապետները, Արթուն Հատիտյանն ու Ազգային Կենտրոնական Վարչության նախագահ դոկտ. Հասրաթ Միքայելյանը:

Հայոց Հայրապետի և մեծահարգ պրն. դեսպանի միջև տեղի է ունենում ջերմ զրույց, որին մասնակցում է նաև դեսպանատան առաջին քարտուղար **Նուբար Տեր-Միքայելյանը:**

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ Ի ՊԱՏԻՎ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՊԱՊԱԿԱՆ ՆՎԻՐԱԿԻ ՊԱԼԱՏՈՒՄ

Փետրվարի 1-ին, չորեքշաբթի օրը, ժամը 13-ին, պապական նվիրակ մոնսենյոր **Ժան Ռյուպ արքեպիսկոպոսն** իր պալատում **Հայոց Հայրապետի** պատվին պաշտոնական ընդունելություն է կազմակերպում շուրջ 25 հրավիրյալների համար, որոնց թվում՝ Բաղդադի քույր եկեղեցիների պատրիարքներ, հոգևոր պետեր և առաջնորդներ, ինչպես նաև Իրաքի հայոց Ազգային Կենտրոնական Վարչության բոլոր անդամները:

Հայոց Հայրապետի պատվին տրված պաշտոնական սույն ընդունելությանը հրավիրված էին նաև Սովետական Միության դեսպան **Անատոլի Բարկովսկին,** Ֆրանսիայի դեսպան **Ժագ Մորիզեն** և Լիբանանի դեսպան **Աուհեյլ Շամմասը:**

Հյուրընկալ պապական նվիրակ արքեպիսկոպոսը և Հայոց Հայրապետը ողջույնի և բարիգալստյան խոսքեր են փոխանակում ճաշկերույթի ժամանակ:

Նույն օրը, ժամը 16-ին, Հայոց Հայրապետը «Էլ Մանսուր» պալատում ընդունում է այցելությունը Բաղդադի իսլամ կրոնապետ շեյխ **Մահմի էլ Խալըսիի:** Երկու կրոնապետների միջև տեղի է ունենում ջերմ զրույց:

ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ-ՃԱՇԿԵՐՈՒՅԹ ԻՐԱՔԻ Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹՅԱՆ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ՇԵՆՔԻ ԲԱՑՄԱՆ ԱՌԻԹՈՎ

Փետրվարի 1-ին, չորեքշաբթի օրը, երեկոյան ժամը 18-ին, Վեհափառ Հայրապետի օրհնությամբ և նախագահությամբ ու հանդիսավոր իրադրության մեջ կատարվում է Իրաքի Հ. Բ. Ը. Միության նորակառույց շենքի բացումը՝ ի ներկայության հոծ բազմության: Հողը Միությանը նվիրել է բարերարուհի Ռեհինե Կարապետ Իսկենդերը:

Նորակառույց շենքը զարդարվել է տոնականորեն, իրաքյան պետական դրոշակներով, ծաղիկներով և դրասանգներով: Կարմիր և սպիտակ ժապավենների վրա արաբերեն և հայերեն լեզուներով գրված խոսքերը բարի գալուստ են մաղթում Հայոց Հայրապետին:

Միության վետերանները, համակիրները ու անդամները, երկսեռ երիտասարդությունը, գլխավորությամբ Միության պատվո և վաստակավոր նախագահ **Երջանիկ Թաջիրյանի** և նոր նախագահ **Նուբար Գաբրիելյանի,** ծաղիկներ ի ձեռին շենքի շքամուտքի առաջ խանդավառ արտահայտություններով, ցնծագին ծափողջույններով դիմավորում են Հայոց Հայրապետին և Նրան ուղեկցող պաշտոնական այլ հյուրերի:

Հանդիսությունը բացվում է թիվ արտասանված «Հայր մեր»-ով և Հայոց Հայրապետի «Զգործս ձեռաց մերոց» աղոթքով:

Հանդիսության բացումը կատարում է Միության վետերան անդամ **դոկտ. Մովսես Տեր-Հակոբյանը:**

Այնուհետև գործադրության է դրվում ճաշակով պատրաստված գեղարվեստական ճոխ մի հայտագիր՝ բաղկացած արաբերեն և հայերեն արտասանություններից, մենակներից, նվագներից և բարիգալստյան պաշտոնական ջերմ խոսքերից՝ հանուն Միության վարչության, տիկնանց, երիտասարդաց և այլ մասնաճյուղերի:

Հանդիսության ընթացքում, ծրագրից դուրս, հրավիրվում է շքախմբի անդամ և «Էջմիածին» ամսագրի խմբագիր, դասախոս **Արթուն Հատիտյանն իր** սրտի խանդավառ խոսքն ասելու:

Իրաքի Հ. Բ. Ը. Միության ժրաջան և նորընտիր նախագահ **Նուբար Գաբրիելյանը,** հանուն Միության վարչության, անդամների, մասնաճյուղերի, համակիրների և բոլոր ներկաների, հետևյալ գեղեցիկ ողերձով ողջունում է Հայոց Հայրապետի ներկայությունը.

ՆՈՒԲԱՐ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ծայրագույն Պատրիարք և կաթողիկոս Ամենայն Հայոց,

Գերաշնորհ սրբազան-հայրեր ու արժանապատիվ բահանա հայրեր,

Հարգելի հանդիսականներ,

Ձեր իրաքցի զավակներուն սրտերը անհուն բերկրությամբ լեցվեցան, երբ լսեցին Ձերդ Սրբության Իրաք այցելելու ուրախալի լուրը, և ևս առավել հրճվեցան, երբ իմացան, որ մեր բարեխնամ պետության պատվական հյուրը պիտի ըլլար Ձեր այցելության շրջանին:

Մեր մեջ գտնվելու այս բանի մը օրվա ընթացքին Ձերդ Վեհափառությունը արդեն զգացած պիտի ըլլա այն մեծ գուրգուրանքն ու ընդհանուր հոգատարությունը, որով մեր սիրելի կառավարությունը շրջապատած է մեզ,

բոլոր իրաքցիներու նման հավասարապես, առանց ամենադույզն տարբերության:

Ձեր բոլոր զավակները, որոնցմե մաս մը այստեղ կբնակին 300 տարիներե ի վեր, իսկ մեծ մասը հոս ժամանած ըլլալով դարուս սկիզբները, ամբողջությամբ շաղվված են երկրին մնացյալ զավակներուն հետ թե՛ ազգային և թե՛ ժողովրդական մակարդակներու վրա: Իրարու հետ կբաժնենք մեր ցավերն ու իղձերը և ամեն ինչ, որ թանկագին ու արժեքավոր է, կզոհենք մեր սիրելի երկրին բարգավաճման համար, և այդ պատճառով ալ կատարյալ ապահովությամբ ու ազատությամբ կկատարենք մեր պարտականությունները պետական բոլոր մակարդակներու վրա, ինչպես նաև բոլոր ասպարեզներու մեջ՝ միշտ ալ մնալով օրենքի սահմաններուն մեջ: Այս բոլորը ուրիշ բան չեն, եթե ոչ արտահայտությունը արաբ ազնիվ ժողովուրդի նկարագրին, անոր իր սեփական դրացիներուն հանդեպ տածած սիրույն, նորեկը հյուրասիրելու ու տկարին օգնության ձեռք երկարելու իր ազգային հատկություններուն, որով ամեն դուռ բաց է ձգված մեր առջև որպես իրաքյան քաղաքացիներ առանց ոևէ կապանքի կամ խտրության: Այս առթիվ կուզանք Ձերդ Սրբության առջև հանդիսավորապես հայտարարելու մեր սրտերու խորքերեն բխած սերը դեպի մեր սիրելի Իրաքը և անոր հեղափոխական կառավարությունն ու իմաստուն ղեկավարությունը՝ գլխավորությամբ Նորին Վսեմություն Ահմատ Հասան Էլ Պաքրին և անոր փոխանորդ Նորին Վսեմություն Սատտամ Հյուսեյնին:

Վեհափառ Տե՛ր, բյուր-բյուր շնորհակալություն Ձերդ Սրբության, որ իրականացուցիք ամեն հայու սրտեն ու հոգիեն բխած ու երազած բաղձանքը՝ տեսնելու ս. Գրիգոր Լուսավորչի Աթոռին Գահակալը, ինչպես նաև իր ազգային ու առաքելական եկեղեցվո Գերագույն Պետը, որ ահավասիկ կմարմնանա Ձերդ Սրբության անձին վրա: Ասիկա անոր համար, որովհետև ամեն հայ Ամենայն Հայոց կաթողիկոսին անձին մեջ կտեսնե մարմնացումը իր չորս հազար տարվա պատմության, իր ուրախալի և տխուր էջերով, ու ահավասիկ մեր բոլորին կողմե ընդունեցեք, Վեհափառ Տե՛ր, մեր խորին շնորհակալությունները, որ հանձն առիք ճանապարհորդության դժվարությունները այցելելու Ձեր զավակներուն:

Այժմ կխնդրենք Ձերդ Սրբութենեն, որ օրհնե ու աղոթե մեր հեղափոխության վերելքին համար, որպեսզի անոր իմաստուն ղեկավարները զերծ մնան բոլոր տեսակի փորձանքներեն:

Միևնույն ժամանակ կուզամ Իրաքի Հայկական բարեգործական ընդհանուր միության բոլոր անդամներուն ու վարչության կողմե մեր խորին շնորհակալությունները մատուցանելու մեր բարեխնամ պետության և անոր վսեմափայլ ու սիրելի նախագահ մարաջախտ Ահմատ Հասան Էլ Պաքրին ու անոր տեղակալ, աննկուն հեղափոխական վսեմափայլ Ֆարիք Ավալ Սատտամ Հյուսեյնին, ինչպես նաև հեղափոխական ղեկավար կոմիտեի անդամներուն, որ այս ուրախալի առիթը ընծայեցին մեզի, միաժամանակ մաղթելով հառաջդիմություն ու բարգավաճում մեր սիրելի Իրաքին ու բացարձակ հաջողություններ արաբ ազնիվ ժողովուրդին, ինչպես նաև Ձեզի ու Ձեր շքախումբին բարի կեցություն մեր երկիր այցելության տևողության:

Եվ այժմ, Վեհափառ Տե՛ր, պիտի խնդրենք Ձերդ Սրբութենեն, որ Միությանս նորակառույց այս Տունը օրհնեք ու Ձեր հայրական պատգամը ընծայեք Ձեր զավակներուն:

Այնուհետև Հայոց Հայրապետի ողջույնի, օրհնության, շնորհավորության խոսքով ու ոգեշունչ պատգամով ավարտվում է հանդիսության գեղարվեստական բաժինը:

Ժամը 20-ին Իրաքի Հ. Բ. Ը. Միությունն իր նորակառույց շենքի Գաբրիելյանի անվան ընդունելության դահլիճում Հայոց Հայրապետին պատվում է շքեղ ճաշկերույթով, որին ներկա են լինում ավելի քան 200 հրավիրյալներ:

ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈԶ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՒՄ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԻ ԵՎ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՆՎԱՆԱԿՈՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԻԹՈՎ

Փետրվարի 2-ին, հինգշաբթի.—Տոն «Սրբոց Վարդանանց զօրավարացն մերոց հազար երեսուն և վեց վկայիցն, որ կատարեցան ի մեծի պատերազմին» Ավարայրի.

Առավոտյան ժամը 10.30-ին ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում հանդիսավոր ս. պատարագ է մատուցում **տ. Պսակ արքեպ. Թումայանը** և «Ոչ եթէ մարմնական համարէին զկռիւն, այլ հոգևոր առաքինութեան» բնաբանով հոգեշունչ, կրոնաբույր բարոզով ոգեկոչում է հիշատակն ու մեծ սխրանքը 451 թվականին Ավարայրում սրբոց Ղևոնդյանց բահանաների և Վարդանանց բաջամարտիկ նահատակների՝ «Վասն Յիսուսի և վասն հայրենեաց» մղված հերոսամարտում:

Վարդանանց տոնն անվանակոչության տոնն է նաև ազգիս Վեհափառ Հայրապետի: Այս առթիվ բարոզիչ սրբազանը մասնավոր կարևորությամբ անդրադառնում է այդ հանգամանքին և, հանուն Ազգային Կենտրոնական Վարչության, հոգևոր դասի ու բովանդակ իրաբահայության, շնորհավորում է Նորին Սրբության անվանակոչության տոնը՝ բարեմաղթություններ կատարելով Մայր Աթոռ ս. Էջմիածնի անսասանության, հայ եկեղեցու պայծառության, Հայոց Հայրապետի կենաց արևշատության ու հայ ժողովրդի և հայրենյաց բարօրության համար:

Հավարտ ս. պատարագի եկեղեցու ատյանում կատարվում է հայրապետական մաղթանք Նորին Սրբության նախագահությամբ և ի ներկայության խուռներամ հավատացյալ բազմության:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՒՅԹ Ի ՊԱՏԻՎ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Փետրվարի 2-ին, հինգշաբթի օրը, ժամը 20-ին, Ազգային Կենտրոնական Վարչությունը «Բաղդադ» հյուրանոցի շքեղ դահլիճում, ի պատիվ Հայոց Հայրապետի, համայնքային պաշտոնական ճաշկերույթ է կազմակերպում, որին ներկա են լինում ավելի քան 300 հայ և օտար պաշտոնական, եկեղեցական և աշխարհիկ հրավիրյալներ, այդ թվում՝ սովետական դեսպան պրն. Անատոլի Բարկովսկին, Լիբանանի դեսպան պրն. Ա. Շամմասը, հոգևոր պետեր և այլ հրավիրյալներ:

Ընդունելության ընթացքում, հանուն Կենտրոնական Վարչության, **դոկտ. Հասրաթ Միքայելյանը** կրկին անգամ ողջունում է Հայոց Հայրապետին և ասում.

ԴՈԿՏ. ՀԱՍՐԱԹ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ ԽՈՍՔԸ «ԲԱՂԴԱԴ» ՀՅՈՒՐԱՆՈՑՈՒՄ

Վեհափառ Տե՛ր,

Ձեր տված այցելությունը մեր այս սիրելի երկրին ինքնին պատմական անմոռանալի էջ մը բացավ իրաքահայ պատմության մեջ: Իսկ Ձեր անվանակոչության օրը, որ զուգադիպեց Ձեր այստեղ այցելության շրջանին, և տոնելու պատիվը մեր համայնքին վիճակվեց, առավել շուք մը ևս ավելացրեց պատմական թվականի վրա:

Վեհափառ Տե՛ր, այն հոգեկան ապրումները, որ ունի այս օրերուն մեր համայնքը, կպարտինք մեր սիրելի Պետության տված հնարավորություններուն և աջակցության: Իսկ Պետության հյուրը ըլլալու պատիվը, որ տրվեցավ Ձերդ Վեհափառության, ցայտուն արտահայտություններեն մեկն է արաբ ժողովուրդի հյուրասեր նկարագրին, որ ամենեն ավելի մենք կզգանք այն օրեն ի վեր, երբ մեր ժողովուրդը իր փրկությունը այս երկրի մեջ գտավ և ցարդ կվայելե եղբայրական գուրգուրանքը արաբ ժողովուրդին և հայրական հոգածությունը Պետության, համահավասար երկրի մյուս ժողովուրդներուն:

Այս հանդիսավոր առիթով մեր երախտագիտությունը կհայտնենք արաբ ազնիվ և ասպնջական ժողովուրդին, մեր սիրելի նախագահ Ահմադ Հասան Բաքրին և Հեղափոխության խորհուրդի փոխնախագահ Սատտամ Հյուսեյնին:

Վեհափառ Տե՛ր, Ձեր անվանակոչության առթիվ, հանուն իրաքահայության, քաղցր պարտականությունը ունիմ մաղթելու Ձեզ երկար և երջանիկ կյանք, որպեսզի կարողանաք պատմության բերումով Ձերդ Վեհափառության վիճակված Հայաստանյայց եկեղեցվո այնքան ծանր և պատասխանատու աշխատանքները, որ ծրագրած եք, հաջողությամբ պսակել:

Սույն ուղերձից հետո դոկտ. Հասրաթ Միքայելյանը, հանուն իրաքահայության, Հայոց Հայրապետին է նվիրում փիրուզե ակով ադամանդակուռ մեծարժեք մի մատանի՝ բոլոր ներկաների ջերմ ծափողջույնների ներքո:

Ապա խոսք է առնում Հայոց Հայրապետը, Իր շնորհակալությունն է հայտնում Ազգային Կենտրոնական Վարչության և բոլոր ներկաներին՝ Իր պատվին կազմակերպված այս համայնքային շքեղ ընդունելության համար, և Իր գնահատանքն արտահայտելով դոկտ. Հասրաթ Միքայելյանի՝ Բաղդադի թեմում նրա կատարած երկարամյա և արդյունաշատ գործունեության համար, նրա կուրծքը զարդարում է, ի դեմս իր վարչական հին և նոր գործակիցների, ս. Գրիգոր Լուսավորչի Ա կարգի ադամանդակուռ շքանշանով՝ բոլոր ներկաների երախտապարտ ու խանդավառ արտահայտությունների ներքո:

Այնուհետև Հայոց Հայրապետը, շարունակելով Իր խոսքը, ասում է.

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՇԿԵՐՈՒՅԹՈՒՄ
(2 փետրվարի 1978 թ.)

Անավասիկ վեցերորդ օրն է, որ կգտնվինք իրաքյան օրհնյալ երկրին մեջ և ամեն օր և գրեթե ամեն ժամ նոր ուրախություն մը կբերեն Մեզ:

Այսօր նոյնպես Մեր սիրտը լեցուն է հրճվանքով, որովհետև բացառիկ շրջանակի մը մեջ կգտնվինք. ձեր մեջ, ուր ներկա են այնքան բարձրաստիճան հոգևոր ներկայացուցիչներ:

Այստեղ մանավանդ նաև Մեզ համար պատիվ է, որ ներկա են, պատվելու Մեզ և ձեզ բոլորիդ, Սովետ Միության մեծ դեսպանը: Առաջին պահեն արդեն վայելեցի ուշադիր և հարգալից վերաբերմունքը իրաբյան հանրապետության կառավարության: Ադիկա Մեզի և մեր եկեղեցվո համար, ընդհանրապես և մեր ժողովուրդի համար մեծ պատիվ է, և այս հիշատակը Մենք Մեզի հետ պիտի տանինք Սովետական Հայաստան: Վկայությունը պիտի տայինք նաև բոլոր նպաստավոր պայմաններուն և ազատություններուն, զոր կվայելեն մեր եկեղեցին, Հայաստանյայց եկեղեցին այստեղ, և հայ համայնքը: Երջանիկ եղանք հաստատելու, թե մեր եկեղեցին կվայելե բոլոր նպաստավոր պայմանները՝ զարգացնելու համար իր հոգևոր առաքելությունը և իր մշակութային և համայնքային կյանքը:

Հետևաբար արդար է, Մեր կարծիքով, որ Մեր ձայնը ձեզի հետ Մենք ալ միացնենք և գոչենք. կեցցե՛ իրաբյան հեղափոխական կառավարությունը, արևշատություն, բաջառողջություն և միշտ երկարատև հաջողություններ այս երկրի մեծ ղեկավարներուն, որոնք իրենց ողջ էությամբ նվիրված են իրաբյան հայրենիքին, հառաջդիմության, բարգավաճման և առավել պայծառ ապագայի իրականացման:

Մենք կուզենք Մեր շնորհակալական խոսքը ուղղել նաև ձեզի բոլորիդ, սիրելի հավատացյալներ, որ առաջին օրեն մինչև այսօր Մեզ կշրջապատեք որդիական սիրով և հարգանքով: Մեր շնորհակալությունը և գնահատանքը մասնավորապես Ազգային Կեդրոնական Վարչության այս գործոթի գերագույն հայկական մարմինին, որի նախագահն է դոկտ. Հասրաթ Միքայելյան: Հարգելի պարոն դոկտոր, ի գնահատումն Ձեր երկարամյա ծառայությանց Ձեզ կշնորհենք ս. Գրիգոր Լուսավորչի շքանշան: Դուք Ձեր կյանքի ճանապարհին մոտավորապես կեսին կգտնվիք տակավին: Այս շքանշանը Ձեր կուրծքին թող Մեր օրհնությունը հանդիսանա, և Մեր մշտական մաղթանքը, որ երկար ապրիք և ծառայեք Ձեզի այնքան սիրելի և պաշտելի ժողովուրդին և մեր ս. եկեղեցիին:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈԶ ԲԱՂԴԱԴԻ ՀԱՅՈՑ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Փետրվարի 3-ին, ուրբաթ օրը, առավոտյան ժամը 10-ին, **Հայոց Հայրապետը** հանդիսավոր ս. պատարագ է մատուցում Բաղդադի հայոց ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում:

Եկեղեցին, շրջափակը լի են հավատացյալ և հեռու շրջաններից եկած ուխտավորական բազմությամբ:

Ս. պատարագի Եկմալյան երգեցողությունը վայելուն հաջողությամբ կատարում է Բաղդադի հայոց «Կոմիտաս» երգչախումբը՝ շնորհալի ղեկավարությամբ խմբավար-ինժեներ **Կարապետ Քիշմիշյանի:** Պատարագի երգեցողության կատարմանն իր մասնակցությունն է բերում նաև եկեղեցու դպրաց դասը՝ խմբավար **տիկին Էոժեն Ստեփանյանի** գլխավորությամբ:

Ս. Սեղանին սպասարկում են տ. Հուսիկ սրբազանը, տ. Մոմիկ և տ. Ավագ վարդապետները, բահանայից դասը և եկեղեցու ուրարակիրների խումբը:



ԱՐԾԱԹՑԱ ՀՈՒՇԱՆՎԵՐՆԵՐ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՑՐԱՊԵՏԻՆ ԲԱՂԴԱԴԻ ՀԱՑ ՀԱՄԱՑՆՔԻ ԿՈՂՄԻՑ՝ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅԱՆ ԱՑՑԵԼՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ։ ՀՈՒՇԱՆՎԵՐՆԵՐԸ ՆԵՐԿԱՑԱՑՆՈՒՄ ԵՆ ԻՐԱՔԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

«Հայր մեր»-ից առաջ հոգեշունչ քարոզ է խոսում Վեհափառ Հայրապետը.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ
(Փետրվարի 3-ին, ուրբաթ)

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. ամէն»:

«Փառք քեզ, Աստուած, փառք քեզ, յաղագս ամենայնի, Տէր, փառք քեզ»:

Սիրելի հավատացյալ ժողովուրդ, ահավասիկ 6—7 օրերե ի վեր կգտնըվինք ձեր մեջ, այս պատմական քաղաքի երկնակամարի ներքև, Տիգրիսի ափերուն և ամեն օր Մեր սիրտը նոր ուրախություններով կլեցվի տարբեր առիթներով, երբ կհանդիպինք ձեզի, կհանդիպինք մեր հոգևոր եղբայրներուն, կհանդիպինք այս եկեղեցվո վարչական մարմիններուն, երիտասարդներուն, և բոլորին: Այսօր սակայն ուրախությունը կկարծեմ բացառիկ է, որովհետև սովորական պահ մը չէ այս: Ս. պատարագի պահն է, աղոթքի, հրաշքի պահ մեզի ամենուս համար: Մանավանդ այդպիսի պահերուն, մենք կբաժնվինք չափով մը մեր մարմնական էութենեն և կբարձրանանք մեր զգացումներով, մեր հոգիով դեպի այս Սեղանի բարձունքը, հայցելու համար և՛ ողորմություն, և՛ օգնություն, և՛ մխիթարություն Աստուծմե: Բոլորս կգտնվինք այս աղոթքի տաճարին մեջ, այս սուրբ աստվածային Սեղանի առաջ, ահավասիկ այսպիսի մի պահուն: Եվ կխորհինք թե, համաձայն եք Մեզի հետ մտածելու, հաստատելու, որ հատկապես այսպիսի պահերու մենք կզգանք, որ միայն նյութեղեն մարմին մը չէ որ ունինք, այլ մանավանդ հոգի մը, հոգեղեն էություն մը, որ Մեզի կպարգևե ամենաանջնջելի, ամենաքաղցր երջանկությունը նման պահերուն:

Խորապես կհասկնանք առաքյալի պատգամը՝ «զհոգին մի շիջուցանէք», հոգին մի մարեք, հոգին մի տկարացնեք, հոգին մի աղավաղեք, մի խառնեք ուրիշ անսուրբ բաներու հետ: Ահավասիկ, սիրելի ժողովուրդ, այդպիսի վերացումի պահ մը կապրինք ամենքս մեկ այստեղ, այս պահուն և հետևաբար փառք տանք Աստուծո, այս հոգեկան երանության ապրումին համար:

Քիչ առաջ Մեր ծածուկ աղոթքներու մեջ, տխրության պահ մը ապրեցանք աղոթելով ձեր սրբազան առաջնորդին, Մեր սիրեցյալ եղբայր տ. Ասողիկ արքեպիսկոպոսի առողջության համար: Տա Աստված որ իր առողջական վիճակը բարվոքվի, մինչև Մեր մեկնիլն այստեղեն և ուրախանանք միասին և դուք և Մենք:

«Էջ Միածինն ի Հօրէ և լոյս փառաց ընդ նմա» ծանոթ խոսք մըն է այս ձեզի, վստահ ենք: Այսպես կսկսվի ս. Էջմիածնին նվիրված շարականը՝ այսինքն իջավ Միածինը Իր Հորմեն և Իր հետ իջավ նաև լույսին փառքը: Շարականը կվերջանա հետևյալ շատ նշանակալից խոսքերով. «Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ, քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի»: Ուրեմն այս շարականը հրավեր կկարդա, կոչ կուղղե հայ ժողովուրդին, եկե՛ք, շինեցեք ձեր լույսի խորանը, ձեր աղոթքի տունը, որովհետև անոր մեջ և անով կիջնե Լույսը, Հայաստան աշխարհի վրա:

Սիրելի ժողովուրդ, այս աստվածային հրավերին առաջին պատասխանողը մեր պատմության մեջ եղավ ինքը ս. Գրիգոր Լուսավորիչը և թագա-

վորը Հայոց՝ Տրդատ: Անմիջապես քրիստոնեությունը պաշտոնապես պետական կրոն ընդունելեն հետո, 301 թվականին, անոնց առաջին գործը եղավ կառուցանել առաջին Հայկական եկեղեցին, Մայր Աթոռ ս. Էջմիածինը, մոտավորապես այն ոճով, այն կերպարանքով, ինչպես ինքը Գր. Լուսավորիչը իր տեսիլքին մեջ տեսած էր որպես Հիսուսի կողմե թելադրանք:

Եվ երկու-երեք տարիներու քրտնաջան աշխատանքներեն հետո տաճարը բարձրացավ դեպի երկինք և առաջին ս. պատարագը մատուցեց, անշուշտ, ս. Գրիգոր Լուսավորիչ 303 թվականին, ո՞վ գիտե, ինչպիսի հոգեկան փոթորկալից, հուզումնալի մթնոլորտի մեջ: Երևակայեցեք, մենք որ այսօր կհուզվինք ամեն ս. պատարագներու ընթացքին, հապա ինչպիսի՞ հոգեկան վիճակ պետք է ունեցած ըլլան այն հայերը, Գրիգոր Լուսավորչեն, Տրդատ թագավորեն և արքայական ընտանիքեն սկսյալ, ինչպիսի հոգեկան երանություն ապրած մարդիկ, որոնք հավատացին որ վերածնան, նոր մարդեր դարձան Քրիստոսի Ավետարանին լույսով: Հավատացին Քրիստոսին, անոր Ավետարանին, հավատացին իրենց հոգիներու փրկության և հավիտենական կյանքին: Այս է արդեն մեծագույն պարգևը քրիստոնեական հավատքին: Որովհետև առանց հավիտենական կյանքի հույսի, երկրի վրա կյանքը անիմաստ է և գուցե նույնիսկ հուսահատություն: Այս քրիստոնեական պարզ ճշմարտությունները, պարզ, բայց հիմնական ճշմարտությունները երբեմն մեր առօրյա կյանքի մեջ կմոռնանք, սակայն գոնե այսպիսի աղոթքի պահերուն մեր հոգիները կցնցվին և մենք ալ կհավատանք մեր լուսահոգի նախնիքներուն պես, որ մեր կյանքը իզուր չէ այս աշխարհի վրա, որ առաքելություն մը ունինք այստեղ, երկրի վրա, ու մեզի կվերապահվի հավիտենական կյանքի փառքը մեր հավատքով և մեր բարի գործերով: Մենք կշեշտենք նաև բարի գործերը, որովհետև մեր եկեղեցին մեզի այդպես կուսուցանե, չի բավեր միայն հավատքը: Հավատքը առաջին պայմանն է, բայց նաև անոր պետք է զուգակցի մեր գործը: Քրիստոնեական կրոնքը միայն Աստուծո և մարդու միջև հարաբերություն մը չէ, ուխտ մը չէ, այլ կյանքի փիլիսոփայություն մըն է, ապրելու կերպ մըն է, նոր հարաբերություն ստեղծելն է մարդկանց միջև երկրի վրա: Պողոս առաքյալ և մյուս առաքյալները միշտ կհիշեցնեն մեզի, որ մեր կյանքը վարենք քրիստոնեավայել կերպով, այսինքն Քրիստոսի Ավետարանի պատգամները պահպանենք մեր անհատական, մեր ընտանեկան, մեր հասարակական կյանքի մեջ: Քրիստոնեական առաքինություններեն՝ բարությունը, մարդասիրությունը, կարեկցությունը, եղբայրսիրությունը, գթասրտությունը, արդարամտությունը, ճշմարտասիրությունը, ազատասիրությունը: Այս բոլորը պարզապես վերացական գաղափարներ չեն, այլ մեր ժողովուրդը զանոնք ապրած ու կիրառած է իր պատմության ընթացքին: Մեր ամբողջ պատմությունը, մեր մշակույթը իր բոլոր դրսևորումներով ուրիշ բան չէ եթե ոչ արգասիքը քրիստոնեական այս առաքինություններուն: Ինչպես կարելի էր առանց հավատքի հոյակապ հայկական տաճարները կառուցել, կամ մեր ձեռագրերու մանրանկարները, մեր երաժշտությունը, մեր գրականությունը: Ինչպես կրնար ս. Մեսրոպը առանց հավատքի, առանց իրական քրիստոնյա ըլլալուն երկինքեն իջեցնել ու հայոց ժողովուրդին բերել սրբազան տառերը հայկական: Ս. Գրիգոր Նարեկացին ինչպես կրնար աղոթել առանց հավատքի և քրիստոնեական հավիտենական կյանքի հույսին: Եվ տակավին ինչպես կրնար հայ ժողովուրդը իր հայրենիքը պաշտպանել և ի հարկին իր արյունը զոհել առանց նույն այդ հավատքին: Եվ շատ հատկանշական է, որ

Վարդան Մամիկոնյանին նվիրված շարականը կըսվի այս խոսքերով. «Նորահրաշ պսակաւոր և զորագլուխ առաքինեաց»: Տեսեք հակառակ որ խոսքը զորավարի մասին է, խոսքը Ավարայրի դաշտին մեջ մղված պատերազմի մասին է, բայց շարականագիրը շեշտը կդնե Վարդան Մամիկոնյանի ոչ թե զինվորականի հաստկություններուն վրա, ոչ իսկ անոր քաջության վրա, կամ անոր կազմակերպչական ոգիի վրա, կամ իր հայրենասիրության, այլ կկոչե զայն «զորագլուխ առաքինեաց», այսինքն առաքինություններու զորագլուխ: Քրիստոնեական առաքինություններուն մասին է խոսքը, անշուշտ որովհետև Վարդան Մամիկոնյան, իր արյունը զոհեց և հայրենիքը պաշտպանեց մանավանդ իր մեծ հոր թարգմանած ս. Գիրքը պաշտպանելու համար: Եվ ահավասիկ անգամ մը ևս ուրախանանք ձեզի հետ մեկտեղ որ հայ քրիստոնյա ենք և զավակները մեր Հայաստանյայց առաքելական Մայր եկեղեցու: Չկա ոչ մեկ հայ գաղութ ի սփյուռս աշխարհի որ չունենա իր աղոթքի տունը և ասիկա տակավին հին դարերեն սկսյալ, նույնիսկ 7-րդ դարեն սկսյալ, բայց մանավանդ Անիի գաղթականութենեն հետո, այսինքն 11-րդ դարեն վերջ:

Այսպես է ապրած հայ ժողովուրդը, այսպես ենք ապրած մենք դարերու ընթացքին: Այս հրավերին պատասխանեցիք նաև դուք, Իրաքի հայերդ և կառուցեցիք ձեր եկեղեցիները տասնամյակներ առաջ և տակավին կշարունակեք այդ եկեղեցաշինական աշխատանքը: Ահավասիկ պապացույց՝ այս փառավոր, սքանչելի եկեղեցին, այս աղոթքի տունը, որ պատիվ կբերե ձեզի և զարդերեն մեկն է նաև այս հինավուրց պատմական Բաղդադ քաղաքին:

Մենք անհունապես մխիթարված ենք, տեսնելով նորակառույց այս ս. տաճարը շնորհիվ իրաքյան բարեխնամ կառավարության ընձեռած բոլոր դյուրություններուն և ազատություններուն: Մենք կգովենք ձեր շինարար ոգին, ձեր աշխատանքի եռանդը, ձեր կորովը, ձեր քրիստոնեական հավատքը, ձեր հայկական ոգին: Հատկապես Մենք Մեր օրհնությունը կբերենք այն բոլոր բարերարներուն և նվիրատուներուն, որոնք նպաստեցին նյութապես կամ բարոյապես այս շինության կառուցման: Մեր օրհնությունը մասնավորապես եկեղեցական-վարչական մարմիններուն, ազգային կեդրոնական վարչության հարակից հանձնախումբերու անդամներուն, տիկնանց միության, բոլոր բարերարներուն, որոնք նվիրաբերած են իրենց նյութական միջոցները: Մենք վստահ ենք, որ այս եկեղեցին հետզհետե ավելի պիտի բարեզարդվի ու գեղեցկանա: Մենք խոստացանք մոտ ապագային Մայր Աթոռ ս. Էջմիածնեն հայկական ոճով երեք սրբանկարներ ուղարկել, որպեսզի զետեղվին այս պատերուն վրա: Հույս ունենք, որ մեկ տարվա ընթացքին Մեր այդ փափագը կկատարվի և դուք ալ հոգեկան հրճվանքը պիտի ունենաք, տեսնելու հայկական ոճով սրբանկարներ ձեր այս տաճարին մեջ, տաճար որ ինքը կառուցված է հայկական դասական ոճով:

Սիրելի ժողովուրդ, ձեզի բոլորիդ կրկին անգամ կբաշխենք Մեր օրհնությունները Մայր Աթոռ ս. Էջմիածնեն, ձեզի ամենուդ քաջառողջություն, արևշատություն, ձեր բոլոր առաքինի գործոց հաջողություն, ձեր ընտանեկան հարկերեն ներս սեր և խաղաղություն, նաև սեր և խաղաղություն ձեր համայնքի կյանքին մեջ, ներդաշնակ և համերաշխ գործակցությամբը գաղութիդ բոլոր կենդանի ուժերուն: Մեր ուժը միության մեջ է, ներքին համերաշխության մեջ, ներքին գործակցության մեջ: Ուր միություն և եղ-

բայրական սեր կա, այնտեղ կա նաև Աստուծո օրհնությունը, Աստուծո օգնականությունը: Պիտի բաժնվինք ձեզմե քանի մը օրերեն, բայց վստահ եղեք որ անջնջելի տպավորություններ պիտի տանինք Մեզի հետ, միշտ հիշելով ձեզ՝ սիրով, կարոտով և խանդավառ սրտով, և համոզումով, որ դուք և ձեր զավակները և ձեր թոռները, և ձեր թոռներուն զավակները հավիտյան շեն և պայծառ պիտի պահեք այս սուրբ եկեղեցին և միշտ պիտի հնչեցնեք մեր հոգեշարժ շարականները, մեր քաղցր հայերեն լեզվով:

Ձեզ բոլորիդ փայլուն հաջողություններ:

«Շնորհք, սէր և խաղաղութիւն Տէառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցի ընդ ձեզ: Ամէն»:

Ս. պատարագից հետո Հայոց Հայրապետը առաջնորդարանի դահլիճում ընդունում է ժողովրդի հոծ բազմությանը, որն աջահամբույրով ստանում է Նրա օրհնությունները:

ԻՐԱՔԻ ՀԱՅ ԵՐԿՍԵՌ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ՄԻՈՒԹՅԱՆ ՀՅՈՒՐԸՆԿԱԼ ՀԱՐԿԻ ՏԱԿ

Փետրվարի 3-ին, ուրբաթ օրը, երեկոյան ժամը 20-ին, Իրաքի Հայ երկսեռ երիտասարդաց միությունը իր սեփական շենքի ընդարձակ հարկի տակ, ի պատիվ Հայոց Հայրապետի, ընդունելություն է կազմակերպում՝ մասնակցությամբ շուրջ 400 հրավիրյալների:

Ճանապարհին Վեհափառ Հայրապետը կրկին անգամ այցելություն է տալիս Իրաքի Հ. Բ. Ը. Միության նորակառույց շենք, ուր Նրան դիմավորում և ողջունում է Միության պատվո նախագահ և ս. Գրիգոր Լուսավորչի շքանշանակիր Երջանիկ Թանիրյանը և առաջնորդում նորակերտ շենքի բոլոր բաժինները:

Նորին Սրբությունն Իր գոհունակությունն է հայտնում այստեղ կատարված Միության շինարարական և մշակութային գործունեության համար և բարձր գնահատում Հ. Բ. Ը. Միության և նրա ցկյանս նախագահ, Մայր Աթոռի էլ բարերար և Իր անձնական բարեկամ տիար Ալեքս Մանուկյանի ազգօգուտ և բարեսիրական ծառայությունները մեր ժողովրդին:

Ժամը 20-ին Հայոց Հայրապետն Իր շքախմբով ժամանում է Իրաքի Հայ երկսեռ երիտասարդաց միության շենքի դարբասի առաջ, ուր ընդունվում է Ազգային Կենտրոնական Վարչության և Երիտասարդաց Միության վարչական անդամների կողմից խանդավառ ծափողջույններով և մուտք գործում գեղեցկորեն զարդարված ընդունելության ընդարձակ դահլիճ, մինչ բեմից հնչում էր հուզումնաթաթախ հայրենակարոտ երգը՝ «Բարի եկար, սիրուն կռունկ, ի՞նչ լուր բերիր հայրենիքեն»:

Արցունք կար և հայրենասիրական խոր կարոտ բոլոր ներկաների աչքերում ու սրտերում:

Ճաշկերույթն սկսվում է Հայոց Հայրապետի օրհնությամբ: Սեղանների շուրջ ստեղծվում է ջերմ, հայկական տարուկ մթնոլորտ: Սեղանը ղեկավարում է դոկտ. Հասրաթ Միքայելյանը:

Վարչության նախագահ **Վանական Հակոբյանը,** հանուն միության ողջ անդամների, համակիրների և բոլոր ներկաների, ողջունում է Հայոց Հայրապետի շնորհաբեր ներկայությունը՝ ասելով.

ՎԱՆԱԿԱՆ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

Վեհափառ Տե՛ր,

Այսօր, այս պահուն, մեր Միության գործունեության վրա չեմ ծանրանար, որովհետև քանի մը օրեն ավելի հանգամանորեն այդ պիտի ընենք մեր մասնավոր երեկոյին: Մինչ այդ, սակայն, կխնդրենք Ձեզմե, Վեհափառ Տե՛ր, որ օրհնեիք մեր այս հայկական օջախը, մեր կազմակերպությունը, մեր անդամները, մեր թատերասերները, մեր երգչախումբը, մեր գրական-գեղարվեստական հանձնախումբը, մեր տիկնանց հանձնախումբը և գրադարանի հանձնախումբը, որպեսզի անոնք շարունակեն իրենց ազգային պարտականությունները՝ ծառայելով հայ մշակույթին, հայ ժողովուրդին և մեր հայրենիքին՝ Իրաքին:

Մեր կրկնակի շնորհակալությունները կհայտնենք Ձեզի՝ մեզ այս վայելքին արժանացուցած ըլլալնուդ համար՝ մաղթելով Ձեզ արևշատություն, առողջություն և հաջողություն:

Թույլ տվեք նույնպես մեր երախտագիտական խոսքը ուղղելու իրաքյան մեր հայրենիքի պետերուն՝ գլխավորությամբ նախագահ Ահմատ Հասան էլ Բաքրին և Հեղափոխության խորհուրդի փոխնախագահ Սատտամ Հյուսեյնին, որ առիթը տվին հանդիպելու մեր սիրելի Հայրապետին:

Նմանապես շնորհակալություն կհայտնենք մեր Ազգային Կեդրոնական Վարչության, որ այս գեղեցիկ գաղափարը ունեցավ Ձեզի Իրաք հրավիրելու:

Բարի եք եկեր, հազար բարի, սիրելի Հայրապետ:

Ապա գործադրության է դրվում հայերեն և արաբերեն արտասանություններից, մեներգերից բաղկացած գեղարվեստական մի հարուստ հայտագիր՝ բազմապատկելով ներկաների ոգևորությունն ու խանդավառությունը:

Գեղարվեստական ծրագրից դուրս այստեղ էլ «Էջմիածին» ամսագրի խմբագիր և դասախոս **Արթուն Հատիտյանը** հրավիրվում է ներկաներին և մանավանդ հայ երիտասարդությանը ուղղելու իր սրտի ջերմ խոսքը՝ վեր հանելով նաև Հայոց Հայրապետի գահակալության անցնող 23 տարիների ընթացքում Մայր Աթոռում կատարված եկեղեցաշեն, հայրենանվեր, մշակութային-կրթական, հրատարակչական, խաղաղասիրական և միջեկեղեցական գործունեության բազմաբովանդակ երեսները՝ ի փառս մեր եկեղեցու պայծառության և ի շահ մեր ազգային-եկեղեցական միասնության:

Ընդունելության վերջում խոսք է առնում Վեհափառ Հայրապետը, Իր սրտի գոհունակությունն ու ուրախությունն է հայտնում այս ուրախ և պատմական հանդիպման համար և սրտագին բարեմաղթություններ անում հայ երիտասարդներին, բաշխելով Իր օրհնությունները:

ԱՅՑ ՄԵՅԴԱՆԻ ՀԱՅՈՑ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ

Փետրվարի 4-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետն այցելում է Մեյդանի հայոց ս. Աստվածածին եկեղեցի, որը կառուցված է 1638 թվականին և համարվում է այդ թվականին Բաղդադի մեջ առաջին և միակ քրիստոնեական աղոթավայրը, ուր իրենց կրոնական պաշտամունքներն արտոնված են եղել կատարել նաև քույր եկեղեցիները՝ էկումենիկ զմայլելի ոգով:

Մեյդանի ս. Աստվածածին եկեղեցու շինությունը վերագրվում է թնդանոթաձիգ հրամանատար սեբաստացի Գեորգ Նազարեթյանին, որը Սեբաստիայի ս. Նշան վանքից բերել է տալիս նաև Քառասուն Մանկանց մասունքներից նշխարներ և զետեղում այն եկեղեցու արևմտյան պատի մեջ: Այդ օրից սկսած ս. Աստվածածին եկեղեցին հանդիսանում է սրբավայր Բաղդադի քրիստոնյա և ոչ քրիստոնյա ազգաբնակչության համար: Ս. Քառասուն Մանկանց նշխարքը զետեղված է ութանկյուն մարմարյա մի արկղի մեջ և կրում է ՌՇԺԲ թվականի արձանագրությունը:

Վերջին տարիներին ս. Աստվածածին եկեղեցին վերանորոգված է հիմնովին տիկին Ծաղիկ Գուլումջյանի ցանկությամբ, իր քրոջ որդի Արաբ Ղարիբյանի նախաձեռնությամբ, որը գնում և եկեղեցուն է նվիրում նաև եկեղեցուն առընթեր 84 քմ հողամասը:

ՃԱՇԿԵՐՈՒՅԹ ԾԵՐԱՆՈՑԻ ՀԱՐԿԻ ՏԱԿ

Նույն օրը, երեկոյան ժամը 20-ին, Ռեհինե Կարապետ Իսկենդերի կտակի Վերին մարմնի անդամները այս անգամ շքեղ ճաշկերույթով պատվում են Հայոց Հայրապետին՝ մասնակցությամբ Բաղդադի հին և նոր սերնդի շուրջ 200 հրավիրյալների:

Ընդունելության ժամանակ, հանուն Վագըֆի վերոհիշյալ վարչության, որը գործում է առաջնորդ տ. Ասողիկ արքեպիսկոպոսի անմիջական նախագահության ներքո, Հայոց Հայրապետին հատատոտակի, բայց ամբողջական ձևով կտակի մասին մանրամասնություններ է հաղորդում առաջնորդարանի գրասենյակի տնօրեն և կտակի Վերին մարմնի ընդհանուր քարտուղար Պարույր Օրջանյանը:

Հայոց Հայրապետի պատվին տրված սույն ճաշկերույթն անցնում է խանդավառ և շինիչ մթնոլորտում՝ արժանանալով Նորին Սրբության օրհնությանը և մասնավոր գնահատանքին:

Կտակի և ծերանոցի պատվարժան Տիկնանց վարչությունն ամեն ջանք թափել էին՝ ներկայանալի և հաճելի դարձնելու հատար սույն ընդունելությունը: Այս առթիվ Հայոց Հայրապետը և բոլոր հրավիրյալները պատվասիրվեցին Տիգրիս գետի հատեղ Շապպուտ ձկան (Մազկուֆ) խորովածով:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՈԶ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Փետրվարի 5-ին, կիրակի.—Բուն Բարեկենդան.

Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու փակ խորանի առաջ պատարագ է մատուցում շքախմբի անդամ և Վեհափառ Հայրապետի գավազանակիր **տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը:**

Ս. պատարագի ավարտին Հայոց Հայրապետի հրամանով **տ. Պսակ արքեպ. Թումայանը** մասնավոր վարդապետական չորս աստիճաններ է շնորհում Մայր Աթոռի միաբան տ. Ավագ աբղ. Սասատուրյանին՝ խարտ-ավիլակությամբ **տ. Հուսիկ եպս. Սանթուրյանի:**

Արարողության ավարտին Վեհափառ Հայրապետը քարոզում է Մեծ պահոց շրջանի աղոթքի և ապաշխարության կարևորության մասին և հրավիրում հավատացյալներին ապրել ապաշխարության այս շրջանը սուրբ

խոկումով՝ արժանանալու համար, որպես եկեղեցի և ժողովուրդ, Քրիստոսի հրաշափառ սուրբ Հարության շնորհներին:

Ապա Հայոց Հայրապետը շնորհավորում է նորընծա տ. Ավագ վարդապետին՝ մաղթելով, որ նա հետագայում գործի Բաղդադի հայ համայնքի ծոցում իբրև «մշակ առանց ամօթոյ», որպես հարազատ զավակն ու քաղաքացին այս օրհնյալ հողի և հավատարիմ պաշտոնյան՝ Հայաստանյայց առաքելական եկեղեցու և Մայր Աթոռ ս. Էջմիածնի:

Ի ՊԱՏԻՎ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԲԱՂԴԱԴԻ ԿԱԹՈՂԻԿԵ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՈՒՄ

Նույն օրը, ժամը 13-ին, Բաղդադի հայ կաթողիկե առաջնորդ **տ. Հովհաննես արքեպ. Գասպարյանն** առաջնորդարանում Հայոց Հայրապետին պատվում է ճաշկերույթով, որին հրավիրվել էին նաև շուրջ 20 պաշտոնական այլ անձինք՝ շքախմբի անդամներից և Ազգային Կենտրոնական Վարչությունից:

Անարատ Հղության քույրերն ամեն ջանք ի գործ էին դրել՝ Հայոց Հայրապետին պատվելու համար հայկական ընտանեկան ավանդական համադամներով:

Ընդունելության ժամանակ տ. Հովհաննես արքեպիսկոպոսը խոսք առնելով այս ուրախ առիթով ասում է.

Տ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՐՔԵՊ. ԳԱՍՊԱՐՅԱՆԻ ԽՈՍՔԸ

Վեհափառ Տե՛ր,

Սրտագին ողջույնս Ձեզի և Ձեզի ընկերակցող շքախմբին հարգո անդամներուն: Եվ իմ խոնարհ անձիս ընդմեջեն ընդունեցեք, Վեհափառ Տե՛ր, հարգալիր ողջույնը հայ կաթողիկե համայնքի բոլոր զավակներուն՝ առաքինազարդ հայ քույրերու և սիրելի վարդապետներու:

1975-ին պատիվն ու ուրախությունը զգացի, Ձեր պատվո հյուրը ըլլալու, երբ ապրեցա փառահեղ Վեհարանին հարկին տակ, հավետ հիշատակելի օրեր, որոնք խորապես դրոշմեցին հայ հոգևորականիս կյանքը: Հոն բացառիկ առիթն ունեցա ճանչնալու Ձեզ և տեսնելու Ձեր անձին մեջ հրաշալիորեն ընդելուզված մեծությունը՝ խոնարհամտության հետ, հեղինակությունը՝ քաղցրության հետ, և վեհությունը՝ պարզության հետ: Եվ այս է հարազատ, տպավորիչ, առինքնող և լուսաշող պատկերը ճշմարիտ Հովվապետի:

Վեհափառ Տե՛ր, համայնատարած գաղափար մը ծագած է ամենուրեք, որով բոլոր հայերը, որևէ հարանվանության որ պատկանին, կգիտակցին, թե անմահ Լուսավորչին հարազատ որդիներն են և հայ ազգին հարազատ զավակները: Հպարտ եմ մատնանշելու որ առաջին այն օրեն, ուր Աստված հանձնեց ինձի Բաղդատի հայ կաթողիկե համայնքին հովվական պաշտոնը, ջանացի մշակել քույր համայնքին հետ և իր շատ սիրելի բարեխնամ առաջնորդ գերաշնորհ Ասողիկ արքեպ. Ղազարյանի հետ ոչ միայն քաղաքավարական հարաբերություններ, այլ նաև բեղուն համագործակցություն: Վկա են Ազգային Ժողովի պատվարժան անդամները:

Ապրեցանք միասին դժվարին պահեր՝ նորանոր հեղաշրջումների հետևանքով, հատկապես դաստիարակչական գետնի վրա: Խորհրդակցե-

ցանք, միասնաբար գործեցինք որպեսզի պանծալի մեր հայ լեզուն միշտ ուժգին հնչեր մեր զուգ հայ վարժարաններու մեջ:

Հուսով եմ, որ երկրիս պատասխանատուներուն հետ ունենալիք Ձեր տեսակցությունը արգասավետ իր արդյունքը բերե, որպեսզի շարունակվի հայ դպրոցներեն ներս, հայ դաստիարակչական նվիրական և սրբազան առաքելությունը:

Կմաղթեմ, որ Ձեր այս առաջին հովվական այցելությունը նոր խանդ, նոր կենսունակություն ներշնչե Տիգրիսի ափերուն վրա ապրող բոլոր հայարուն:

Ձեզի, Վեհափառ Տե՛ր, երկար տարիներ՝ աստվածային շնորհքներով առլցուն երկնային մխիթարություններով ողողուն և եկեղեցաշեն գործերով ու բյուր հաջողություններով պսակյալ:

Ապրիք, Վեհափառ Տե՛ր, երկար ապրիք:

Հայոց Հայրապետի ներկայությունը որդիական ջերմ խոսքով և ակնածանքով ողջունում է նաև հայ կաթողիկե երիտասարդ հոգևորական **տ. Անտոն վարդապետ Ադամյանը:**

Վերջում խոսք է առնում նաև Հայոց Հայրապետը, Իր շնորհակալությունն ու գոհունակությունը հայտնում այս ջերմ ընդունելության և սիրալիր հյուրասիրության համար:

Այնուհետև Հայոց Հայրապետն այցելում է նաև հայ կաթողիկե առաջնորդարանին առընթեր Անարատ Հղության հայ մայրապետների վանատուն, ուր մեծարվում է նրանց պատրաստած անուշեղեններով ու հրաժեշտ առնում՝ օրհնելով նրանց կատարած կրթական գործը:

*
* *

Փետրվարի 5 և 6 օրերին Վեհափառ Հայրապետն ընդունում է մի շարք պաշտոնական այցելություններ, այդ թվում՝ Իրաքում Նորվեգիայի հյուպատոս **Արամ Սեմերճյանի,** ապա Մուսուլի հայոց ս. Էջմիածին եկեղեցու հոգևոր հովիվ **տ. Գյուտ քհն. Գարայանի** և թաղական խորհրդի ատենապետ **Անդրանիկ Գրիգորյանի** և անդամ **Վաղինակ Կարապետյանի:**

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԵՐԵԿՈՒՅԹ՝ Ի ՊԱՏԻՎ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Փետրվարի 7-ին, երեքշաբթի օրը, երեկոյան ժամը 20-ին, Բաղդադի Հայ երկսեռ երիտասարդաց միությունն իր ակումբի սրահում Հայոց Հայրապետին պատվում է գրական-գեղարվեստական մի հաճելի երեկույթով, որին ներկա են լինում ավելի քան 500 հրավիրյալներ:

Հանդիսության բացումը կատարում է և այն ղեկավարում **Պարույր Հակորյանը,** որն իր ողջույնի խոսքի մեջ ասում է.

ՊԱՐՈՒՅՐ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԽՈՍՔԸ

Վեհափառ Տե՛ր,

Հանուն Պ. Հ. Ե. Ե. Միության վարչության և անդամներուն բարի գալուստ կմաղթենք Ձեզ, Ձեր հայրական օրհնաբեր այցելության առիթով:

ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ԹԻԵՐԻՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ (ՓԱՐԻԶ) ՄԱՑՐ ԱԹՈՌԻ
ԹԱՆԳԱՐԱՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԿԻԼԻԿԵԱՆ ՀԱՅ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԻ
ԱՐԾԱԹՅԱ ՄԻ ՄԵԴԱԼԻՈՆ (ԺԳ ԴԱՐ)

Այս պահուս մեր օրերը լեցուն են ուրախությամբ և հպարտությամբ։ Աննախընթաց դեպք մըն է մեր Միության հիսունամյա պատմության մեջ։ Այսօր Հայոց Հայրապետը այցի կուգա մեր օջախը։ Բախտավոր ենք մենք՝ այս օրերու պատասխանատուները և անդամները, որ կվայելենք այս ազգային-եկեղեցաշունչ խանդավառիչ պահը։

Սիրելի Հայրապետ, մեր Միությունը մշակութային հաստատություն մըն է։ Հպարտորեն կհայտարարենք, որ ան եղած է իրաքահայ տարեգրության պատմության մեջ առանձին տեղ գրավող այն հաստատությունը որ, կառչելով հայկական տոհմիկ ավանդություններուն տված է երիտասարդության և ժողովուրդին, այն, ինչ մշակույթին կծառայե, այն, ինչ մարդ կկերտե, այն, ինչ հավատարիմ քաղաքացիներ կպատրաստե մեր Իրաքի պետության։

Երեկույթը բաղկանում էր երկու մասից։

Առաջին բաժնում հանդես է գալիս «Կոմիտաս» երգչախումբը, որը **Կարապետ Քիշմիշյանի** ղեկավարությամբ մեծ հաջողությամբ կատարում է Կոմիտաս վարդապետի Հայրապետական մաղթերգը՝ «Ամեն հայի սրտից բխած», Բարսեղ Կանաչյանի «Ծիծեռնակ», «Գարուն եկավ» և «Նանոր», ինչպես նաև Առնո Բաբաջանյանի «Ազգ փառապանած» երգերը։

Հանդիսության երկրորդ բաժնում հանդես է գալիս տիկին **Շաքե Արծիվյանը,** որն իր գեղեցիկ խոսքի մեջ հյուսում է հայ եկեղեցու կատարած դերի գովքը մեր ժողովրդի կյանքում.

ՏԻԿԻՆ ՇԱՔԵ ԱՐԾԻՎՅԱՆԻ ԽՈՍՔԸ

Հայ իրականության ամենեն ազդեցիկ երևույթներեն մեկը եղած է հայ եկեղեցվո առաջնակարգ դերը դարերե ի վեր։ Այդ դերը չէ երկրորդականացած ու այս պարագաներուն տակ չի ալ կրնար երկրորդականանալ։ Ամեն ժամանակե ավելի հայը, սփյուռքի մեջ ըլլա ան թե հայրենիքեն ներս, կարիքը ունի հայ եկեղեցվո հովանավոր շուքին, հոգիին, սկզբունքներուն ու խորհրդանիշին։ Որովհետև հայ եկեղեցին, Աստծո տունը ըլլալով հանդերձ, կրցած է նաև հայկյան զգեստներ հագնիլ, հայ Աստված մըն ալ ունենալ ու հայերեն խոսիլ։ Աշխարհի չորս ծագերուն ցրված հայուն համար իր հայությունը նույնացած է իր եկեղեցիին արարողություններուն հետ, անոր աստվածաշունչ շարականներուն հետ, անոր զանգակներու ղողանջներուն հետ։ Հայ եկեղեցին հոմանիշը եղած է հայության ու ձուլված են իրարու մեջ հավատքն ու հույսը, սերն ու պատմությունը մեր ամբողջ ազգին՝ սկսյալ Լուսավորչի օրերեն, անցնելով Մաշտոցի, Խորենացիի, Նարեկացիի, Շնորհալիի, Երզնկացիի, Խրիմյանի աշխարհներեն ու հասնելով մինչև մեր օրերը։

Հայ եկեղեցին փոթորիկներու դեմ կեցող պատնեշը եղավ հայ ազգին, կորսված հայուն փարոսը դարձավ, լուսաստղը, որ առաջնորդեց զինք դեպի նավահանգիստ, հոգեկան խաղաղություն։ Մեր պատմության մութ էջերը լուսավորվեցան իր կանթեղով ու հայը հոն գտավ ինքնություն, սփոփանք, ջերմություն ու միություն։

Այնուհետև հարգելի տիկինը ներկայացնում է Երիտասարդաց Միության 50-ամյա գործունեությունը բոլոր բնագավառներում:

Ապա գործադրության է դրվում նաև երգերից, արտասանություններից կազմված մի գողտրիկ ծրագիր՝ հանդիսության ավարտին արժանանալով Վեհափառ Հայրապետի գնահատությանն ու շնորհավորությանը:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԱՏԱՆ ՄԵՋ

Փետրվարի 8-ին, չորեքշաբթի օրը, երեկոյան ժամը 18-ին, Սովետական Միության լիազոր դեսպան Անատոլի Բարկովսկին դեսպանատան մեջ, ի պատիվ Հայոց Հայրապետի, կազմակերպում է ընդունելություն, որին հրավիրվել էին պապական նվիրակ մոնսենյոր տ. Ժան Ռյուպ արքեպիսկոպոսը, Ազգային Կենտրոնական Վարչության և այլ հայ կազմակերպությունների ղեկավարներ ու ներկայացուցիչներ:

Ընդունելությանը ներկա էին նաև Իրաքի կառավարության մոտ օտար շուրջ 14 երկրների հարգելի դեսպանները:

Ընդունելությունն անցնում է ջերմ մթնոլորտում:

ՈՂՋԵՐԹԻ ՃԱՇԿԵՐՈՒԹՅՈՒՆ Ի ՊԱՏԻՎ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Հայոց Հայրապետի այցելության օրերը Բաղդադ անցան երազի նման արագ, բայց հոգեկից, բովանդակաշատ և հուզիչ:

Գաղութն իր ամբողջությամբ տեսավ, լսեց Հայոց Հայրապետին և ապրեց անխառն ուրախության, ազգային հպարտության բազում անուշ պահեր:

Փետրվարի 9-ին, հինգշաբթի օրը, ժամը 13-ին, Նորին Սրբությունը մեկնում է: Հայոց Հայրապետը եկավ, տեսավ իր ժողովրդի բարգավաճ, խաղաղ, եկեղեցաշեն և բարեգործական-մշակութային կյանքը, նրա ամբողջ խանդավառությունը՝ հայատրոփ իր միասնության մեջ այս օրհնյալ հողի վրա, որ Իրաքն է, նրա կառավարության իմաստուն և ժողովրդասեր պաշտպանության և հովանու ներքո:

Լի է Հայոց Հայրապետի սիրտը երախտագիտությամբ դեպի այս երկրի բարձրաստիճան ղեկավարները, դեպի արաբ եղբայրական ժողովուրդը, լի է Նրա հայրական սիրտը դեպի Իր հարազատ իրենց մայր հայրենիքը, զավակները, որոնք սիրում են Իրեն, սիրում՝ Մայր Աթոռ ս. Էջմիածինը և պահում են անաղարտ իրենց պապերի հավատքն ու ավանդությունները:

Այս առթիվ Ազգային Կենտրոնական Վարչությունը հրաժեշտի ընդունելություն էր կազմակերպել առաջնորդարանի գեղեցիկ դահլիճում՝ մասնակցությամբ ավելի քան 120 հրավիրյալների:

Հանուն Ազգային Վարչության և Բաղդադի ողջ հայության մի անգամ ևս Հայոց Հայրապետին ողջունում է դոկտ. Հասրաթ Միքայելյանը և բարի ճանապարհ մաղթում՝ երախտագիտություն հայտնելով Նրան, որ Իր պատմական այցելությամբ օրհնեց, մխիթարեց Իրաքի ողջ հայությանը, հայություն, որն իր սրտի մեջ տարիներ շարունակ որդիական երախտագիտությամբ պիտի հիշի Նորին Սրբության այս շնորհաբեր այցելությունը:

Հուզվել են բոլորը հրաժեշտի այս պահին: Արցունք կա բոլորի աչքերում, ուրախության և հպարտության արցունք:

Եկավ, տեսավ և աճա գնում է Հայոց Հայրապետը՝ խորապես լավատես, խանդավառ՝ իր ժողովրդի կյանքով, ներկայով և ապագայով:

Նույն պահին Հայոց Հայրապետը տալիս է Իր պատգամը և օրհնությունը, որոնք ընդունվում են հարգանքով և բարեպաշտ երկյուղածությամբ:

Այս առթիվ Հայոց Հայրապետն Իր մասնավոր գնահատությանն է արժանացնում Ազգային Կենտրոնական Վարչության, Հ. Բ. Ը. Միության, Հայ Ե. Ե. Միության և այլ հայկական կազմակերպությունների կատարած համերաշխ ու շինարար աշխատանքը՝ ի միասնություն և ի բարգավաճումն Իրաքի հայության եկեղեցական և մշակութային կյանքի՝ Մայր Աթոռ ս. Էջմիածնի օրհնության ներքո:

Հայոց Հայրապետը Իր մասնավոր ուշադրությանն է ներկայացնում նաև Ռեհինե Կարապետ Իսկենդեր կտակը կյանքի կոչած և այդ խղճով ու պատվով գլուխ բերած Աբրահամ Շահինյանի անշահախնդիր ծառայությունը՝ նրան շնորհելով ս. Գրիգոր Լուսավորչի Ա կարգի շքանշան: Աբրահամ Շահինյանի բացակայության պատճառով Հայոց Հայրապետի ձեռքից հուզումով և երախտագիտությամբ շքանշանը ստանում է նրա հարգելի տիկինը՝ Արաքսի Շահինյանը՝ բոլոր ներկաների խանդավառ ծափերի և երախտագետ արտահայտությունների ներքո:

ՄԵԿՆՈՒՄ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Փետրվարի 9-ին, հինգշաբթի օրը, ժամը 14-ին, Վեհափառ Հայրապետը հրաժեշտ է տալիս այս պատվական ու պատմական գաղութին և մեկնում Փարիզ՝ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանի ուղեկցությամբ:

Ժամը 13-ին Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի և, աղոթելուց հետո, մեկնում Բաղդադի միջազգային օդանավակայան:

Վերջին րոպեներն են: Ղողանջում են եկեղեցու զանգերը: Բոլոր ներկաներն աջահամբույրով ստանում են Հայոց Հայրապետի օրհնությունները:

Վեհափառ Հայրապետը մի անգամ ևս օդանավակայանում ընդունում է Իրեն ճանապարհող եկեղեցական և պետական պաշտոնական անձնավորություններին:

Հեռանում է Հայոց Հայրապետն այս երկրից ու այս ժողովրդից՝ մխիթարված, որ կենդանի է, կենսուրախ, բարօր ու խաղաղ այս պատվական հայ գաղութը, հավատարիմ՝ իր նախնյաց հավատքին և ավանդություններին, հավատարիմ՝ որպես շինարար և օրինապահ քաղաքացին նաև այս օրհնյալ երկրի:

Վեհափառ Հայրապետը կանգնած օդանավի կամրջակի վրա մի անգամ ևս օրհնում է բոլորին:

Բարի ճանապա՜րհ Հայոց սիրելի և աստվածարյալ Հայրապետին:



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՓԱՐԻԶՈՒՄ

Վեհափառ Հայրապետը հունվարի 28-ից մինչև փետրվարի 9 օրերին Բաղդադ կատարած հովվապետական Իր այցելությունից հետո մեկնում է Փարիզ՝ Մայր Աթոռի վերաբերյալ կարևոր գործերով զբաղվելու համար:

Փարիզի Շաղ դը Գոլի անվան օդանավակայանում Հայոց Հայրապետին դիմավորում է և բարի գալուստ մաղթում Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ **տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը**՝ ընկերակցությամբ հայրապետական պատվիրակի ընդհանուր փոխանորդ **տ. Գյուտ եպս. Նազգաշյանի, տ. Ներսեհ ծ. վրդ. Բապուճյանի, տ. Նորվան վրդ. Զաքարյանի, տ. Գրիգորիս վրդ. Բունիաթյանի, տ. Մեսրոպ և տ. Պարգև քահանա հայրերի:**

Հայոց Հայրապետին դիմավորում և բարի գալուստ են մաղթում Փարիզի և շրջակայքի Հայաստանյայց առաքելական եկեղեցու Կրոնական Ընկերակցության ներկայացուցչական և վարչական ժողովների անդամները, Փարիզի Մշակութային կազմակերպությունների, հայ մամուլի, ազգային-կրթական զանազան հաստատությունների ներկայացուցիչներ:

Հայոց Հայրապետին ողջունում և բարի գալուստ են մաղթում նույնպես. Փարիզի Ֆրանսուա Մարտի կարդինալի անունից՝ **մոնսենյոր Հյուկը,** հույն օրթոդոքս արքեպիսկոպոսի անունից՝ **տ. Երեմիա եպիսկոպոսը,** Մոսկվայի ռուսաց պատրիարքության անունից՝ **հայր Բուրուրուզը,** հայ կաթողիկե եպիսկոպոսի անունից՝ **Աթանաս վրդ. Քեսեճյանը,** և ուրիշներ:

Հանուն ֆրանսիական կառավարության Հայոց Հայրապետին ողջունում է Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրության պրոտոկոլի պետ **Ժան Լարշեն:**

Ֆրանսիական կառավարության մոտ Սովետական Միության արտակարգ և լիազոր դեսպան **Ստեփան Չերվոնենկոյի** անունից Հայոց Հայրապե-



ՏԵՍԱՐԱՆ ՓԱՐԻԶԻՑ

Գործ՝ նկարիչ Էդգար Շահինի. նվեր Հայկ Աղաբեկյանից (Փարիզ)

տին ողջունում և բարի գալուստ է մաղթում դեսպանատան առաջին քարտուղար **Ռուբեն Սահակյանը:**

Իր ժամանումից հետո Հայոց Հայրապետը առաջնորդվում է օդանավակայանի պետական պատվո հյուրերի դահլիճ, ուր տեղի է ունենում ջերմ զրույց:

Այնուհետև Հայոց Հայրապետը առաջնորդվում է «Աթենք Պլազա» հյուրանոց:

Փետրվարի 10-ին, ուրբաթ օրը, և **շաբաթ օրը, փետրվարի 11-ին,** ժամը 10-ին, Վեհափառ Հայրապետը առաջնորդարանում ընդունում է հոգևորականների, Կրոնական Ընկերակցության ներկայացուցչական և վարչական ժողովների անդամների և ազգային կազմակերպությունների ներկայացուցիչների և անհատների այցելությունները, այդ թվում՝ **տիկին Թերզյանի** (Բուենոս Այրես), արվեստաբան-գիտնական **Սիրարփի Տեր-Ներսեսյանի** (Փարիզ), **Սուրեն Գործունյանի** (Փարիզ) և ավելի ուշ՝ Լիոնի հայոց հայրապետական պատվիրակի փոխանորդ **տ. Դավիթ եպս. Սահակյանի:**

Ժամը 21-ին Վեհափառ Հայրապետը, ուղեկցությամբ տ. Սերովբե և տ. Գյուտ սրբազանների, վարդապետների և քահանա հայրերի, ներկա է լինում Նոտր Դամ դը Պլանկ Մանտո կաթոլիկ եկեղեցում տրված Հայաստանի Կոմիտասի անվան լարային քառյակի նվագահանդեսին:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՈԶ ՓԱՐԻԶԻ ՀԱՅՈՑ Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏԻՉ ԵԿԵՂԵՑՈՒՄ
(1978 թ. փետրվարի 12)

Երկրորդ կիրակի (Արտաքսման) Քառասնորդական պահոց.

Այսօր, առավոտյան, Փարիզի հայոց ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցում, փակ խորանի առաջ, ս. պատարագ է մատուցում Մայր Աթոռի միաբան և Փարիզում ուսանող **տ. Գրիգորիս վրդ. Բունիաթյանը:**

Ս. պատարագին ներկա է լինում **Վեհափառ Հայրապետը:**

Առաջնորդանիստ եկեղեցին լիքն է հավատացյալ բազմությամբ, որը եկել է ողջունելու Հայոց Հայրապետին և ստանալու Նրա օրհնությունները:

«Հայր մեր»-ից առաջ Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ **տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը** բարի գալուստ է մաղթում, հանուն Արևմտյան Եվրոպայի հայության, Հայոց Հայրապետին և Նորին Սրբությանը հրավիրում Իր պատգամն ու օրհնությունը տալու:

Վեհափառ Հայրապետն առաջնորդվում է Ավագ սեղան և քարոզում՝ «Ցաւել ի մեզ, Տէր ամենակալ, զհաւատ, զյոյս, զսէր և զամենայն գործս առաքինութեան» աղոթքի բնաբանով՝ թելադրելով հավատացյալներին, որ Մեծ պահոց այս շրջանին ապրեն աղոթքի և ապաշխարության սրբազան խոկումներով, արժանավորապես դիմավորելու համար Փրկչի հրաշափառ ս. Հարության տոնը, որպես եկեղեցի և ժողովուրդ:

Նույն օրը, կեսօրին, հավարտ ս. պատարագի, «Աթենք Պլազա» հյուրանոցի Ռեժանս սրահում Փարիզի առաջնորդարանն ու Կրոնական Ընկերակցությունը Հայոց Հայրապետի պատվին ընդունելություն է կազմակերպում, որին ներկա են լինում հոգևորականաց ամբողջ դասը, եկեղեցական վարչության բոլոր անդամները և Մայր Աթոռի բարերարները՝ իրենց տիկիններով:

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Փետրվարի 13-ին և 14-ին, երկուշաբթի և երեքշաբթի օրերին, Վեհափառ Հայրապետը առաջնորդարանում բարեհաճում է ընդունել մի շարք այցելություններ, այդ թվում՝ **Սուրեն Գործունյանի, Արտավազդ Բերբերյանի և Արշավիր Կլորիկյանի** (Փարիզ):

Երկուշաբթի օրը, երեկոյան ժամը 20-ին, Վեհափառ Հայրապետը բարեհաճում է օրհնել Իր ներկայությամբ **տեր և տիկին Նուրհան Ֆրենկյանների** ընտանեկան հարկը ու նրանց սեղանի աղն ու հացը:

ԺԱՄԱՆՈՒՄ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԵՂԻՇԵ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԵՎ Տ. ՇԱՀԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Երկուշաբթի օրը, երեկոյան, Փարիզ է ժամանում Երուսաղեմի հայոց **տ. Եղիշե սրբազան պատրիարքը**՝ ընկերակցությամբ սուրբ Աթոռի դիվանապետ և Ժառանգավորաց վարժարանի և ընծայարանի տեսուչ **տ. Շահե արքեպ. Անեմյանի**՝ հատկապես ողջունելու և բարի գալուստ մաղթելու Վեհափառ Հայրապետին և Նրա հետ խորհրդակցելու մի շարք եկեղեցական կարևոր հարցերի շուրջ:

* * *

Փետրվարի 14-ին Վեհափառ Հայրապետը առաջնորդարանում ընդունում է Փարիզի Մշակութային Միության «Յանց» ակումբի ներկայացուցիչներին:

Ավելի ուշ առաջնորդարանում տեղի է ունենում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, Փարիզում ներկա գտնվող Մայր Աթոռի Գերագույն հոգևոր խորհրդի եկեղեցական անդամների՝ տ. Սերովբե, տ. Հուսիկ և տ. Շահե սրբազանների խորհրդակցական ժողովը:

Խորհրդակցական սույն ժողովին ներկա է լինում նաև տ. Եղիշե սրբազան պատրիարքը՝ Վեհափառ Հայրապետի հրավերով:

Նույն օրը, ժամը 20-ին, առաջնորդարանում Վեհափառ Հայրապետը բարեհաճում է ընդունել այցելությունը Հ. Բ. Ը. Միության Փարիզի համալսարանական, Ոստանի Մարի Նուբար հաստատության մեջ բնակվող համալսարանականների երկսեռ խումբը: Հանուն ուսանողների սույն Տան վարչության տնօրեն **Զավեն Եկավյանը** ողջույնի և բարիգալստյան ջերմ խոսք է ուղղում Հայոց Հայրապետին:

Նորին Սրբությունը հայրաբար խոսում է համալսարանականների հետ, հետաքրքրվում նրանց ուսանողական կյանքով և թելադրում՝ միշտ կապ պահպանել նաև մայր հայրենիքի մշակութային-գրական-գիտական կյանքի հետ:

Նույն օրը, առավոտյան, Վեհափառ Հայրապետը ընդունում է նաև այցելությունը Ռումինիայից՝ իր նախկին ուսանող **Ժիրայր Մանասյանի,** որն այս ուրախ առիթով խոստանում է Մայր տաճարին նվիրել մի նոր երգեհոն:

Փետրվարի 14-ին, երեքշաբթի օրը, Քյոլնից Փարիզ է ժամանում Արևմտյան Գերմանիայի հոգևոր հովիվ և Մայր Աթոռի միաբան **տ. Գարեգին արդ. Ներսիսյանը**՝ բարի գալուստ մաղթելու Հայոց Հայրապետին:

ԵՐԵԽԱՆԵՐԸ ԾՈՎԱՓԻՆ

Գործ՝ նկարիչ Ադամյանի. նվեր Հայկ Աղաբեկյանից (Փարիզ)

Փետրվարի 15-ին, չորեքշաբթի օրը, ժամը 9.30-ին, առաջնորդարանում Վեհափառ Հայրապետին է այցելում **պրոֆ. Մահեն,** որն Արևելյան օտար լեզուների դպրոցի հայագիտական ամբիոնի վարիչն է և միաժամանակ Ինստիտու Կաթոլիկի հայագիտության ուսուցչապետը:

Նույն օրը, ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետն առաջնորդարանում ընդունում է այցելությունը Ժնևից ժամանած մասնավոր մի պատվիրակության, որը եկել էր բարի գալուստ մաղթելու Հայոց Հայրապետին:

Պատվիրակության կազմում էին՝ Ժնևի հայոց հոգևոր հովիվ **տ. Վազգեն վրդ. Թադոսյանը, Մկրտիչ Շելլեֆյանը,** Ժնևի եկեղեցական վարչության ատենապետ **Էոժեն Փափազյանը:**

Նույն առթիվ Հայոց Հայրապետն ընդունում է նաև այցելությունը Մայր Աթոռի բարերար Նապոլեոն Պուլլուքյանի՝ Լիոնից:

Ժնևի համայնքային պատվիրակությունը, ի պատիվ Հայոց Հայրապետի, կեսօրին «Լասեր» ճաշարանում ճաշկերույթ է տալիս՝ մասնակցությամբ տ. Եղիշե սրբազան պատրիարքի, տ. Սերովբե, տ. Շահե, տ. Հուսիկ և տ. Գյուտ սրբազանների:

Փետրվարի 15-ին, չորեքշաբթի օրը, ժամը 20-ին, Վեհափառ Հայրապետը, ընկերակցությամբ տ. Եղիշե սրբազան պատրիարք հոր, տ. Սերովբե, տ. Շահե, տ. Հուսիկ և տ. Գյուտ սրբազանների, ներկա է լինում Գուրգեն Գործունյան եղբայրների տված ճաշկերույթին, նրանց ընտանեկան հարկի տակ:

ԱՅՑ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆ

Փետրվարի 16-ին, հինգշաբթի օրը, ժամը 9.15-ին, Վեհափառ Հայրապետը պաշտոնական այցելություն է տալիս Ֆրանսիայում Սովետական Միության արտակարգ և լիազոր դեսպան **պրն. Ստեֆան Չերվոնենկոյին,** Փարիզի սովետական դեսպանատանը:

Այս առթիվ Հայոց Հայրապետին ուղեկցում էին տ. Սերովբե, տ. Հուսիկ և տ. Գյուտ սրբազանները:

Հայոց Հայրապետի, Նրա շքախմբի անդամների և մեծահարգ սովետական պրն. դեսպանի միջև տեղի է ունենում շուրջ մեկ ժամ տևող ջերմ ու մտերմիկ զրույց, որին մասնակցում է նաև դեսպանատան առաջին քարտուղար Ռուբեն Սահակյանը:

Ժամը 11.30-ին առաջնորդարանի մեջ կրկին անգամ գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի Փարիզում գտնվող եկեղեցական անդամների մի խորհրդակցություն, որին մասնակցում է նաև տ. Եղիշե սրբազան պատրիարքը:

Ժամը 14-ին Լոնդոնից Փարիզ է ժամանում Անգլիայի հայոց հայրապետական պատվիրակ և Լոնդոնի հոգևոր տեսուչ **տ. Ներսես եպս. Պոզապալյանը՝** ողջունելու Հայոց Հայրապետին:

Նույն օրը, ժամը 16.30-ին, հյուրանոցում Վեհափառ Հայրապետն ընդունում է այցելությունը Մարսելի Կրոնական Ընկերակցության Վարչության նախագահ և Մայր Աթոռի բարերար **տեր և տիկին Արծրուն Ջրբաշյանների:**

ԱՅՑ ՖՐԱՆՍԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐ Լ. ԿԻՐԵՆԿՈՅԻՆ

Փետրվարի 16-ին, ժամը 18.30-ին, Վեհափառ Հայրապետը պաշտոնական այցելություն է տալիս Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր **Լ. Կիրենկոյին** Փարիզի նրա պաշտոնատեղիում:

Այս առթիվ Հայոց Հայրապետին ուղեկցում էին **տ. Սերովբե, տ. Շահե** և **տ. Գյուտ սրբազանները:**

Հայոց Հայրապետի, հայ եկեղեցու բարձրաստիճան իշխանավորների և պրն. մինիստրի միջև տեղի է ունենում կես ժամ տևող սիրալիր, մտերիմ, շահեկան զրույց:

Նույն օրը, երեկոյան ժամը 20.30-ին, **տեր և տիկին Արծրուն Ջրբաշյանները** «Աթենն Պլազա» հյուրանոցի հատուկ մեկ ճաշասրահում ընդունելություն են կազմակերպում, որին ներկա են լինում Վեհափառ Հայրապետը, տ. Եղիշե սրբազան պատրիարքը, տ. Սերովբե, տ. Շահե, տ. Հուսիկ, տ. Գյուտ և տ. Ներսես սրբազանները:

Ընդունելությանը ներկա են լինում նաև **Ջրբաշյան, Գործունյան, Մոմճյան, Բաբայան, Կուրտիկյան** և **Մելքոնյան** ընտանիքները:

Փետրվարի 17-ին, ուրբաթ: Այսօր, ժամը 12.30-ին, Հայոց Հայրապետը, տ. Եղիշե սրբազան պատրիարքը, տ. Սերովբե, տ. Շահե, տ. Գյուտ և տ. Ներսես սրբազանները կեսօրվա ճաշի հյուրերն են լինում Փարիզի կարդինալ **Ֆրանսուա Մարտիի,** նրա արքեպիսկոպոսարանի մեջ:

Այսօր, երեկոյան, Վեհափառ Հայրապետին է այցելում Յոհաննեսբուրգից (Հարավային Աֆրիկա) Վաչե Գարագաշյանը:

ԲԵԼԳԻԱՀԱՅ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Ժամը 17-ին Վեհափառ Հայրապետը հյուրանոցի Իր հարկաբաժնում ընդունում է այցելությունը բելգիահայ պատվիրակության, որը Բրյուսելից եկել էր հատկապես ստանալու Նորին Սրբության օրհնությունները և բարի գալուստ մաղթելու Նրան:

Պատվիրակության կազմում էին գաղութային վարչության ատենապետ, փաստաբան **Էդվարդ Ժաքյանը,** ընդհանուր ժողովի նախագահ **պրոֆ. Արբակ Մխիթարյանը՝** իր տիկնոջ հետ, վարչության փոխնախագահ **Վահրամ Պարսամյանը՝** իր տիկնոջ հետ, և վարչության անդամ **Նուբար Տեովլեթյանը՝** իր տիկնոջ հետ:

Հայոց Հայրապետի և բելգիահայ պատվիրակության անդամների միջև տեղի է ունենում ջերմ զրույց, մանավանդ տեղի հայկական համայնքը վերակազմակերպելու և համայնքային մի շարք այլ հարցերի շուրջ:

Սույն զրույցին մասնակցում էին նաև Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ տ. Սերովբե արքեպիսկոպոսը և տ. Գյուտ եպիսկոպոսը:

Ինչպես հայտնի է, վերջերս Երուսաղեմի հայոց տ. Եղիշե սրբազան պատրիարք հոր Բրյուսել՝ Բելգիայի թագավորին տված այցելության առիթով Նորին Վեհափառությունը խոստացել է Բրյուսելի հայ համայնքին մի եկեղեցի նվիրել:

ՁՄԵՌ

Գործ՝ նկարիչ Ալխազյանի. նվեր Հայկ Աղաբեկյանից (Փարիզ)

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ՝ Ի ՊԱՏԻՎ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Փետրվարի 17-ին, ուրբաթ օրը, ժամը 21-ին, Փարիզի և շրջակայքի Կրոնական Ընկերակցության Վարչությունը, ի պատիվ **Հայոց Հայրապետի,** «Ինտերնացիոնալ» հյուրանոցի «Իմպերիալ» դահլիճում կազմակերպում է ողջերթի ընդունելություն, որին ներկա են լինում ավելի քան 200 հրավիրյալներ:

Ընդունելության ընթացքում ելույթներով հանդես են գալիս տ. **Եղիշե սրբազան պատրիարքը, տ. Սերովբե արքեպիսկոպոսը** և եկեղեցու վարչության նախագահ **Սեդրակ Քարյանը:**

Այնուհետև, խոսք առնելով, Վեհափառ Հայրապետը Իր շնորհակալությունն է հայտնում այս ընդունելության կազմակերպության համար և տալիս է Իր պատգամն ու օրհնությունը՝ հավատարիմ մնալու մեր եկեղեցական, ազգային, հայրենասիրական ավանդույթներին և հպարտ զգալ՝ հայ մնալու և հայ ապրելու վճռականությամբ:

ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌԻՆ

Վեհափառ Հայրապետի՝ Փարիզ այցելության առիթով մեծագումար նվիրատվություններ եղան Մայր Աթոռին՝ հատուկ նպատակների համար.

ա) **Տիար Արծրուն Ջրբաշյանի** (Մարսել) կողմից.

բ) **Տիարք Սուրեն** և **Գուրգեն Գործունյան եղբայրների** (Փարիզ) կողմից:

Նվիրատվություններ կատարեցին նաև, Մայր Աթոռի պայծառության համար, տիար **Վաչե Գարագաշյանը** (Յոհաննեսբուրգ) և **Արշավիր Կլորիկյանը** (Փարիզ):

Նույն առիթով տիար **Հայկ Աղաբեկյանը** (Փարիզ) Մայր Աթոռի թանգարանին նվիրեց ֆրանսահայ նկարիչների 14 գեղարվեստական ստեղծագործություններ:

ՄԵԿՆՈՒՄ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Փետրվարի 18-ին, շաբաթ օրը, Վեհափառ Հայրապետը հրաժեշտ է առնում Փարիզից և մեկնում Մայր Աթոռ՝ ընկերակցությամբ տ. Հուսիկ եպիսկոպոսի:

Ժամը 10.30-ին Շառլ դը Գոլի անվան միջազգային օդանավակայանում Հայոց Հայրապետին ճանապարհում են տ. Եղիշե սրբազան պատրիարքը, տ. Սերովբե, տ. Շահե, տ. Գյուտ, տ. Ներսես սրբազանները, տ. Ներսեհ, տ. Նորվան, տ. Գրիգորիս վարդապետները, տ. Մեսրոպ և տ. Պարգև քահանա հայրերը, սովետական դեսպանատան առաջին քարտուղար Ռուբեն Սահակյանը, Փարիզի հանրածանոթ ազգայիններից՝ Մայր Աթոռի բարերարներ Նուրհան Ֆրենկյանը, Գևորգ Պագըրճյանը, եկեղեցական վարչության անդամները, մամուլի ներկայացուցիչներ, «Յառաջ» թերթի խմբագրապետուհի տկն. Արփիկ Միսաքյանը և ուրիշներ:

Օդանավակայանում Հայոց Հայրապետին ճանապարհում է նաև ֆրանսիական կառավարության անունից՝ արտաքին գործերի մինիստրության պրոտոկոլի պետ Ժան Լարշեն:

Վեհափառ Հայրապետը փետրվարի 18-ին ժամանում է Մոսկվա, իսկ փետրվարի 21-ին, երեքշաբթի օրը, երեկոյան ժամը 21-ին՝ Մայր Աթոռ:

Բարի գալուստ Հայոց սիրելի Հայրապետին:

ԱՐԹՈՒՆ ՀԱՏԻՏՅԱՆ



ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԵՂԻՇԵ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԱՅՑԸ ԱՄՆ ԵՎ ԵՎՐՈՊԱ

1977 թ. նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին Երուսաղեմի հայոց ամենապատիվ տ. Եղիշե սրբազան պատրիարքը, Ժառանգավորաց վարժարանի և ընծայարանի տեսուչ և ս. Աթոռի դիվանապետ տ. Շահե արքեպիսկոպոսի ուղեկցությամբ, երկար ճանապարհորդություն է կատարել դեպի ԱՄՆ և Եվրոպա, «պատրիարքարանի վերաբերյալ զանազան գործերու և տեսակցություններու անհրաժեշտության» թելադրանքով:

Սրբազան պատրիարքը ԱՄՆ կատարած իր այցելության առթիթով եղել է անձնական հյուրը ամերիկահայ ազգային բարերար և ծանոթ հասարակական գործիչ Տատուր Տատուրյանի:

Նոյեմբերի 15-ին սրբազան պատրիարք հայրը ժամանում է Նյու-Յորք: Հանուն ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի, առաջնորդ տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանը օդանավակայանում ողջունում և բարի գալուստ է մաղթում սրբազան պատրիարք հորը:

Նոյեմբերի 16-ին սրբազան պատրիարք հայրը և տ. Շահե արքեպիսկոպոսը ներկա են լինում Նյու Յորքի հայոց առաջնորդարանի բակում Հ. Բ. Ը. Միության ցկյանս նախագահ տիար Ալեքս Մանուկյանի նվիրատվությամբ պատրաստված բանդակագործ Նագյանի՝ Քրիստոսի «Էջն ի խաչէն» արձանի բացման հանդիսությանը:

Նոյեմբերի 18-ին սրբազան պատրիարքը ժամանում է Դետրոյտ: Ի պատիվ նրան տրված ընդունելության, տիար Ալեքս Մանուկյանը ողջունում և բարի գալուստ է մաղթում Նորին ամենապատվությանը:

«Պատրիարք սրբազան հոր այցը թեև կկրե անպաշտոն բնույթ, սակայն ան մեզի կբերե դարավոր պատմության մը ամբողջ շունչն ու իրականությունը:

Ամերիկայի մեջ հաճախ կափսոսանք, թե որքան հեռացած ենք մեր պատմության արմատներեն, մեր ազգային արժեքներեն և մեր նվիրապետական Աթոռներեն. սակայն այսպիսի ներշնչող առիթները հանկարծ կբերեն ու մեր պատմությունը կմիախառնեն մեր առօրյային: Ու մենք ազգովին կզգանք, թե տակավին անբաժան կմնա այդ պատմությունը մեր կյանքեն. ան կենդանի կերպով կապրի մեր մեջ:

Պատրիարք սրբազան հայրը խորհրդանիշն է այդ դարավոր անցյալին. իր ներկայությամբ մենք հաղորդակից կդառնանք այդ պատմության. կտեսնենք ու կզգանք այդ պատմության ողբերգական այլ վսեմ ընթացքը շարժումի մեջ:

Եվ մենք պետք ունինք այդ ապրումին՝ հա՛յ մնալու և հա՛յ ապրելու համար այս ափերուն վրա:

Երուսաղեմի պատրիարքությունը մեր նվիրապետական չորս Աթոռներեն մին է, որ կոչված է կենսական դեր մը կատարելու մեր ապագա կյանքին մեջ: Մեր երկար ու տառապալից անցյալին մեջ ունեցած ենք նվիրապետական Աթոռներ, վանքեր ու ընծայարաններ, սակայն ճակատագիրը լռության դատապարտած է զանոնք. այսօր ավերակ են Աղթամարի և Սսի կաթողիկոսանիստ վանքերը, Գլաձորի, Սանահնի և Տաթևի կրթարանները, բայց կանգո՛ւն է Երուսաղեմի Աթոռը, իր անցյալի փառքերով ու գանձերով:

Քրիստոսի ծննդավայրը, որ խաղաղության օրրան մը պետք էր հանդիսանար չարչարված է նույնինքն Քրիստոսի չափ. և այդ չարչարանքեն անմասն չէ մնացած Երուսաղեմի սրբոց Հակոբյանց միաբանությունը: Ամեն արշավողի դիմաց՝ ընկրկած է ան, ամեն ցավի դիմաց՝ ցնցված է ան, սակայն, գիտցած է դարձյալ ոտքի կանգնիլ ու շարունակել իր դարավոր ճամբան:

Այդ անհավատալի վերապրումը մենք կպարտինք միաբանության անխորտակելի կամքին ու նվիրումին: Այդ միաբանությունը երբեմն արցունքով, երբեմն դիվանագիտությամբ, երբեմն հնարամտությամբ և երբեմն նույնիսկ բռունցքով պահպանած է մեր դարավոր իրավունքները սուրբ Տեղյաց մեջ: Յուրաքանչյուր եկեղեցի, մատուռ, նշխար ու քար պահպանված են դարավոր հսկումով և օրինակելի նախանձախնդրությամբ:

Որքան բուռն եղած է պահպանության այդ պայքարը, նույնքան մեծ է մեր հպարտությունը այսօր Երուսաղեմով: Այսօր աշխարհի մեծագույն կրոններուն հավասար իրավունքներ ունինք սուրբ Տեղյաց մեջ. և հավանաբար Երուսաղեմը ստիյուռքի միակ վայրն է, ուր հայությունը կվայելե միջազգային ճանաչում:

Եղիշե սրբազան արժանավոր հաջորդն է Աթոռին վրա բազմած մեծանուն պատրիարքներուն, և իր անձին մեջ կխտացնե անոնց փորձառությունն ու ներշնչումը. անոր սրբազան առաքելության մեջ կվերապրին այսօր Աբրահամ պատրիարքներու հեռատեսությունը, Շղթայակիրներու զոհաբերությունն ու Գուշակյան պատրիարքներու գրական ու հոգևոր արժանիքները:

Մենք բախտավոր ենք, որ աշխարհի այդ զգայուն հանգույցին վրա ունինք Եղիշե պատրիարքին նման իմաստուն ու բանիմաց հոգևոր առաջնորդ մը, որուն գործունեությունը պիտի երաշխավորե պատրիարքական Աթոռին անսասան պահպանումը:

Բացի պատմական ու հոգևոր իր հանգամանքներեն՝ Երուսաղեմի

պատրիարքարանը կհանդիսանա արտասահմանի մեր մշակութային գանձարաններեն ամենեն հարուստը: Այնտեղ կպահպանվին հազարավոր ձեռագիրներ, մանրանկարչական գործեր, պատմարժեք զգեստներ, գանձեր ու եկեղեցական իրեղեններ: Եվ այսօր, երբ բուռն հետաքրքրություն մը կա մեր մեջ մեր ազգային ժառանգությանց նկատմամբ, այդ հարստությունները մեր կյանքը նոխացնող ու մեզ հպարտացնող անփոխարինելի արժեքներ կդառնան:

Շնորհիվ պատրիարք հոր ուղիղ կեցվածքին՝ Երուսաղեմի պատրիարքությունը այսօր դարձած է լրացուցիչ հաստատությունը Մայր Աթոռ սուրբ Էջմիածնին, դարձած է թև ու թիկունք Ամենայն Հայոց Հայրապետության:

Վերջին քսանամյակին, երբ մեր ազգային-եկեղեցական կյանքը ապրեցավ իր ամենեն դժվար ժամանակները, Երուսաղեմի սրբազան պատրիարքը, իր իմաստությամբ և հայտնատեսությամբ, իր խորհուրդներով և դրական կեցվածքով, բարձր պահեց սուրբ Էջմիածնի նախամեծար դիրքն ու հանգամանքը:

Իր բարոյական հսկա նշանակությենեն դուրս, մենք մեծ հույսեր կապած ենք նաև Երուսաղեմի պատրիարքության՝ մեր ամենեն գործնական պահանջքներուն մեջ:

...Մասնավորաբար մենք պետք ունինք պատրաստված, հմուտ ու նվիրյալ եկեղեցականներու, որոնք պիտի գան հովվելու Ամերիկայի մեր եկեղեցիները: Բարեբախտաբար Երուսաղեմը կամովին ստանձնած է այդ պարտականությունը և արդեն մեզի շնորհած է կարևոր թիվով հոգևորականներ. ներկա դրությամբ մենք կակնկալենք, որ այդ գործը ավելի հիմնավորվի, դառնա ավելի կազմակերպյալ, մանավանդ, երբ մեր պատրիարքը ունի ձեռնհաս ու փորձառու գործակիցներ:

...Սիյոնը և մասնավորաբար մեր գաղութը արդար ակնկալությունը ունին, որ կարճ ժամանակի մը մեջ Երուսաղեմի վանքը ի վիճակի ըլլա գոհացնելու մեր հոգևոր առաջնորդներու կարիքը, հասցնե հմուտ, գիտակից և ծառայասեր եկեղեցականներու նոր հույլ մը: Այդ իմաստով ալ Երուսաղեմն է իրավ լրացուցիչը ս. Էջմիածնին, առանց մրցակցության՝ լծակից դառնալով անոր:

Հանգիսնս պատրիարք սրբազան հոր և Շահե արքեպիսկոպոսին մենք մեր մեջ կընդունինք մեր ամենեն նվիրական հաստատություններեն մեկուն արժանավոր ներկայացուցիչները: Մեր հոգևոր և ազգային կյանքին մեջ նակատագրական դեր մը ունին Երուսաղեմի Աթոռն ու անոր սրբազան ներկայացուցիչները: Եվ վստահ ենք, թե մեր նակատագրին այդ բաժինը կգտնվի ապահով ձեռքերու մեջ: Այդ ձեռքերը պիտի գործեն շինարար հիգերով, որպեսզի հարստանա մեր կյանքը, որպեսզի ավելի խորունկ կերպով կապվինք մենք մեր եկեղեցիին և մեր արմատներուն և որպեսզի ավելի ուժգնորեն հայ ապրինք մենք»:

Նոյեմբերի 19-ին, կիրակի օրը, սրբազան պատրիարք հայրը ս. պատարագ է մատուցում Դետրոյտի հայոց ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցում և Բանին կենաց գեղեցիկ քարոզով մխիթարում հավատացյալներին:

Հավարտ ս. պատարագի համայնքը ճոխ թեյասեղանով պատվում է Երուսաղեմի հայոց պատրիարքին: Այս առթիվ պատրիարք սրբազանը ոսկյա մի շքանշան է հանձնում Ամերիկայի Հ. Բ. Ը. Միության նախագահ տիար Էդվարդ Մարտիկյանին, որը հանձն էր առել 1969 թվականին

Երուսաղեմի հայոց Ժառանգավորաց վարժարանի հին գեղեցիկ շենքը նոր թանգարանի վերածելու ամբողջ ծախսը:

Նոյեմբերի 21-ին, երկուշաբթի օրը, սրբազան պատրիարքը մեծ շքախմբով այցելում է Դետրոյտի հայոց Ալեքս Մանուկյան վարժարան:

Նոյեմբերի 21-ին, ավելի ուշ, սրբազան պատրիարքը վերադառնում է Նյու Յորք և կարևոր տեսակցություն ունենում ԱՄՆ-ի նախկին փոխնախագահ Նելսոն Ռոկֆելլերի հետ, Երուսաղեմի սրբատեղիների կացության մասին:

Նոյեմբերի 24-ին, հինգշաբթի օրը, սրբազան պատրիարք հայրը այցելում է Մայամիի հայ համայնք:

Նոյեմբերի 27-ին, կիրակի օրը, Մայամիի ս. Պողոս-Պետրոս եկեղեցում պատարագում է տ. Շահե սրբազանը, ուր քարոզում է սրբազան պատրիարք հայրը:

Նոյեմբերի 29-ին, երեքշաբթի օրը, սրբազան պատրիարք հայրը ժամանում է Չիկագո և ներկա լինում երեկոյան Էվենստոնի հայոց եկեղեցու սրահում նոյեմբերի 29-ին նվիրված բազմամարդ հանդիսությանը, որին հրավիրվել էին նաև այդ օրերին ԱՄՆ-ում գտնվող Հայաստանի կառավարության երկու կարևոր ներկայացուցիչներ. արտաքին գործերի մինիստր Ջոն Կիրակոսյանը և Հայաստանի Կենտկոմի երրորդ քարտուղար Կարլեն Դալլաքյանը:

Հանդիսության ժամանակ խոսք է առնում նաև Ջոն Կիրակոսյանը և «հեղինակավոր իր խոսքով ընդգծեց Նոյեմբեր 29 թվականի կարևորությունը վերածնած Հայաստանի և հայ ժողովրդին համար և երկարորեն պատկերացուց մեծ նվաճումները, զոր մեր հայրենիքը արձանագրած էր վերջին կես դարու ընթացքին, մտավորական, մշակութային, գիտական, կրթական, ճարտարարվեստական և գյուղատնտեսական կյանքի զանազան մակարդակների վրա»:

Իսկ Կարլեն Դալլաքյանը «գեղեցիկ պատկերացումներով և գիտական ճաշակով բնութագրեց Նոյեմբեր 29-ը, իբրև հայ վերածնունդի և պետական կյանքի ապահով սկիզբն ու արմատացումը, որով վերջ գտավ մեր ողբերգությունը, և ծնունդ առավ ու զարգացավ այսօրվան Հայաստանի պայծառ իրականությունը»:

Ընդունելության ժամանակ հրավիրվում է նաև տ. Եղիշե սրբազան պատրիարքը իր հայրենասիրական ջերմ խոսքն ասելու Նոյեմբեր 29-ի առիթով.

«Հայաստանեն եկած մեր երկու մտավորականները ու քաղաքական գործիչները, տիար Կիրակոսյան և տիար Դալլաքյան, մին փոխնախագահը մեր հայրենի կառավարության և մյուսը երրորդ քարտուղարը Հայաստանի Վարչության, խոսեցան Նոյեմբեր 29-ի մասին, վերբերելով այն բոլոր բարիքները զորս երկիրը ունեցավ և ունի այդ թվականեն ի վեր:

Խոսեցան մեր քաղաքական ապահովության և տնտեսական բարգավաճման մասին և կորստյան ճամբան մտած, սակայն Նոյեմբեր 29-ով մեր երկրի հարության մասին, իրենց հատուկ հավատքով և եռանդով, անգամ մը ևս տոգորելով մեր սիրտերը հայրենիքի վերելքի և ապագայի հավատքով:

Նոյեմբերի 29-ը թվական մը չէ, այլ հեղաշրջում մը, որ հանեց հայ ժողովուրդը ողբերգութենեն և դրավ զայն նոր ուղիի մը վրա:

Հինգերորդ դարուն գիրերու գյուտով, ս. Մեսրոպ Մաշտոց բաժնեց

մեր պատմությունը երկու մասերու, անցյալի և ներկայի. ներկա մը որ հասցուց մեզ մինչև այսօր: Իսկ Նոյեմբեր 29-ը հեղաշրջեց մեր պատմական կյանքը իր քաղաքական և գաղափարական նոր երեսներով, և բաժնեց զայն հինի և նորի ըմբռնումներով:

Մենք երախտապարտ ենք մեր հայրենիքի մտքի և սրտի գործիչներուն, որոնք Նոյեմբեր 29-ի կրակը վառեցին մեր հայրենի հողին վրա: Արտասահմանը հագիվ բերավ իր մասնակցությունը այդ ստեղծարար գործին, հեռուեն միայն խանդավառվելով, հեռուեն երկարելով իր պաղած ձեռքերը այդ կրակին: Չզլացավ անշուշտ այդ խարույկին վրա դնելով եթե ոչ գերաններ, գեթ տաշեղներ իր հոգիեն և մարմնեն, վառ պահելու այդ կրակը:

Հերոսները դուք եք, պատվական հայրենակիցներ, եթե նույնիսկ ըլլանք բննադատողներ ձեր մեծ գործին, մի նեղվիք, դարը ուր կապրինք, դարն է բննադատության: Սակայն պատիվն ու փառքը բննադատին չէ, այլ ստեղծողին: Բննադատը գանան մըն է ստեղծողին քով, և պատմությունը գանանի ուսերուն չէ որ կնետե իր պատմությունը, այլ հերոսներուն:

Մեզի համար ուրախություն է այս երեկո մեր մեջ ողջունելու տիար Կիրակոսյանն ու Դալլաբյանը, հերոսները մեր հայրենիքին, կերտիչները այսօրվան մեր Փառքին»:

Այնուհետև, Լոս Անջելոս այցելելուց հետո, դեկտեմբերի 6-ին, սրբազան պատրիարքը վերադառնում է Նյու Յորք, ուր Ամերիկայի արևելյան թեմի առաջնորդարանի կողմից, ի պատիվ մեծ հյուրի, տրվում է ողջերթի ճաշկերույթ, որի ընթացքում ելույթներ են ունենում առաջնորդ տ. Թորգոմ արքեպիսկոպոսը, ծանոթ մտավորական Սուրեն Մանվելյանը, որը մասնավորաբար խոսում է Եղիվարդի՝ տ. Եղիշե սրբազան պատրիարքի արձակ և չափածո գրական մեծարժեք վաստակի մասին, «Յուշարար» թերթի խմբագիր Անդրանիկ Փոլատյանը ներկայացնում է բարձրաստիճան եկեղեցականի մեջ նաև գրագետ և մտածող մարդը, Սամվել Թումայանը՝ սաղմական հուշերով պատրիարքի վարչական գործունեությունը:

Վերջում խոսք է առնում սրբազան պատրիարքը, որի «փակման խոսքը շնորհակալության, հուզումի և գնահատության խոսքեր եղավ» բոլոր արտահայտվողների հասցեին:

Դեկտեմբերի 7-ին սրբազան պատրիարքը մեկնում է Բոստոն: Ս. Երրորդություն եկեղեցում Նորին ամենապատվությունը հանդիպում է ունենում տեղի հայ հոգևորականության հետ: Ապա «Պայքար» թերթի խմբագիր Նուբար Բերբերյանը ողջունում է և բարի գալուստ մաղթում նրան:

Դեկտեմբերի 8-ին սրբազան պատրիարքը այցելում է Լովելի հայոց նոր եկեղեցի և նույն օրը վերադառնում Նյու Յորք, այցելում Նյու Ճըրզիի հայկական դպրոց և Էմբրսընի ծերանոց:

Դեկտեմբերի 12-ին սրբազան պատրիարքը այցելում է Նյու Յորքում Հ. Բ. Ը Միության կենտրոն և վարիչ-տնօրեն Միսաք Հայկենցի և Միության այլ պատասխանատու անձանց հետ ունենում է հաճելի զրույց:

Դեկտեմբերի 13-ին, երեքշաբթի օրը, սրբազան պատրիարքը հրաժեշտ է առնում ԱՄՆ-ից և Շահե արքեպիսկոպոսի ուղեկցությամբ մեկնում Եվրոպա՝ Բրյուսել, ուր հայոց պատրիարքին ողջունում և բարի գալուստ են մաղթում պարոն դե Բրաուերը, պարոն դե Լեկուեմը և պարոնայք Տիգրան Վրույրն ու Կիրտան:

ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԵՂԻՇԵ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԸ ԲՐՅՈՒՍԵԼՈՒՄ (ԲԵԼԳԻԱ)

«Բելգիայի փոքրաթիվ հայությունը խանդավառության չորս օրեր ապրեցավ Նորին ամենապատվության այցելության առիթով»:

Երուսաղեմի հայոց սրբազան պատրիարքը, Շահե արքեպիսկոպոսի ուղեկցությամբ, պաշտոնական այցելություն է տալիս Բելգիայի Նորին Վեհափառություն թագավորին: «Այս այցելության շարժառիթը հին պատմական կապի մը վերականգնումն էր Երուսաղեմի և Ֆլանտրիո թագավորական տունին միջև: Վերականգնումը պիտի կատարվի ս. Հարության տաճարի հայկական բաժնին մեջ վերահաստատելով Խաչակիր առաջին երկու թագավորներու հիշատակությունը հատուկ արձանագրությամբ: Երուսաղեմի հայոց պատրիարքը ուզեց ավետել Նորին Վեհափառության թե «Յուղաբեր Կանանց» խորանին ճակատը պիտի զետեղվի մարմարյա արձանագրություն մը, հիշատակելու համար Կոտըֆրուա դե Պուլիոն, առաջին «Պաշտպան Սուրբ Հարության Տաճարի» Պաղտուին Ֆլանտրիո, առաջին թագավոր Երուսաղեմի և հայազգի թագուհին՝ Արտա: «Այսպիսով,— ավելցուց ս. պատրիարքը,—պատիվ պիտի ունենանք անմահացնելու Խաչակիր թագավորներու քրիստոնեական հավատքը և զոհողության ոգին, ի պաշտպանություն սուրբ Տեղերու և, միևնույն ատեն, արյան կապը, որ հաստատվեցավ անոնց և կիլիկյան հայ իշխաններու միջև»: Հավատքով զեղուն, զգացված և խորունկ շեշտով մը, Նորին Վեհափառությունը շնորհակալություն և ուրախություն հայտնեց իր նախնիքներու նկատմամբ ցուցաբերած ուշադրության համար և հայտնեց իր փափաքը որ միասին աղոթք մատուցվի Երուսաղեմի խաղաղության համար, որպեսզի սուրբ Քաղաքը ըլլա և մնա միշտ աղոթքի տուն մը բոլորին համար:

Խոսակցությունը տարածվեցավ զանազան հարցերու շուրջ, բոլորն ալ կապված այն հույսին, զոր վերջին դեպքերը արթնցուցին Միջին Արևելքի կնճռոտ կացությունը պարզելու և խաղաղության նոր դարաշրջան մը սկսելու»:

Պալատ ացելությունից հետո, ի պատիվ հայոց պատրիարքի, պարոն դե Բրաուերի բնակարանում ճաշկերույթ է տրվում:

Նույն երեկոյան Բրյուսելի քաղաքագլուխը նույնպես պատվում է հայոց պատրիարքին մասնավոր ընդունելությամբ: Այս առթիվ պարոն քաղաքագլուխը «հանձն առավ եկեղեցի մը տրամադրել հայ գաղութին»:

Դեկտեմբերի 14-ին սրբազան պատրիարքը այցելում է Բելգիայի կարդինալ Սյուենենսին:

Սրբազան պատրիարքի այցելությունը Բրյուսել եզրափակվում է համայնքային մեծ ճաշկերույթով, իբր արտահայտություն հայ համայնքի շնորհակալության և երախտագիտության Երուսաղեմի հայոց սրբազան պատրիարքի հանդեպ:

ԱՄՆ և Եվրոպա կատարած իր այցելությունից սուրբ Աթոռ է վերադառնում տ. Եղիշե սրբազան պատրիարքը դեկտեմբերի 20-ին՝ ընկերակցությամբ տ. Շահե արքեպիսկոպոսի:

Ա. Հ.



ԹՈՒՐՔԻՈ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՈՒՍՏՅԱՆԻ 1977-Ի ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ*

Մեր պատրիարքական պաշտոնի 16-րդ տարվան ավարտին, կփորձենք հետաղարձ ընդհանուր ակնարկ մը նետել անցնող 1977 տարվան մեր համայնքային կյանքին և գործունեության վրա:

Ամբողջ երկրին հետ, իբրև անոր անբաժանելի մեկ մասնիկը, մեր համայնքին համար ալ դժվարություններով լեցուն եղավ 1977 տարին: Մինչ մեր երկրին դժվարությունները կծագեին տնտեսական ու անիշխանական պատճառներե, մերինները հառաջ կուգային պետական հիմնարկներու անունով գործող տեղական պաշտոնատուներու բմահաճ տնօրենություններեն:

...Հակառակ այս իրողության սակայն փառք կուտանք Աստուծո, որ անպակաս բրավ ամենքիս վրայեն համբերության և հարատևության շնորհները, որոնցմով կրցանք տոկալ դժվարությանց և չընկրկիլ անոնց ճնշումին ներքև, միշտ հուսալով և աղոթելով լավագույն օրերու համար, և հավատա-

---

* Ամեն տարի հանգամանորեն և կարևորությամբ Թուրքիայի հայոց ամենապատիվ տ. Շնորք սրբազան պատրիարք Գալուստյանը մամուլին է հաճնել պատրիարքարանի և Ստամբուլի հայ համայնքի կյանքին ու գործունեությանը նվիրված հետաքրքիր ու բովանդակալից տարեկան իր տեղեկագիրը:

1977 թվականին էլ տ. Շնորհք սրբազան պատրիարքը հրատարակել է տարեկան իր տեղեկագիրը, որից քաղվածաբար «Էջմիածին» ամսագրի ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում որոշ հատվածներ:

լով թե ուշ կամ կանուխ արդարության զգացումը, խղճմտանքի ձայնը ու մանավանդ օրենքներու հանդեպ հարգանքի գիտակցությունը ի վերջո պիտի հաղթանակեն:

ԿՐՈՆԱԿԱՆՔ. Մեր համայնքային կյանքի ամենեն տանելի մասը եղավ մեր զուտ կրոնական գործերը, որոնց անարգել կիրարկումին մեջ գտանք մեր զորությունը և մխիթարությունը: Մեր եկեղեցական պաշտամունքները շարունակվեցան առանց ոնէ դժվարության: Հայ հավատացյալը ի գործ դրավ իր զուտ հոգևոր ու կրոնական պարտավորությունները անկաշկանդ ազատությամբ: Մեր հոգևորականները և դպրաց դասերը եկեղեցիեն ներս կատարեցին իրենց կրոնական պարտավորությունները ի փառս Աստուծո և ի մխիթարություն մեր ժողովուրդին:

Այս մարզին մեջ ալ կա սակայն կետ մը ուր կաշկանդված կմնա հայ հավատացյալը 10—12 տարիներե ի վեր, և այդ իսկ պատճառով զրկանքի կմատնվին նաև մեր համայնքային հաստատությունները:

...Ներկայիս դժբախտաբար կարելիություն չի տրվիր հայ հավատացյալին իր փափաքած կրոնական կամ բարեսիրական հաստատության նվիրելու իր անշարժ կալվածքը, համաձայն իր սիրտեն բխած ուխտի մը: Այսպիսի նվիրատվություններ հայ հավատացյալները շարունակ ըրած են բոլոր ժամանակներու մեջ: Այս նվիրատվությանց արդյունքն են այն բոլոր անշարժ կալվածները, որոնցմե քիչ շատ ունին մեր գրեթե բոլոր համայնքային հաստատությունները: Սակայն վերջին 10—12 տարիներուն արգելքի տակ է հայ հավատացյալը ի գործ դնելու իր այս կրոնական իրավունքը և պարտավորությունը:

...Այսպիսի խտրականություն մը բացահայտորեն կաշկանդում մըն է լայիք թուրք հանրապետության քաղաքացիի մը կրոնական ու բարոյական համոզումներուն: Հակասական է նախ կրոնական ազատության միջազգային սկզբունքին, զոր ընդունած ու ստորագրած է մեր պետությունը Միացյալ ազգաց կազմակերպության մյուս անդամներուն հետ: Հակառակ է նաև մեր երկրին Մայր Կանոնին—Անա Յասային—որ հավասարություն կխոստանա երկրի բոլոր քաղաքացիներուն, առանց կրոնքի և այլ տարբերությանց: Այս ազատությունը վայելած է հայ հավատացյալը ամբողջ օսմանյան շրջանին, Աթաթուրքի լուսամիտ վարչության ներքև, և ամբողջ հանրապետական շրջանին մինչև 1965-ական թվականները, երբ սկսած ենք զրկվիլ քաղաքացիական ու կրոնական այս իրավունքեն:

ԿՐՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ. Մեր Կրոնական ժողովը, հակառակ իր օրինականության նվազագույն թիվին իջած ըլլալուն, շարունակեց իր գոյությունը և գործունեությունը 5 անդամներով, մեր նախագահության ներքև: Նկատի ունենալով երկրին մեջ տիրող կացությունը, և կառավարական շրջանակներու մտայնությունը, մենք փորձն անգամ չընրինք խնդրանք ներկայացնելու պատկան իշխանությանց՝ մեր Կրոնական ժողովը նորոգելու նոր ընտրությամբ: Ունեցանք 12 ժողովներ և մի քանի խորհրդակցական անպաշտոն նիստեր, զբաղվելով մեր պատրիարքական թեմի ընթացիկ կրոնական գործերով:

Կրոնական ժողովը ընթացք տալով Ենիգաբրի թաղային խորհուրդի և ս. Փրկիչ հիվանդանոցի հոգաբարձության կողմե կատարված դիմումներուն, հետքննության, որոշեցինք ձեռնադրությունը երկու քահանայական թեկնածուներու՝ տ. Վարդան քհն. Մոնքուլյանը Ենիգաբրի վրա, իսկ տ. Ներսես

քին. Ոսկանյանը հիվանդանոցի վրա: Սարկավագ ձեռնադրեցինք Վահան Իշխեմենյանը Ֆերիգյուղի ս. Վարդանանց եկեղեցիին վրա և Երվանդ Կյուլսաթարը՝ Ենիգաբրի ս. Թադեոս և ս. Բարթողոմեոս եկեղեցիին վրա: Տասը դպիրներու ուրար կրելու արտոնություն շնորհվեցավ զանազան եկեղեցիներու վրա:

Վավերացվեցան մեր դպրաց դասերու 8 տնօրեն խորհուրդներու նոր ընտրությունները: Վավերացվեցավ նաև Ենիգաբրի ս. Թադեոս և ս. Բարթողոմեոս եկեղեցիին նորակազմ դպրաց դասը:

Այս տարի տնօրինեցինք, որ ցաղդ այցելու բահանաներով միայն հոգեվոր մատակարարություն վայելող եկեղեցիները դրվին մոտակա հովիվներու մշտական ու պաշտոնական հոգածության ներքև: Ըստ այսմ Պեյբոզի ս. Նիկողայոս եկեղեցիին հովիվ նշանակեցինք Գուզկունճուրի երեց տ. Եղիա քհն. Շուշանյանը: Գանտիլլիի ս. Երկոտասան Առաքելոց եկեղեցիին՝ Պեյուքտերեի հովիվ տ. Իսահակ քհն. Հեքիմյանը: Էյուպի ս. Եղիա և ս. Աստվածածին եկեղեցիներուն համար՝ Պալաթի հովիվ տ. Եղբայր քհն. Սարգիսյանը: Գարթալի ս. Նշան եկեղեցիին՝ տ. Նարեկ քհն. Գատեհճյանը: Իսկ Գընալը կղզիի ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիին հովիվ նշանակեցինք տ. Աստատուր վրդ. Ճիլոզյանը:

ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆ ԴԱՍ. Փառք Աստուծո այս տարի ալ հոգևորականի կորուստ չունեցանք. ընդհակառակը, ինչպես վրեև հիշեցինք, երկու հավելում ունեցանք մեր բահանայական դասուն վրա: Մեր միակ բարձրաստիճան հոգևորականը՝ տ. Շահան եպս. Սվաճյան, շարունակեց ատենապետությունը Կրոնական ժողովի և բարոզչություն մեր եկեղեցիներու: Տ. Աստատուր վրդ., տ. Արամ ու տ. Մանվել աբեղաները ևս շարունակեցին իրենց բարոզչական և այլ հոգևոր մատակարարությանց պարտականությունները: Ասոնց վրա ավելցավ մեր կողմե Երուսաղեմ ղրկված և Սաղիմական միաբան եղած տ. Եզնիկ աբեղա Պալյանը:

Իսթամպուլի մեր 33 եկեղեցիներուն համար ունինք 30 բահանա հայրեր, որոնցմե մեկը միայն ֆիզիքական անկարողության պատճառով բոլորովին հանգստյան բաշված է: Իսկ մյուսները ամենքն ալ իրենց պաշտոնին ու պարտականության գլուխը կենան զանազան եկեղեցիներու վրա: Գնահատելով տ. Բարթող քհն. Խրբաճյանի անձնվեր գործունեությունը ավագության աստիճան շնորհեցինք: Ունինք 25 ձեռնադրյալ սարկավագներ, շուրջ 50—55 գործոն ուրարակիրներ և 20 դպրաց դասեր:

Մեր բահանայից դասին համար սկսանք տասը դասախոսություններն բաղկացյալ շարք մը հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներուն ընթացքին, ԺԴ դարու հայտնի մատենագիր Հովհաննես Երզնկացի վրդ.-ի «Խրատ հասարակաց» հոգեշահ և հետաքրքրաշարժ գործի մասին:

Գավառներու մեջ կպաշտոնավարեն չորս բահանա հայրեր. ծերունազարդ տ. Ղևոնդ քհն. Գարթունյան Հաթա նահանգի Վագրֆ գյուղի ս. Աստվածածին եկեղեցին: Տ. Կիրակոս քհն. Տիարպագրրի ս. Կիրակոս և Տերիբի ս. Գևորգ եկեղեցիներուն: Տ. Սերովբե քհն. Կյուլյան Կեսարիո ս. Գրիգոր եկեղեցին: Իսկ տ. Վարագ քհն. Պեյլերյան տարվույս սկիզբը հովիվ նշանակվեցավ Իսկենտերունի ս. Քառասուն Մանկանց և Գրրբգիանի ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիներու: Այս հովիվներու հոգևոր հոգածության հանձնված են նաև վերոհիշյալ բաղաքներու մոտը կամ հետուն ցրիվ ապրող հայ հավատացյալները:

Մեր պատրիարքարանն ալ, մեր մյուս նվիրապետական Աթոռներուն կարգին, կաշխատի իր համեստ չափով օգտակար հանդիսանալ նաև արտասահմանի մեր եկեղեցիներուն, հոգևորականներ հայթայթելով զանազան հայ համայնքներու: Ըստ այսմ մեզի կատարված դիմումներուն ընթացք տալով արտասահման ղրկված են զանազան ժամանակներու մեջ, հետևյալ հոգևորականները.

Տ. Գարեգին վրդ. Պեքճյան, Մարսիլիա, հոգևոր հովիվ ս. Սահակ և ս. Մեսրոպ եկեղեցիին:

Տ. Պսակ վրդ. Հաթափյան, Լոնդոն, ժամարար Անգլիո երեք եկեղեցիներուն (Անգլիո մեջ պաշտոնավարող երկու եկեղեցականներն ալ եպիսկոպոսներ են):

Տ. Խաչատուր վրդ. Սարաճյան, Մելպըրն, իբրև հոգևոր հովիվ:

Տ. Մամիկոն քհն. Ոսկանյան, Նյու Յորք, հոգևոր հովիվ Լոնկ Այլընտի շրջանին մեջ:

Տ. Հակոբ քհն. Ռուստեմյան, Աթենք, հոգևոր հովիվ ս. Աստվածածին եկեղեցվո:

Տ. Հովսեփ քհն. Հալլաճյան, Կրետե, հոգևոր հովիվ հայոց ս. Կարապետ եկեղեցվո Իրագլիոնի:

Տ. Գպլուստ քհն. Թևյան, ի Նիս:

Բացի ասոնցմե մեր կողմե ձեռնադրված ավագ սարկավագներ ալ ունինք արտասահմանի մեջ ծառայող: Միհրան սրկ. Տապաղյան ի Գերմանիա, Խաչիկ սրկ. Ցըլմազ ի Մարսիլիա, Ստեփան սրկ. Կյոզյումյան և Կարպիս սրկ. Շահպազյան ի Լոս Անճելըս:

ԳԱՎԱՌ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ. Անցնող հուլիս 21—30 մենք առիթ ունեցանք հովվապետական այցելություն տալու գավառի մեր եկեղեցիներուն և համայնքներուն: Այս այցելության սկզբնապատճառը եղավ Իսկենտերունի և Գըրրգխանի մեր զույգ եկեղեցիներու բարեզարդությունները, եղբայրական օժանդակությամբ Իսթանպուլահայ բարեսերներու: Այս երկու եկեղեցիները վերստին օծեցինք և վերաբացինք պաշտամունքի: Այցելեցինք նաև նույն նահանգին մեջ գտնվող Վագրֆ հայկական գյուղը, և ապա հաջորդաբար այցելեցինք Տիարպագըր, Մալաթիա և Կեսարիա ուր տեղեր աշխատեցանք զորացնել և մխիթարել մեր ժողովուրդը աղոթքով, պաշտամունքով ու Աստուծո Բանին քարոզությամբ: Մեր վերադարձեն երեք շաբաթներ ետք հանկարծակի փակվեցավ Գըրրգխանի եկեղեցին ապահովության պաշտոնյաներու կողմե: Մեր և տեղվույն համայնքին կողմե կատարված դիմումներուն վրա, երկար ձգձգումներե հետո, ստուգվեցավ որ տեղական պաշտոնյաներու անհատական նախաձեռնության արդյունք էր կատարված սխալը, որ դարմանվեցավ դեկտեմբեր ամսվան ընթացքին, եկեղեցին վերաբացվելով և հանձնվելով տեղվույն քահանային ի մխիթարություն քաղաքի փոքրաթիվ հայ համայնքին: Մարտին նահանգի մեջ գտնվող Վարդո հայկական փոքր գյուղի բնակչությունը տարվույս վերջերը հարկադրվեցավ ամբողջությամբ Իսթանպուլ փոխադրվիլ. տեղավորվեցան զանազան թաղեր:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ. 1977 մայիս 15-ին տեղի ունեցան մեր համայնքային հինգ հաստատություններու խնամակալությանց ընտրությունները, որոնց «Պելկե»-ները հազիվ տրվեցան ավելի քան 7 ամիսներ հետո: Ոչ ոք հասկցավ թե ինչ է այսքան ուշացման դրդապատճառը: Ասոնցմե մեծագույնը ս. Փրկիչ հիվանդանոցը, տարվան ընթացքին ընդունած է 3212 հիվանդներ. մտային բաժնին մեջ ընդունված են 310

մտրի հիվանդներ. իսկ ծերանոցի բաժնին մեջ պատսպարված են 355 նոր տարեցներ և անկարներ: Կատարված են 1102 վիրահատական գործողություններ: Բոլիքլինիք դիմողներուն թիվը տարվան մեջ եղած է 39,291: Հիվանդանոցի աշխատող անձնակազմը, բժիշկներով միասին, եղած է 229 հոգի: Հակառակ այն իրողության որ վերոհիշյալ հիվանդներեն մեկ որոշ մասը ձրի դարմանված է, հիվանդանոցի այս տարվան եկամուտքն ալ հավասարակշռված է. ԵԼՔԸ եղած է 29,017,560 թ. լիրա. իսկ ՄՈՒՏՔԸ՝ 29,336,666 թ. լ. մտից որոշ առավելությամբ:

Փլուզումի ենթարկված Գալֆայան որբանոցի և Խասգյուղի ս. Ստեփանոս եկեղեցիի կացության մեջ ոչ մեկ փոփոխություն մտավ նաև այս տարի: Որբանոցը շարունակեց իր առժամյա գոյությունը Սկյուտարի իր սեփական կալվածին վրա առժամյա փոքր դասարաններու մեջ հազիվ 50 աշակերտուհիներով, ընդդեմ նախկին 130—150 ուսանողուհիներու: Իսկ Խասգյուղի եկեղեցիին կապված Ներսեսյան գիշերօթիկ վարժարանն ալ, որ Սկյուտար փոխադրված էր առաջին օրեն, կշարունակե իր դասընթացները վարձու ընդարձակ շենքի մը մեջ 90 աշակերտներով: Մեր մնացյալ 26 վարժարանները շարունակեցին իրենց գործունեությունը շուրջ 6000 աշակերտներով:

Նույն և ավելի թափով շարունակվեցան այն սահմանափակումները և խստությունները, որոնք վերջին քանի մը տարիներե ի վեր դրված են մեր վարժարաններուն վրա, որոնց ավելի հանգամանորեն անդրադարձած էինք մեր անցյալ տարվան տեղեկագրին մեջ: Այս տարի ալ մեր վարժարաններուն բոլոր բաժիններուն—մանկապարտեզ, նախակրթարան, միջնակարգ և լիսե—նոր արձանագրվող աշակերտներ՝ իրենց ծնողաց հետ ներկայացան քաղաքին Կրթական Տնօրենության կեդրոնը, ստանալու համար գրավոր արտոնագիր իրենց համայնքային վարժարանները արձանագրվելու համար: Այս տարի ալ մերժվեցավ հայ վարժարան արձանագրվելու արտոնությունը այն հայ աշակերտներուն, որոնց հայրերուն ինքնության թուղթերուն մեջ ատեն մը կամավ կամ ակամա «Իսլամ» արձանագրված էր իրենց կրոնքը, և որոնք Իսթանպուլի ավելի ազատ պայմաններուն տակ՝ և հիմնվելով երկրին Մայր Կանոնին—Անա Յասայի—ամեն քաղաքացիի շնորհած կրոնական ազատության իրավանց վրա, դատարանական որոշումով վերադարձած էին իրենց նախկին կրոնքին, կամ սրբագրել տված էին «Նուֆուսի» պաշտոնյայի կողմե ձեռքի վարժությամբ գոծված սխալը: Հայ վարժարան արձանագրվելու արտոնություն զլացվեցավ նաև այն հայ աշակերտներուն, որոնք ի հարկե ստիպյալ, իրենց նախակրթությունը պետական վարժարանով սկսած էին, կամ պատահաբար տարի մը կամ երկու պետական կամ օտար վարժարան հաճախած էին: Այս մասին հատուկ տեսակցություն ունեցած էինք տարվույն ընթացքին քաղաքիս մեծահարգ կուսակալին հետ, որ մեր դիտողագիրը հղած էր տեղվույն Կրթական Տնօրենության, որմե ստացված պատասխանը սակայն, հիմնված սխալ տվյալներու վրա, կացության մեջ փոփոխություն մը առաջ չբերավ:

Ընդունեցինք պատրիարքարանիս մեջ շատ մը բարձրաստիճան հոգևորականներու այցելությունը, որոնցմե հիշատակության արժանի են Քենթբրիրիի արքեպիսկոպոսը Դոնալդ Կոգանը, մայիս 1-ին: Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Պիմեն Ա. հոկտ. 16-ին: Միպրալթարի անգլիկան եպիսկոպոսը Ճոն Սաթերրթուեյթը, նոյ. 10-ին: Հռոմի եկեղեցիի արտաքին հարաբերությանց գրասենյակի նախագահ կարտինալ Ճոն Վիլպրանտը, նոյ. 30-ին:

Անցնող տարվան օգոստոսին, հոկտեմբերին և 1978 թվականի հունվարին պայթուցիկներ նետվեցին պատրիարքարանիս և եկեղեցական ու կրթական այլ հաստատություններու վրա:

Փառք Աստուծո, կյանքի կորուստ կամ անձի վնաս չեղավ:

...Անցնող տարվան ընթացքին մեր բոլոր եկեղեցիներուն մեջ ունեցանք 787 մկրտություն, 474 պսակ և 879 մահ:

Մեր գնահատանքը և օրհնությունը կուտանք բոլոր անոնց, որոնք գրտնվեցան համայնքային գործերու պատնեշին վրա, և ըրին իրենց կարելին, հաճախ դժվար պայմաններու ներքև, գործոն պահելու համար մեր եկեղեցիները և համայնքային կրթական ու բարեսիրական հաստատությունները: Մեր գնահատանքը և օրհնությունը նաև մեր մամուլին, որ հաճախ իրենց և այլոց կամքեն անկախ նեղ պայմաններու տակ արիաբար շարունակեցին իրենց սպասը հայ գիրին ու դպրության: Վարձքը կատար բոլորին:

ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊՍ. ԳԱԼՈՒՍՏՅԱՆ
ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ ԹՈՒՐՔԻՈ



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Փետրվարի 4-ին, շաբաթ.— Այսօր, երեկոյան ժամերգության ընթացքին, «Վարագուրեսցեն զՍեղանն»: Սկսվում է Մեծ պահոց շրջանը:

*
* *

Փետրվարի 5-ին, կիրակի.—Բուն Բարեկենդան. Մեծ պահք.

Այսօր Մայր տաճարում, փակ խորանի առաջ, ս. պատարագ է մատուցում տ. Հակոբ բին. Հակոբյանը:

*
* *

Փետրվարի 8-ին, չորեքշաբթի.—Այսօր, սկիզբն արա կատարել զկարգ Ապաշխարութեան և զԱրևագալի ժամերգութեան, և սկսեա զՏէր Ամենակալն յառաւօտուն և ի ճաշուն՝ զմեծ քարոզսն և զաղօթսն և զՈղորմեայից երգսն, և զկնի Խոնարհեցո և Ապրեցո:

Իսկ յերեկոյսն զԽաղաղականն՝ զՆայեաց սիրովն և զի բէն հայցեմքն և ապա Հոգւոց և արձակեսցեն:

Առավոտյան Մայր տաճարում կատարվում է Արևագալի հանդիսավոր ժամերգություն, որին մասնակցում է Մայր Աթոռի ողջ սիաբանությունը:

*
* *

Փետրվարի 12-ին, կիրակի.—Բ կիրակի բառասնորդական պահոց (Արտաքսման).

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Նշան բին. Բեղերյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզում է տ. Անանիա վրդ. Արաբաջյանը՝ «Զի գայ ժամանակ՝ և արդէն իսկ է, յորժամ մեռեալք լսիցեն ձայնի Որդւոյն Աստուծոյ և որք լսիցենն՝ կեցցեն» (Հովհ. Ե 25—26) բնաբանով:

*
* *

Փետրվարի 13-ին, երկուշաբթի.—Այսօր Մայր տաճարում, երեկոյան ժամերգության ավարտին, կատարվում է Տյառնընդառաջի նախատոնակը և անդատան: Հոգևոր ճեմարանի ուսանողները ժամերգությունից հետո վառում են ավանդական

խարույկը Վեհարանի բակում և զվարթ երեկո անցկացնում:

*
* *

Փետրվարի 14-ին, երեքշաբթի.—Տեառն-ընդառաջ: Տօն քառասնօրեայ գալստեան Քրիստոսի ի տաճարն.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Մասիս վրդ. Գալստյանը:

*
* *

Փետրվարի 19-ին, կիրակի.—Գ կիրակի քառասնորդական պահոց (Անառակին).

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Նշան քհն. Բեյլերյանը:

*
* *

Փետրվարի 22—25-ը հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Հովհաննես ավագ քհն. Մարուքյանի գլխավորությամբ ուսանողները երեքօրյա ձմեռային պտույտի մեկնեցին Ծաղկաձոր:

*
* *

Փետրվարի 25-ին, շաբաթ.—Այսօր, ժամը 13-ին, Վեհարանի ընդունելության սրահում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի ընդլայնված նիստը, որին ներկա են լինում Գերագույն հոգևոր խորհրդի անդամները՝ տ. Կոմիտաս և տ. Հուսիկ սրբազանները, դիվանապետ տ. Արսեն եպս. Բերբերյանը, պրոֆ. Առաքել Առաքելյանը, դոկտ. Սարգիս Մելիքսեթյանը, դոց. Հովհաննես Թոփուզյանը և դոց. Կարպիս Կարագյանը:

Գերագույն հոգևոր խորհրդի սույն նիստին հրավիրվել էին նաև Մայր Աթոռին առընթեր ճարտարապետական և իրավագիտական հանձնաժողովների անդամները, այդ թվում՝ ակադեմիկոսներ Բաբկեն Առաքելյանը և Գրիգոր Խանջյանը, դոկտ. Ալեքսանդր Սահինյանը, դոկտ., պրոֆ. Վարազդատ Հարությունյանը, դոկտ., պրոֆ. Կոստանդին Հովհաննիսյանը, դոկտ. Վազգեն Հակոբյանը, ճարտարապետ Բաղդիկ Արզումանյանը, Մայր Աթոռի ճարտարապետներ՝ Ծիլվան Խաչատրյանը, Միքայել Հովհաննիսյանը, Հակոբ Բաբախանյանը:

Սույն նիստին ներկա էին նաև Մայր Աթոռի ղեկավար աշխատողներ, այդ թվում՝ հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Հովհաննես ավագ քհն. Մարուքյանը, «Էջմիածին» ամսագրի խմբագիր Արթուն Հատիտյանը, խմբագրության քարտուղար Անանիա վրդ. Արաբաջյանը, Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի ընդհանուր քարտուղար Պարգև Շահբազյանը, նույն բաժնի աշխատակից Նուբար Միքայելյանը, ֆինանսական բաժնի վարիչ Գառնիկ Քեհյայանը, տնտեսական բաժնի վարիչ Անդրանիկ Ութուջյանը, Մայր տաճարին առընթեր եկեղեցական թանգարանի վարիչ Մոմիկ վրդ. Սարգսյանը, վերստուգիչ հանձնաժողովի անդամներ Եփրեմ Ալեքսանյանը և Բարսեղ Թաշչյանը, Մայր Աթոռի փոխադրական միջոցների բաժնի վարիչ Լևոն Խոջամիրյանը և տ. Մասիս վարդապետ Գալստյանը:

Վեհափառ Հայրապետի ցանկությամբ և հրավերով էր գումարվել սույն՝ Գերագույն հոգևոր խորհրդի նիստը: Նորին Սրբությունը ողջունեց ներկայությունը բոլոր հրավիրյալների և ապա հանգամանորեն խոսեց հունվարի 28-ից մինչև փետրվարի 18-ը Բաղդադ ու Փարիզ կատարած Իր հովվապետական այցելության մասին՝ ամփոփ տեղեկություններ հաղորդելով մանավանդ Բաղդադի և Փարիզի հայ համայնքների եկեղեցական-մշակութային կյանքի վերաբերյալ:

Վեհափառ Հայրապետի սույն ուղևորության տպավորությունները լսվեցին մեծ հետաքրքրությամբ:

Ժամը 15-ին Վեհարանի սեղանատանը բոլոր հրավիրյալները սեղանակից եղան Նորին Սրբությանը:

Ընդունելության ժամանակ շարունակվեցին նաև մտքերի փոխանակություններ Վեհափառ Հայրապետի վերջին ուղևորության տպավորությունների մասին: Տ. Կոմիտաս արքեպիսկոպոսը, հանուն բոլոր ներկաների, բաժակ բարձրացրեց Վեհափառ Հայրապետի արևշատության կենաց: Ապա պրոֆ. Առաքել Առաքելյանը և դոկտ. Վարազդատ Հարությունյանը նույնպես ջերմորեն ողջունեցին Հայոց Հայրապետի վերադարձը Մայր Աթոռ՝ սրտաբուխ բարեմաղթություններ անելով Նրա ապագա գործունեության հաջողության համար՝ ստիպուքհայրենիք հարաբերությունների է՛լ ավելի սերտացման կապակցությամբ:

Գերագույն հոգևոր խորհրդի սույն նիստն ավարտվում է խանդավառ մթնոլորտում՝ Վեհափառ Հայրապետի աղոթքով:



ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱՉԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՆՎԱՆԱԿՈՉՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ս/թ. փետրվարի 2-ին Մայր Աթոռում հանդիսավորությամբ նշվեցին սրբոց Վարդանանց և Ամենայն Հայոց Հայրապետի անվանակոչության տոները:

Նախորդ օրը, փետրվարի 1-ին, երեկոյան, Մայր տաճարում կատարվեց սրբոց Վարդանանց նախատոնակը:

Փետրվարի 2-ին, հինգշաբթի օրը, Մայր տաճարում կատարվում է առավոտյան ժամերգություն և ապա ս. պատարագի արարողություն: Օրվա պատարագիչն է հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Հովհաննես ավագ քհն. Մարուքյանը:

«Հայր մեր»-ից առաջ Իջման ս. սեղանի առջև քարոզում է տեսուչ հայրը՝ «Մահն ոչ իմացեալ մահն է, մահն իմացեալ՝ անմահութիւն» բնաբանով՝ ոգեկոչելով պայծառ հիշատակը 451 թ. Ավարայրի դաշտում զոհված հայոց անմահ քաջերի:

Վերջում Իջման ս. սեղանի առաջ, Վեհափառ Հայրապետի անվանակոչության տոնի առիթով, կատարվում է Հայրապետական մաղթանք:

Հավարտ ս. պատարագի հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում, Մայր Աթոռի դիվանապետ տ. Արսեն եպիսկոպոսի նախագահությամբ, տեղի է ունենում սրբոց Վարդանանց տոնին նվիրված հանդիսությունը:

Հայաստանի պետական հիմնի նվագից հետո բացման խոսքով հանդես է գալիս հոգևոր ճեմարանի ավագ վերակացու տ. Արտակ քհն. Սիմոնյանը.

«1600 տարիներ առաջ, հանուն հայոց ոգու ինքնության, Մաշտոցյան հրաշքի հավերժության, քրիստոսապարգև Լույսի կենսառաք ծաղկումի, տեղի ունեցավ Վարդանանց պատերազմը, որը քրիստոնեության պատմության մեջ առաջին փորձն էր, որով մի ժողովուրդ իր եկեղեցու, իր հայրենիքի ազատության և անկախության սիրույն ողջակիզվում էր կամավոր զոհաբերությամբ:

- Ավարայրը ռազմական հասկացողությամբ պարտություն էր, սակայն պատմական անընկրկելի հրաշքով ճակատամարտը դարձավ բարոյական մի հաղթանակ հայ ժողովրդի համար և եղավ խորհրդանիշ՝ քաջության, հերոսության և հայրենասիրության:

Ռազմական այս պարտությունը հայ ժողովրդի համար կամքով հանդիսացավ մարտիրոսների արյունից ծնված բարոյական անխորտակելի հաղթանակը: Այս պատերազմն իր էությամբ Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» գրքի բարոյական հաղթանակը կարելի է համարել ընդդեմ զրադաշտական գաղափարախոսության:

Քսաներորդ դարում, երբ պատմական շատ իրադարձություններ գունաթափվել են, կորցրել իրենց այժմեականությունը, Ավարայրի սխրանքը մնում է չխամրող, հավերժ կենդանի իրականություն-հրաշք: Եվ ամեն անգամ, երբ ոգեկոչում ենք քաջն Վարդանի և 1036 նահատակների հիշատակը, ակնածանքով ու զարմանքով մտա-

ծում ենք, թե որքա՜ն ճանապարհ պիտի կտրած լիներ մի ժողովուրդ, ինչպիսի՜ կրոնական, ազգային, մշակութային բարձր մակարդակ պիտի ունենար, որ տակավին 5-րդ դարում ոտքի բարձրանար և տասնյակ հազար կամավորներ բանակեր և իր ազգային սրբություններն ու ինքնուրույնությունը պաշտպանելու համար գնար «գիտակցված մահվան»:

Ավարայրին հաջորդեց Սարդարապատը, Վարդանին հաջորդեց Անդրանիկը, և այսպես դար ու դարեր «վասն Յիսուսի, վասն հայրենեաց» մաքառեցինք, որ Վարդանի թափած արյունից վարդ-կակաչներ բացվեն, որ Վարդանի ոգին ամեն հայի կրծքի տակ բողբոջի, որ Վարդանի հավատը ամեն հայի սրտին անձրևի որպես անձկալի շնորհ:

Այսօր, երբ մեր ժողովրդի հայրենական նավը հասել է խաղաղ նավահանգիստ, բազում այսպիսի նահատակությունների և հերոսությունների շնորհիվ, մենք մեծ սիրով ու ոգևորությամբ նշում ենք նաև Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի անվանակոչության օրը:

Ավարայրը հայ ոգու հավերժելու լավագույն արտահայտությունն է: Այդ ոգին դարեր շարունակ պահեցին մեր եռամեծար հայրապետները: Այդ ոգով է աղեցուն նաև ս. Գրիգոր Լուսավորչի Աթոռի մերօրյա գահակալը՝ մեր սիրելի Վեհափառ Հայրապետը: Թող իր գահի վրա միշտ հաստատ մնա Նա, և Նրա արի ու բարի ձեռքերում ծաղկի հայրապետական գավազանը»:

Տեր հոր բացման խոսքից հետո հոգևոր ճեմարանի սաները կատարում են «Նորահրաշ» և «Արիացեալք» շարականները: Ապա օրվա գլխավոր բանախոս, հոգևոր ճեմարանի դասախոս տ. Անանիա վրդ. Ադրաբաջյանը ներկաներին կարդում է օրվա խորհրդին նվիրված իր հետևյալ բովանդակալից խոսքը.

«Որմիզդը խելք տա ինձ՝ հասկանամ,— մրթմրթաց Նյուսալավուրտը,— Որմիզդը խելք տա ինձ...

— Միևնույն է, նա պաշարված է:

— Դու ջարդը նայիր, ջարդը...

...Սակայն անտեղի էր Նյուսալավուրտի տագնապն ու մեղադրանքը: Սահմանափակ զորավարի նեղ ուղեղին հասու չէր այն վեհ գաղափարը, որ դրել էր Վարդանն այս մարտի մեջ: Հասու չէր, որ Վարդանը ջնջել էր մարտավարության բոլոր՝ մինչ այժմյա չափերն ու ավանդները, որ նա կատարում էր անհասկանալի, անցել էր մարդկային բոլոր հասկացողությունները, գործում էր խելահեղ մի սխրագործություն: Նա փրկում էր Հայրենիքը՝ սխրագործության դնելով մի ողջ սերունդ» (Դ. Դեմիրճյան, «Վարդանանք»):

Մի՜ ողջ սերունդ... մեր նախահայրերին:

Փակում եմ «Վարդանանք»-ը՝ մեր ժամանակների լավագույն գրքերից մեկը, ու ստոլի գնում եմ դեպի անցյալը, հայ ժողովրդի փառավոր անցյալը...

«Ցայսմ հաւատոց զմեզ ոչ ոք կարէ խախտել, ո՛չ հրեշտակք և ո՛չ մարդիկ, ո՛չ սուր, ո՛չ հուր, ո՛չ ջուր... ի քէն տանջանք, և ի մէնջ յանձնառութիւնք, սուր քո և պարանոցք մեր...» (Եղիշե):

Դաժան է եղել ճակատագիրը մեր ժողովրդի նկատմամբ, անողոք է եղել: Գրտնվելով մեծ ճանապարհների ստորաբաժանումների վրա Հայոց աշխարհն իր վրա է կրել օտարների ատելի հարվածները՝ բնազդաբար ետ մղելով իրեն նվաճելու, ստրկացնելու ամեն մի փորձ, բազո՜ւմ-բազո՜ւմ անգամներ մղելով օրհասական կռիվներ: Կռվել է դարեր՝ պահպանելով իր ազգային անկախությունն ու գոյությունը, ու այսօր խաղաղության և շինարար աշխատանքի մեջ մեր ազնիվ ժողովուրդը մոռանալ է ուզում ամեն ինչ. չի ուզում հիշել ո՛չ օտարների բռնության փորձերը, ո՛չ նրանց անգթությունները և ո՛չ էլ անազնիվ ու նենգ դիվանագիտությունները:

Սակայն այս բոլորի կողքին նա չի կարող մոռանալ իր այն բյուր զավակներին, որոնք զոհելով աշխարհում ամեն ինչ՝ ապահովեցին նրա այսօրվա ազատությունն ու անկախությունը:

Հայոց սուրբ երկիրը երախտագիտությամբ է հիշում նրանց անունները, պահում է երկյուղածությամբ:

451 թվականի հայո՜ց պատերազմ: Պատերազմ, որ մեր նախնիք իրավամբ կոչել են մեծ, մեծ՝ այսինքն բոլոր ժամանակներում (հայ ժողովրդի համար) եղող պատերազմներից ամենավճռականը, բախտորոշն ու փառավորը:

387 թվականի Հայաստանի բաժանումից հետո, բաժանում, որ տեղի ունեցավ Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև, հայ ժողովուրդը կորցրեց իր ազգային անկախությունը:

Պարսկական Հայաստանի մասում պարսիկների կողմից սկսվում է մի դաժան հալածված քաղաքականություն: Զգտելով ձուլել հայ ժողովրդին իր մեջ, նվաճել Հայաստան աշխարհն ու կցել այն Պարսկաստանին, պարսից տիրակալները գտնում էին, որ իրենց այս քաղաքական ծրագրի դեմ գոյություն ունի մի պատնեշ, մի անխորտակելի պատվար, որն իր անխորտակելիությամբ վճռական արգելք է հանդի-

սանում իրենց այս մտահղացումների նաեւ սարսափին:

Այդ պատվարը քրիստոնեությունն էր՝ հայ ժողովրդի մոտ չորս հարյուր տարվա հավատքը:

Ի՞նչ անել: Մնում էր միայն մի բան: Զրկել հայ ժողովուրդը ուժից, ֆիզիկապես դիմադրելու հնարավորությունից ու նոր միայն սպանել նրա հավատքը:

Եվ սա Հազկերտը՝ պարսից թագավորը, Տիգրան է կանչում հայ, վրացի և աղվանից նախարարներին ու հրամայում նրանց իրենց ողջ զորքով մեկնել պատերազմելու քուշանաց ցեղի դեմ, որոնք մեծ անհանգստություններ էին պատճառում պարսիկներին:

Հազկերտի նպատակը պարզ էր. սպառել քրիստոնյա այս երեք ժողովուրդներին այդ երկարատև կռիվներում ու ապա անցնել իր ծրագրած քաղաքականության գործադրմանը: Նախարարները, որոնց թվում էր և հայոց սպարապետ քաջ Վարդան Մամիկոնյանը, փառքով վերադարձան այդ պատերազմից: Եվ այն ժամանակ պարսից արքան կտրականապես պահանջում է. քրիստոնյա նախարարները պետք է ուրանան քրիստոնեությունը և ընդունեն զրադաշտական կրոնը: Հակառակ դեպքում Հազկերտը սպառնում է ոչնչացնել նրանց և նրանց իշխանական տները:

Այս անելանելի դրության մեջ սա քրիստոնյա իշխանները գտնում են միակ ճիշտ և խելացի որոշումը, այն է՝ առերես ուրանալ քրիստոնեությունը, ընդունել պարսից կրոնը և ապա վերադառնալ հայրենիք ու պարզել անկախության համար մղվող պայքարի դրոշը:

449 թ. հայ հավատափոխ նախարարները պարսից մոգերի հետ մուտք են գործում Հայաստան: Հենց առաջին իսկ բայլերից նրանք հանդիպում են հայ ժողովրդի ատելությանն ու կատաղի դիմադրությանը: Անգամ ավանում, օրինակ, հայերը, մեր պատմությանը քաջ ծանոթ սուրբ Ղևոնդ Երեցի գլխավորությամբ, հարձակվում են պարսիկների վրա, որոնք փորձում էին հայկական եկեղեցին դարձնել ատրուշան, ու կոտորում են նրանց:

Սկսվում է համաժողովրդական մի իսկական պայքար՝ «Վասն Յիսուսի և վասն հայրենեաց» նշանաբանով:

Հայ նախարարները, դեռ նետելով իրենց հավատուրացության դիմակները, անցնում են բաց պայքարի, որի նախապատրաստությունները, սկիզբն ու ելքը այստեղ գտնվող շատ-շատերիս հայտնի են: Գիտենք, որ թվով երեք անգամ քիչ հայոց զորքը ապարսից զորավար Նյուսալավորտի բանակի համար 451 թվականի մայիսի 26-ին կազմակերպեց մի այնպիսի սպանդ, որի մասին մտածել անգամ չէր կարող այդ փորձված զորավարը:

Դեռ ավելին, պատերազմը իր հետ բերեց նաև իր դաժան հետևանքները Պարսկաստանի համար:

Հայերի կողմից Ավարայրի հաղթանակից հետո սկսվեց Հազկերտի համար ոչ ձեռնտու մի բայբայիչ պարտիզանական պատերազմ: Եվ եթե կարելի է այսպես արտահայտվել՝ չափազանց ճշմարիտ էր Հազկերտի սարգարեությունը՝ ասելով իր խորհրդատուներին. «Դուք իմ տան մեջ հարուցիք այնպիսի պատերազմ, որի վերջը ավելի չարագույն է լինելու...»: Հիրավի չարագույն՝ պարսիկների համար: Վարդանանց պատերազմն իր ավարտը գտավ 484 թվականին միայն և՝ հայերի լիակատար հաղթանակով:

Հայ ժողովուրդն այս անհավասար պայքարում ոչ միայն կարողացավ պահպանել իր ազգային ազատությունն ու քրիստոնեական հավատքը, այլ նաև ստիպեց գոռոզ պարսիկներին հրաժարվելու իրենց ոազմատենչ նպատակներից: Սա հաղթանակ է բոլոր իմաստներով՝ ֆիզիկական, բաղաքական, բարոյական:

Սիրելի ներկաներ,

Հայ առաքելական ս. եկեղեցին յուրաքանչյուր տարի տոնում է Ավարայրի դաշտում ընկած 1036 մարտիկների հիշատակը: Տոնում է սրբոց հիշատակը: Բոլոր մարդիկ չէ, որ կարող են սրբացվել որևէ եկեղեցու կողմից: Սրբացվում են մաքուր կյանքի, բարի վարքի ու կատարած հրաշքների համար: Սակայն բոլոր քրիստոնյա ժողովուրդների մոտ կա, գոյություն ունի մի սրբացում, որի դեպքում չկա նժար, չկա չափ ու քննություն: Դա սեփական արյունը, մայր հողի համար զոհված հավատարիմ զավակի հիշատակն է: Սուրբ Վարդանը, Ղևոնդ Երեցն ու նրանց 1036 քաջերը մեր Մայր Հայաստանի ամենահավատարիմ զավակներն էին:

Այսօր ևս, փետրվարյան այս պարզ առավոտ, Հայաստանյաց եկեղեցու շատ զավակներ հավաքվել են Մայր Աթոռ ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի հարկի տակ մեկ անգամ ևս երախտագիտությամբ տոնելու պայծառ հիշատակն այն մարտիրոսների, ովքեր աշխարհում չխնայեցին ոչինչ, ո՛չ փառք, ո՛չ անձնական երջանկություն, ո՛չ կյանք՝ հանուն մեր ազգի պահպանման և մեր սուրբ եկեղեցու հավերժության:

Ի՞նչ սովորեցրեց, ի՞նչ տվեց Վարդա-

նանց պատերազմը հայ հետագա սերունդներին:

Նախ և առաջ սա լավագույն մի ապացույց է հերքելու համար այն թյուր կարծիքը, որ իբր թե քրիստոնեությունը պասիվ, դեպի խեղճություն մղող մի կրոն է, որ հայ ժողովուրդը քրիստոնեություն ընդունելով զենքի տեղ ձեռքը մանգաղ առավ ու դրանով թուլացրեց նվաճողների դեմ տարվող պայքարի ոգին: Դրա լավագույն ապացույցը Ավարայրն է, ուր հայը մեկընդմիշտ ապացուցեց, թե խաղաղ աշխատելու, ստեղծագործելու և աղոթելու կողքին գիտե նաև կռվել, դիմադրել ու անհանդուրժողական ոգի ցույց տալ բոլոր նրանց, ովքեր փորձել են կամ կփորձեն մեր փոքրիկ, սակայն ազատասեր հայրենիքը անարգել, ստրկացնել կամ նվաճել:

Երկրորդ և, ըստ իս, ամենակարևորը՝ Վարդանանց պատերազմը, հետագա մեր ողջ սերունդների համար եղավ ճշմարիտ հայրենասիրության, նվիրումի մի չքնաղ ու անմոռանալի օրինակ: Նրանով ոգևորված ու նրա քաջալերիչ օրինակը սրտերում մեր նախնիք՝ մեր պապերն ու հայրերը, շուրջ 15 դար գոյության անհավասար պայքար մղեցին շատ ու շատ ազգերի և ժողովուրդների դեմ: Նրանով ոգևորված շատ անգամներ Հայոց աշխարհի զավակները վանեցին թշնամու ամեն մի սարսափ իրենց հոգիներում ու անգամ խիզախեցին:

Ու այսօր ևս շարունակվում է Ավարայրի քաջալերող սխրանքը գոյություն ունենալ մեր սրտերում... ամեն մի տեղ՝ աշխատանքում, գիտության, արվեստի, տնտեսության, ամեն-ամեն մի մարզում: Այդ սխրանքը ապրում է նաև սփյուռքում, ուր ամեն մի գիտակից հայ մղում է իր Ավարայրը հանուն իր հավատքի և հայության, մղում համարյա ամեն օր, այրվող ցանկությամբ, որ չկորցնի իր ազգային դիմագիծը, կուլ չգնա օտարին, որ հայ մնա և ապրի:

Այսօր, այս սուրբ օրը, տոնն է նաև Հայաստանյայց առաքելական ս. եկեղեցու ազգընտիր Հայրապետի: Անձնավորություն, որն Իր գահակալության շուրջ 23 տարիների ընթացքում շատ մեծ գործ կատարեց մեր եկեղեցու վերակազմավորման, ամրացման և ծաղկման համար: Եվ եթե այսօր հայ առաքելական եկեղեցին նաև միջազգային ասպարեզներում էլ ունի մեծ հեղինակություն, հարգանք, ապա դրանում վճռական ու շատ կարևոր դեր է խաղացել Հայոց Հայրապետի համակրելի Անձը:

Այսօր Հայոց Հայրապետը մեր մեջ չէ: Ինչպես գիտեք, մոտ մեկ շաբաթ առաջ Նա մեկնեց հովվապետական այցելության Իրաքի Հանրապետություն՝ մխիթարելու երկար տարիներ Իրեն անձկությամբ ըսպասող հայ համայնքին: Ի սրտե ցանկանանք Նորին Սրբությանը նորանոր հաջողություններ Իր այդ սուրբ գործում և շնորհավորելով Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսի անվանակոչության այս տոնը՝ որդիաբար ցանկանանք Նրան բարի վերադարձ Մայր Աթոռ ս. Էջմիածին:

«Յիշեցէք զգործս հարցն ձերոց, որ ինչ քաջութիւնս արարին ի դարս իւրաքանչիւր... եւ ժառանգեցէք զանուն յաւիտենից» (Ա Մակաբ. Բ 51)»:

Բանախոսության ավարտից հետո հոգևոր ճեմարանի սաների ուժերով գործադրվում է գեղարվեստական մի ծրագիր:

Երկրորդ դասարանի աշակերտ Արա Տաքեյանը արտասանում է Ռ. Պատկանյանի «Վարդանի երգը» բանաստեղծությունը: Երկրորդ լսարանի ուսանող Հրաչ Օղլուգյանը՝ «Տիկնայք փափկասունք» հատվածը Եղիշեից: Նույն լսարանի սան Վահրամ Տերտերյանը դաշնամուրի նվագակցությամբ կատարում է Եկմալյանի «Լռեց, ամպերը եկան» երգը: Նաիրի Զարյանի «Ձայն հայրենական» պոեմից մի հատված է արտասանում Վաչագան Ավետիքյանը՝ նույն լսարանից: Հոգևոր ճեմարանի մի խումբ սաներ՝ Հովսեփ Պալըգյանը, Արա Շլուկյանը, Վահրամ Տերտերյանը, Հայկ Չիլինգարյանը, Բորիս Մալյանն ու Վարդգես Ավագյանը, խմբովին արտասանում են Վահան Թեքեյանի «Խորհուրդ Վարդանանց»-ը:

Ապա հոգևոր ճեմարանի երգչախումբը, Մայր տաճարի երգչախմբի խմբավար, վաստակավոր արտիստ Խորեն Մեյխանեջյանի ղեկավարությամբ, կատարում է «Ով Հայոց աշխարհ», «Ահա ծագեց կարմիր արև», «Ազնիվ ընկեր», «Իմ հայրենյաց հոգի Վարդան», «Ծաղկիր, ազատ իմ հայրենիք» խմբերգերը:

Հանդիսության ավարտին ներկաներին իր խոսքն է ասում տ. Արսեն եպիսկոպոս Բերբերյանը:

Հանդիսությունն ավարտվում է սրբազան հոր «Պահպանիչ»-ով և խմբովին կատարված «Հայր մեր»-ով:

ԱՆԱՆԻԱ ՎՐԴ. ԱՐԱԲԱՋՅԱՆ

ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՈՒՍՏՅԱՆ

ԱՍՏՎԱԾԱՇՆՉԱԿԱՆ ՍՈՒՐԲԵՐ*

Մասն առաջին

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՍՈՒՐԲԵՐ

Գլուխ առաջին

ՆԱԽԱՀԱՐՔ

Աստվածաշնչական սուրբերը բնականորեն կբաժնվին երկու մեծ խումբերու. Հին Կտակարանի և Նոր Կտակարանի սուրբեր: Երկուքին ալ գրեթե իրարու հավասար թիվով 40—45 անուն սուրբեր անցած են մեր տոնացույցին: Կսկսինք Հին Կտակարանի սուրբերու ներկայացումով:

Հին Կտակարանի սուրբերը մենք բաժնած ենք հետևյալ խումբերու. 1. Նախահարք. 2. Նահապետք. 3. Անապատի առաջնորդներ. 4. Դատավորք. 5. Գործիչ մարգարեներ. 6. Գիրք ունեցող մարգարեներ. 7. Զանազան ուրիշ Հին Ուխտի սուրբեր, որոնք վերոհիշյալ ստորաբաժանումներեն ոչ մեկին ներքև չեն իյնար:

Կսկսինք առաջին խումբով, որ ներկայացված է Ծննդոց գրքի առաջին 10 գլուխներուն մեջ և կբաղկանա յոթ անուններե:

1. Ադամ

Վստահ ենք որ շատեր պարզապես պիտի գայթակղին իմանալով, որ Ադամն ալ սուրբերու կարգ անցած է: Երևակայել որ առաջին մեղավորը, մեղքը աշխարհ մտցնողը, ու զայն տարածողը ամբողջ իր սերունդին վրա՝ ժառանգական ախտի մը նման, սուրբերու կարգ անցած է: Հեգնական չէ՞: Անոր գործած մեղքի հետևանքեն զերծ չէ մնացած ոչ մեկ ադամորդի, որուն բնական ու բացահայտ հակումը դեպի չարություն կոչված է քրիստոնեական աստվածաբանության մեջ «Ադամային մեղք»:

Ստույգ է որ արդարները միայն իրավունք ունին սուրբերու կարգ անցնելու, բայց, ինչպես կհաստատվի մեր եկեղեցիի հատուկ «դոնբացեք»-ի սրբազան տրամաբանության մեջ, «ոչ միայն արդարք, այլ նաև մեղավորք խոստովանությամբ և ապաշխարությամբ» կմտնեն սուրբերու կարգը: Ադամ ապաշխարե՞ց: Աստվածաշունչեն ոչ մեկ հստակ պատասխան կստանանք այս հարցումին. ընդհակառակը մեղանչելեն հետո տակավին անգիտակ է Ադամ: Աստուծո հանդիմանական հարցումին իր տված պատասխանեն հայտնի է, որ բոլոր անապաշխար մարդերուն պես, մեղքը վրան չառներ. ուրիշին կվերագրե. «Սա կինը որ ինձի տվիր», ան եղավ պատճառը իմ մեղանչելուս: Շիտակ էր ըսածը, սակայն զղջացող մեղավորի մը պատասխանը չէր...:

Այս հարցին վրա լույսի նշույլ մը կձգե Աստվածաշունչի «պարականոն» կամ ավելի շիտակ՝ «երկրորդականոն» գիրքերեն մեկին մեջ եղած անցողակի ակնարկություն մը: Փակագծի մեջ ըսենք, որ պատ-

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1977 թվականի № № Է—ԺԱ-ից և 1978 թվականի № Ա-ից:

մական եկեղեցիներու՝ այսինքն հունաց, հռովմայեցվոց, հայոց և բոլոր մյուս արևելյան հին եկեղեցիներու գործածած ս. Գրքին մեջ, որ կկոչվի «Յոթանասնից» թարգմանություն, կան գիրքեր, որոնք չեն գտնվիր հրեից գործածած ս. Գրքին մեջ, զոր թարգմանաբար կկիրարկեն բոլոր բողոքականները: Հավելվածական այս գիրքերը կկոչվին «երկրորդականոն», այսինքն Աստվածաշունչի գիրքերու «կանոն»-ին—ցանկին—մեջ ետքեն անցած գիրքեր: Ասոնց մեջ կա «Իմաստութիւն Սողոմոնի»-ըսված գիրք մը, որմե հաճախակի ընթերցումներ կկատարվին մեր եկեղեցիին մեջ: Այդ գրքին մեջ կա հետևյալ ակնարկությունը Ադամի մասին: «Իմաստությունը պահպանեց մարդկային ցեղի նախահայրը, ՓՐԿԵՑ զայն իր անկումեն հետո, և տվավ անոր զորություն տիրապետելու ամեն բանի վրա»: Թերևս այս հավաստումեն հետևցված է, որ Ադամ «Փրկված» է, և հետևաբար՝ արժանացած է սուրբերու կարգին անցնելու:

Ասկե զատ քրիստոնեական հին շրջանակներու մեջ շատ տարածուն ավանդություն մը կա, ըստ որուն Ադամի գերեզմանը կգտնվեր Գողգոթայի վրա. և առաքելական բացատրությամբ «Երկրորդ Ադամը»—Քրիստոս—խաչվեցավ ճիշտ անոր գերեզմանին վրա և իր փրկարար արյունը թափվեցավ ու թափանցեց մինչև Ադամին ոսկորները և անոր կյանք տվավ: Այս ավանդության արձագանքն է շատ մը խաչելության նկարներուն ներքև նշմարված գանկը և խաչաձև երկու ոսկորները, որոնք Ադամը կներկայացնեն: Դարձյալ ըստ՝ քրիստոնեական այդ ավանդության՝ երբ Հիսուս «դժոխք իջավ» (Ա. Պետր. Գ 19) իր մահեն հետո, և «զդրունս դժոխոց խորտակեաց», առաջին անգամ ազատեց Ադամը, որուն հետևեցան Հին Ուխտի մյուս սուրբերը: Քրիստոսի փրկագործությունը լրիվ պիտի չըլլար եթե արդարև փրկված չըլլար Ադամը, մեղքի առաջին պատճառը և պատասխանատուն:

Ամեն ոպարագային, Ադամը սուրբերուն նարգը դասելով եկեղեցին կուզե հաստատել այն հավիտենական ու անհերքելի ճշմարտությունը, թե Քրիստոսի քավչարար արյունը փրկության պատճառ կըլլա բոլոր ադամորդիներուն, սկսյալ իրենց նախահայրեն, և թե՝ Ադամի փրկությամբ վերջ գտած է ադամային անեծքը բոլոր անոնց համար, որոնք կապաշխարեն և կհավատան Ավետարանին և Քրիստոսի քավչարար տնօրենության:

Սերտ նմանություններ և հակադրություններ կան Ադամի և Քրիստոսի միջև. ու այդ իսկ պատճառով «Երկրորդ Ադամ» կկոչե զԱյն Պողոս առաքյալ: Ադամ եղավ Հայրը մարդկային ցեղի, ըստ մարմնո. իսկ Քրիստոս եղավ Նոր մարդկության Նախահայրը ըստ հոգվո: «Առաջին մարդը, Ադամ, ստեղծվեցավ իբրև շնչավոր—ապրող—ոգի, իսկ երկրորդ Ադամը՝ իբրև կենդանարար Հոգի: Առաջին մարդը ստեղծվեցավ երկրի հողեն. իսկ երկրորդ Մարդը՝ տիրաբար իջավ երկինքեն» (Ա Կոր. ԺԵ 45—47): «Ինչպես Ադամով ամենքս կմեռնինք, նույնպես Քրիստոսով ամենքս պիտի վերակենդանանանք» (Անդ. հմր. 22):

Ադամ մեղանչելով եղավ պատճառը մարդկային ցեղի դժբախտության. իսկ Քրիստոս, իր մահով, ի գլուխ հանեց ամբողջ մարդկության փրկությունը և երջանկությունը: Առաջ բերենք սակայն Պողոս առաքյալի ուսուցումը այս մասին իր իսկ բառերով.

«Ինչպես որ մեկ մարդով մեղքը աշխարհ մտավ, և մեղքին պատճառով՝ մահը. ու այսպես մահը տարածվեցավ ամբողջ մարդկության վրա, որովհետև ամենքը մեղանչեցին...: Ադամ գալիք մարդուն—Քրիստոսին—նախապատկերն էր, տարբեր իմաստով մը: Սակայն Աստուծո շնորհքը—Քրիստոսով աշխարհ բերված—բոլորովին դուրս է բաղդատութենե Ադամի մեղքին հետ: Որովհետև եթե Ադամին մեղքին պատճառով շատեր մեռած, շատ ավելի ուրիշներ առատացան Աստուծո շնորհներով և պարգևներով, շնորհիվ մեկ մարդու, Հիսուս Քրիստոսի: Դարձյալ, Աստուծո պարգևները անբաղդատելի են իրենց արդյունքներով քան մեկ մարդուն մեղքը: Ադամին մեկ մեղքին պատճառով դատապարտության վճիռ մը տրվեցավ. իսկ Աստուծո շնորհքը՝ արդարացման վճիռը տվավ այնքան մեղանչումներեն հետո: Եթե մեկ մարդուն մեղքով մահը թագավորեց, ուրիշ մեկու մը ձեռքով, այսինքն Հիսուս Քրիստոսով, պիտի ապրին և թագավորեն անոնք որոնք առատապես պիտի ստանան Աստուծո շնորհները և արդարացման պարգևները: Ուստի, ինչպես որ մեկին հանցանքովը բոլոր մարդերը դատապարտության ներքև ինկան, այնպես ալ ուրիշի մը—Քրիստոսի—արդարությամբը բոլոր մարդիկ կյանքի արդարացում ստացան: Եվ ինչպես որ մեկ մարդուն անհնազանդությամբ շատ շատեր մեղքի դատապարտության ներքև ինկան, նույնպես ալ մեկի մը հնազանդությամբը, բազմաթիվ մարդեր պիտի արդարանան» (Հռոմ. Ե 12—21):

(Շարունակելի)

(«Աստվածաշնչական սուրբեր», Իսթանպուլ, 1977, էջ 33—36)



ԲՈՒԼՂԱՐԱՀԱՅ ԹԵՄԻ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՏԵՆԱՊԵՏ ՕՆԻԿ ԱԼԱՆՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 80-ԱՄՅԱԿԸ

Մ/թ. հունվարի 14-ին Սոֆիայում նշվեց բուլղարահայ թեմական խորհրդի ատենապետ Օնիկ Ալանյանի ծննդյան 80-ամյակը:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, նկատի առնելով Օնիկ Ալանյանի շուրջ մեկ ու կես տասնամյակ այդ թեմում կատարած վաստակը, Իր հայրական հատուկ ուշադրությանն արժանացրեց հոբելյարին և ուղարկեց օրհնության հետևյալ կոնդակը՝ նրա ծննդյան 80-ամյակի առթիվ.

Ուրախ ենք, շատ ուրախ, որ նախախնամութիւնը Ձեզ կոչած է ապրելու երկար տարիներ ու օժտած՝ գործելու անսպառ ու մշտանորոգ եռանդով, Բուլկար հայրենիքի սուրբ հողի վրայ, հայ համայնքի ծոցի մէջ:

Ձեր անձնուէր ծառայութիւնները մատուցած բուլկար և հայ ժողովուրդներին ու նաև Մայր Աթոռ ս. Էջմիածնին, Մենք ջերմապէս գնահատում ենք և սիրով ընդառաջելով թեմական խորհրդի և թեմական առաջնորդ տ. Տիրայր եպս. Մարտիկեանի միջնորդութեան, այսու հողում ենք Մեր սրտագին բարեմաղթութիւնները և օրհնութիւնները՝ Ձեր սիրելիութեան և ազնուաշուք Ձեր տիկնոջ՝ տիկին Ժենեվ Ալանեանին, որ միշտ եղել է բարի հրեշտակը Ձեր կեանքի, թէ՛ Ձեր ուրախ օրերին և թէ՛ երբեմն Ձեր դժուարութեանց պահերին:

Կմնանք աղոթող որ Տէրը Ձեզ և Ձեր տիկնոջը պարգևի ևս երկար, արևոտ ու խաղաղ տարիներ ընտանեկան երջանկութեամբ ու Ձեր հասարակական գործունէութեան հորանոր շինարար իրագործումներով՝ ի պաշտպանութիւն բուլկարահայ համայնքների և եկեղեցիների:

«Ողջ լերուք զօրացեալ Սուրբ Հոգւով և յաւէտ օրհնեալ ի Տեառնէ և ի Մէնջ». ամէն:

ՎԱԶԳԷՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 29 նոյեմբերի
1977 փրկչական ամի,
եւ ի տաճարիս հայոց ՌՈՒՍ,
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:
ՀՄԲ. 898

Կազմակերպված հանդիսությանը ներկա էին Ռումինիայի և Բուլղարիայի թեմերի հայոց առաջնորդ տ. Տիրայր եպս. Մարտիկյանը, Բուլղարիայի արտաքին գործոց նախարարությանն առընթեր կրոնական գործերի կոմիտեի նախագահ Ստոյնո Պարբմովը և խորհրդական Պորիս Միլևը, բուլղար պատրիարքարանի ս. Սինոդի քարտուղար տ. Տոմետիևն եպիսկոպոսը, բուլղարահայ «Երևան» մշակութային կազմակերպության կենտրոնական վարչության նախագահ Գ. Գաբրիելովը, թեմական խորհրդի անդամներ, եկեղեցական վարչության ներկայացուցիչներ:

Տ. Տիրայր եպիսկոպոսի բացման խոսքից անմիջապես հետո Սոֆիայի հայոց եկեղեցու հոգևոր հովիվ տ. Մեսրոպ քհն. Բենլյանը ընթերցում է Ամենայն Հայոց Հայրապետի սրբատառ կոնդակը:

Ներկաները երախտագիտությամբ և հոտնկայս ունկնդրեցին Վեհափառ Հոր օրհնության խոսքը:

Կրոնական գործերի նախագահ Ստոյնո Պարբմովը կարդաց Բուլղարական Ժողո-

վրդական Հանրապետության Պետական խորհրդի նախագահության հրամանագիրը՝ Օնիկ Ասլանյանին «Աշխատանքային կարմար դրոշ»-ի շքանշանով պարգևատրելու մասին՝ ի վարձատրություն նրա երկարամյա պետական և հասարակական գործունեության: Օնիկ Ասլանյանը որպես տնտեսագետ նպաստել է Բուլղարիայի տնտեսական զարգացման վերելքին:

Հանդեսին ելույթներ ունեցան նաև Գաբրիել Գաբրիելովը, Խասքովոյի եկեղեցական վարչության կողմից՝ ատենապետ Կարո Ծիրինյանը: Հանդիսությունը վարում էր թեմական խորհրդի փոխատենապետ և Սոֆիայի եկեղեցական վարչության ատենապետ Կարո Տեր-Մեսրոպյանը, որը և ընթերցեց թեմական խորհրդի և եկեղեցական վարչության ողջույնի խոսքը:

Հոբելյանական հանդեսն ավարտվեց Օնիկ Ասլանյանի շնորհակալական ջերմ ելույթով:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը, իր ջերմ բարեմաղթությունները միացնելով բոլորին, ցանկանում է հոբելյար Օնիկ Ասլանյանին նորանոր հաջողություններ՝ նրա թեմական և հասարակական ծառայության ճանապարհին, ինչպես նաև քաջառողջություն և երկար տարիներ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հաղորդագրություն 3

ԱՐԹՈՒՆ ՀԱՏԻՑՅԱՆ

Հայրապետական այցելություն Բաղդադի ճայոց տիրախնամ թեմին . . . 6
Վեհափառ Հայրապետը Փարիզում 36

Ա. Հ.—Երուսաղեմի ճայոց ամենապատիվ տ. Եղիշե սրբազան պատրիարքի այցը ԱՄՆ և Եվրոպա 42

Թուրքիո ճայոց պատրիարք ամենապատիվ տ. Ծնորհք արքեպիսկոպոս Գալուստյանի 1977-ի տարեկան տեղեկագիրը 48

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ—Եկեղեցական բեմ. լուրեր 54

ԱՆԱՆԻԱ ՎԻԳ. ԱՐԱՄԱՅԱՆ—Սրբոց Վարդանանց տոնակատարությունը և Նորին Սրբությունն Տ. Տ Վազգեն Ա կաթողիկոսի անվանակոչության հանդիսությունը Մայր Աթոռում 56

ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՈՒՍՏՅԱՆ—Ատենաբաշնչական սուրբեր . . 60

Բուլղարաբնակ թեմի թեմական խորհրդի ատենապետ Օնիկ Ալանյանի ծննդյան 80-ամյակը 62

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine, Arménie, URSS

Հանձնված է արտադրության 24.2.1978 թ.: Ստորագրված է տպագրության 5.3.1978 թ.:
Տպագրական 4 մամուլ+8 ներդիր, թուղթ 60×84¹/₈, պատվեր 136:

Մայր Աթոռ ս. Էջմիածնի տպարան, 1978 թ.